Ձունի իւրեան՝ առանձին գունդ, միշտ պարէտին՝ մօտիկ է,
Ո՛չ թէ մարն է՝ իւր խնդրածը, այլ սիրելոյն՝ թէեք փրկէ։

Քանի անգամ՝ գամրաց վերայ՝ արտ Պարէտ՝ արշաւան,
Եւ Արմոզի կալուածները՝ կըցեց ընդ Փոքր՝ Հայաստան.*
Կամ Կովկասեան՝ լեռնոտեաց մէջ՝ յուղկահարներ՝ նուաճեց,
Ամեն նուագ՝ Շամրիկ տիկին՝ նորան նպաստ՝ սատարեց։

Մէկ օր Մարաց՝ աշխարքումը՝ պաշարվեցան՝ Հայերը,
Ճանփաները՝ բռնել էին՝ անմատչելի՝ սարերը,
Շամրիկ ընկաւ՝ զօրաց առաջ՝ ասաց. Հայեր՝ կամ եկէք,
Կամ ինձ գերի՝ Մարաց ձեռքը՝ այս նուագին՝ կը տեսնէք։

Կատաղեցան՝ քաջ Հայերը, շուրջ պատեցին՝ Շամրիկին,
Ընկան Մարաց՝ բանակի մէջ՝ անհնարին՝ ջարդ տուին,
Փախան Մարքը՝ մեղուաց նըման, ու թաք կացան՝ սարերում,
Յաղթութիւնը՝ անակնկալ՝ մնաց Հայոց՝ ձեռումը։

Աներկիւղ էր Շամրիկ տիկին, միշտ հետն ունէր Հայկայ նետ,
Այդ նետին էր՝ վստահացած՝ և իւր փեսայն՝ նահապետ,
Աներկեայ են՝ որ յաղթութիւն՝ պիտի իրանց՝ միշտ մընայ,
Թէև դիմաց՝ քաջարի Հայն՝ մէկի տեղ բիւր՝ ունենայ։

Այս առաջին՝ արշաւան է՝ որ Շամրիկը՝ հետը չէ.
Երկյոզութեան՝ պատճառներով՝ տիկնոջ դիրքն՝ շատ ծանր է,
Էսօր էզուց են սպասում, որ բամբիշը կ'ազատվի,
Ուրեմն չէ՝ կարող քաշել՝ էլ նեղութիւն՝ ճանփայի։

* Բանասիրութիւն Վ. Պշտոյի։

Ձ.քնաղապեղ էր տիկինը՝ նոր Հարսնութեան՝ օրերը,
Քանի գընաց՝ աւելացան՝ նորա անձին՝ գեղերը,
Օր ըստ օրէ՝ մանկանում է, լինում քնքոյշ և գողտրիկ,
Օր ըստ օրէ՝ քան զառաջին՝ օր Հարսնութեան՝ գեղեցիկ։

Ամեն ծընունդ՝ նորա համար՝ գեղեցկութիւն, էր բերում,
Ցետ ծննդեան՝ համարեա միշտ՝ նոր նոր գեղով՝ էր փայլում,
Արեգական՝ ամպն էր ծածկում, նըրան ինչ ուչ՝ էր ծածկած,
Ոչ լիննուտսան՝ փոր ծընունդը, ուչ վաթսուն ամն՝ արդ անցած։

Ամուսնական՝ սէրն նոյնպէս՝ գամ քան զգամ՝ աւելցաւ,
Ջամբիկ տիկնոջ՝ հոգւոյ համար՝ պարէտ անշուշտ՝ մաս գարձաւ,
Թէ մէկ վայրկեան՝ չըտեսնէին՝ մէկն զմէկու՝ երեսը,
Մըտաթափի՝ նըման թմրած՝ կը լինէին՝ երկուսը։

Այսպէս հըզօր՝ սէր տեսուած չէր, և ուչերոյց մէջ լսած,
Ջամբիկ ասում՝ էր թէ մօրէն, և հանիկէն՝ էր սուրած,
Տատրակի պէս՝ մէկ զմէկու՝ յետևէն են՝ պըտրտում,
Մէկը թռաւ, միւսն իսկոյն՝ ընկերին է՝ պըտրտում։

Ինչպէս պիտի՝ բաժանվէին, ու կենային՝ տարանջատ,
Երբ յիսուն ամ՝ տիւ և պիշեր՝ միշտ եղել են՝ անանջատ,
Նոցա հոգիը՝ այլք են քաշում, այդ են խօսում՝ ամեն տեղ,
Երկուսին էլ՝ օր բաժանման՝ երևում է՝ օր ահեղ։

Թէ պիտեննաք՝ անցեալ կեանքը, կասէք թէ է՝ սոսկալի,
Որ Պարէտը՝ պիտի բարեաւ՝ մընաս ասէ՝ Ջամբիկի,
Կենաց մէջ այս՝ խօսք լսած չէ. սա՝ տիկնոջը՝ կսպանէ,
Երբ Պարէտը՝ գըունէն դուրս գայ՝ հոգին կելլէ գշխոյէ։

Նոցա անցեալ՝ կեանքը պատմեմ, դուք լսեցէք՝ ասածիս,
Յիսուն ամեայ նոցա վարքն են՝ ամփոփված մէջ՝ պատմածիս,
Բաղմակուզի չեն պարապայք, կը հասկացվին՝ հեշտութեամբ,
Ձեզ չեմ բընաւ՝ ծանրաբեռնիր՝ նոցա գործոց գոլութեամբ։

Բայլ նոցա՝ սովորական՝ խրախճանաց՝ խնջոյից,
Որ ամիսը՝ քանի անգամ՝ կանէին մէջ դարպասից,
Ուր որ տիկնայք՝ մեծամեծաց, աւագանուց՝ բազմութեամբ,
Ուրախութիւն՝ կը խմբէին՝ համազգային՝ խնդութեամբ։

Բայ ի յորսոյ՝ որ կը լինէր՝ անտառների՝ խարձերը,
Ուր որ արձակ՝ կզբօսնուին՝ աւագախումբ՝ քաջերը,
Զքնաղ տիկնայք՝ և օրիորդք՝ հետ զեղջերուաց՝ վազելով,
Կամ վարազուց՝ շամբից մէջը՝ պատանեաց հետ վանելով։

Բայլ քանի՝ կըրօնական՝ համազգային՝ տօներէն,
Որ կատարում՝ էր Հայաստան, դեռ Ըրամայ՝ օրերէն,
Դաշտերի մէջ՝ և թաւ ծառոց՝ ստուերներում՝ վըրանով,
Քաղաքովին՝ զուարճանում՝ քաղցրահնչին՝ երգերով։

Բայ ի քանի երևելի ուխտատեղիք երթալէն,
Ուր ամօրեայ՝ ժամանակօք՝ պարապանդվում՝ ուխտերէն,
Եռանդագին՝ զահամունքով՝ նուէրներով, զոհերով,
Կրօնական՝ պարտքը տալիս՝ հազարաւոր՝ գառներով։

Բայ ի խորհուրդ՝ ժողովվելոյն՝ ամեն ամիս՝ հրոս անգամ,
Ուստի Ճամբիկ՝ էր յետ մընում՝ ուշ բընաւ իսկ՝ մէկ անգամ,
Ուր ամենայն՝ աւագանին՝ պիտի յայտնէր՝ իւր գործը,
Նահապետէն՝ պատուէր առնոյր՝ ինչ լաւ հաշուել՝ էր փորձը։

Բայ ամեն օր՝ մեծ դահլիճում՝ դատաստանի՝ նստելէն,
Ամենեցուն՝ գանգատները՝ ուշի ուշով լըսելէն,
Ուր որ Ճամբիկ՝ միշտ պարէտի՝ կշռին բազմած՝ էր լինում,
Եւ իրաւանց՝ արդարութեամբ՝ վերահասու՝ էր անում։

Բայ ամեն օր չքաւորաց տուրք և նրպաստ բաշխելէն,
Կարօտելոց՝ աւատ զուարթ՝ պատրաստութեամբ՝ օգնելէն,
Որ դռներից՝ մէկը չերթայ՝ տրտում սրտով դառնացած,
Զասէ մտքում՝ թէ անտէրը՝ ամեն տեղ է՝ մուռացած։

Բայց ամեն օր՝ ձիուն նստած՝ քաղաքի մէջ՝ ման պաչէն,
Ինչ տեղ շինուածք՝ հասարակաց՝ էին շինվում՝ տեսնէին,
Տաճար է թէ՝ աշտարակ է, բերդ է, պուրն է, ջրմուղ է
Աղբիւր է՝ թէ ապարան է, ջրհոր, պարտէզ, ջրվիղ է։

Երկյոտասյաւ՝ Շամրիկ տիկին, տաճարները՝ զոհք կերթան,
Շքաւորաց, կարօտելոց՝ առատաձեռն՝ տուրք կու տան,
Ամեն բերան՝ անկեղծ հոգւով՝ պաղատում են՝ քաջերին,
Որ տիկինը՝ առողջ, ուրախ՝ հասնի երկանց՝ օրերին։

Երիտանք բռնեց՝ չքնաղ տիկնոջ՝ արք և կանայք՝ դուրս կու գան,
Որդոստայի՝ մէջ բազմութեամբ՝ կու սպասեն, կու կենան,
Մինչև բարի՝ ազատութեան՝ ուրախալի՝ ձայն լըսեն.
Իսկայն տասիղ՝ թմբուկ՝ սըրինդ՝ զուարճախաւն՝ կու հնչեն։

Մէկ էլ տեսնես՝ որ դարպասից՝ դուրս եկաւ հայն՝ ու պինին,
Սուփրաները՝ փռոտվեցան, որդոստայի՝ երկանքին,
Խորտիկները՝ լքցըվեցան, նստոտեցան բազմութիւն,
Շամրիկ տիկնոջ՝ աչքալուսանք՝ է թող անեն՝ խնդութիւն։

Եօթն օրն այսպէս՝ կը անցանէ, յետոյ նորէն՝ կըսկըսեն,
Ուտել խըմել, ուրախանալ, մանկան անուն՝ կը դնեն,
Տես՝ ինչ երգեր՝ են երգըվում, տես՝ ինչեր են՝ դուշակում,
Տես՝ թէ ինչպէս՝ ապագայքը՝ առաջվանէ՝ են երգում։

Մինչև Շամրիկ՝ քառասունքը՝ չըլըրայնէ, դուրս չգայ,
Եւ գրկումը՝ նորածինին՝ այն բազմութեան՝ ցոյց չտայ,
Թմբուկների՝ ձայն չլսվի։ Շամրիկ դանէն՝ դուրս եկաւ,
Կեցցէ մանուկ՝ աղալակաւ՝ բազմութիւնը՝ ցրուեցաւ։

Պարէտ եթէ ձանփայ դուրս գայ, դէմ թշնամեայ՝ արշաւան,
Շամրիկ եօթն օր՝ առաջ գիտի՝ խուռն ամբոխին՝ տայ խրախճան,
Այնպէս պարէտ՝ Շամրիկի հետ՝ ձանփայ կիւլին զօրքերով,
Ժողովուրդը՝ կյուղարկէ՝ բարի ճանփայ՝ մաղթելով։

Երբ լավեցաւ՝ թէ նահապետ՝ յետ է գալիս՝ յաղթութեամբ,
Ծովալուրջը՝ շուտ ընդ առաջ՝ է դուրս գընում խնդութեամբ.
Ինչ աեղ էլ որ՝ հանդիպեցան, կը սկսի՝ ցնծութիւն,
Մինչ Արմաւիր՝ հասանիլը՝ չի վերջանար՝ բերկրութիւն։

Այս աեղ նորոգ՝ է սկսում՝ ուրախութիւն՝ եօթնօրեայ,
Ծայրէ՛ի ծայր՝ լքցվում է՝ սուփրաներով՝ որգաստայ,
Ուտել խըմել՝ չէ վերջանում՝ ո՛չ ցերեկը, ո՛չ գիշեր,
Երբ երեկոյ՝ հասանում է՝ բորբոքվում են՝ խարոյկներ։

Պարէտ դարձաւ՝ արշաւանէն՝ Հայաստանը՝ Ճոխացաւ,
Զօրքն աշխարք՝ լքցվում են՝ յետերն բերած՝ աւարաւ,
Աւուտուր է՝ առատիկ լինում, ծնաւաճառք՝ են բացվում,
Ամեն մարդու՝ տունն ու աեղը՝ բարութեամբ է՝ լքցըվում։

Էլ սկսան՝ դարպասումը՝ սովորական՝ խըրախճանք,
Էլ սկսան՝ դաշտաց Հովատց՝ արանց կանանց զբօսանք,
Էլ պղպային՝ մեծ ծօներըը՝ ըսկըսեցին՝ կատարվիլ,
Էլ Շամբիկը՝ սկսեց այն՝ հանվէտներին՝ հաղորդվիլ։

Օր չի անցնիր՝ որ Շամբիկը՝ լաւ գործով չէ պարապած,
Կամ խըրախճան, կամ գատաստան, կամ խորհուրդի՝ մէջնստած,
Կամ աղքատաց՝ աուըը է բաժնում, կամ քաղաքում՝ գբօսնում,
Ինչպէս մէկ մայր՝ իւր զաւակաց՝ ամեն գարտը՝ խմանում։

Բայց միշտ հետը՝ կայ Պարէտը՝ ստուերի պէս՝ անբաժան,
Ինչ անում են, ինչ խօսում են, են ամեն տեղ՝ միաբան,
Թէ Պարէտը՝ ուզեց մէկ բան, Շամբիկին է՝ հարցանում,
Եթէ Շամբիկն՝ է կամենում, առաջ մարդուն է յայտնում։

Յիսուն տարի՝ հետզ հետէ թըվում՝ լոկ բերանով ասելը,
Մէկ միտք արա՝ թէ ինչեր են՝ պատահել այն՝ օրերը.
Քանի բիւր մարդ՝ նոր են ծնել, քանի բիւրը՝ մեռել են,
Սոյա Հարանիք՝ տեսնողները՝ արդեօք կան՝ թէ՝ անցել են։

Այս կերպով կեանք՝ անցնողները՝ պիտի այժմ՝ բաժանվին,
Շամբիկ Խրեան՝ առապատում՝ էլ չտեսնէ՝ իր փեսին.
Պարէտ երթայ՝ հետն ձանփայ, ուղեկից չէ՝ իր հարսը,
Երդաւոտմէն կըտրեալ չ՝ երթիւտանց մեծ ճամբայ:



ԹԱԽԻԾՐ ՇԱՏՐՈՒՆԻ

Չէ ցամաքում՝ արտասուքը՝ երկուսի էլ՝ աչքերից,
Շամրիկ ծանր է՝ չէ ձեռնհաս՝ դուրս ելանել՝ դարպասից.
Թախծեալ սրտով՝ պարէտ ցերեկ՝ պատրաստած է՝ պոծերով,
Գիշերները՝ անց են կեցնում՝ անմխիթար՝ կոծերով։

Շամրիկ ասում՝ էր Պարէտին, դու գնում ես՝ արշաւան,
Ամայանում՝ է պաղպաջունքս, պատարկվում իմ՝ հարսնարան,
Այրիանում՝ եմ տարաժամ, փեսիս ծոյէս՝ հանում են,
Այս պատերազմ, այս արշաւան, կարծում եմ իմ՝ պլեին են։

Ասորեստան՝ շատ տարի էր, չունէր մեզ պէս՝ պատերազմ,
Գիտէր որ մեր՝ զօրք հանապազ՝ կան պատրաստի՝ վառ և կազմ,
Զմեռնամուտ՝ ստվորութիւն՝ չունէր նա մարտ՝ ելանել,
Անշուշտ նա իմ՝ երկյոտութիւնն՝ երթևեկէն՝ է լսել։

Զմեռնային՝ արշաւանը՝ իմ Պարէտէն՝ սովրեցան,
Բայց գիտեն էլ՝ որ ձմեռը՝ շատ զօրք ունի՝ Հայաստան.
Հայոց մանկունք՝ յօժար են միշտ՝ դուրսը կենալ՝ ձմեռը,
Եւ երբ պարտն՝ բերէց ձիւնհալք, վերադառնալ՝ արտերը։

Երևի թէ՝ իւրեանց մտքում՝ ձևել են թէ՝ երբ Շամրիկ,
Երկյոպիա է՝ տանն ականջ՝ պիտի նստի՝ հանդարտիկ,
Պարէտն էլ ինք՝ այն պատճառաւ՝ մէկ տեղ շարժիլ՝ չէ կարող,
Մենք արշաւենք, և ընդդէմ մեր՝ ոչ կայ ի մարտ՝ մաքառող։

Այլ իմ Պարէտ՝ թողնում է ինձ, և ի մարտ է՝ վաղվաղում,
Եթէ չերթայ՝ ինչ հնար կայ, թշնամին է՝ կատաղում,
Թէպէտ վստամ՝ Լայ զարևը՝ կարէ երթալ՝ մենակ էլ,
Սակայն Պարէտ՝ աշխոյժ հոլովել ինչպէս կարէ՝ հանդարտել։

Թէպէտ հնար՝ է աղաչել՝ որ իմ Պարէտ՝ մարտ չերթայ,
Բայց ինչ սրտով՝ պիտի մընայ, և իմ կշտիս՝ ինչ կենայ,
Իրաւ ինձ մեծ՝ դիւր կը լինի, այլ մարտի գործն՝ ինչ անէ,
Անհընար է նըմա մընալն, ապա թողնելն հընար է։

Ինչ կը լինի՝ Շամրիկի կեանք, չեն սևանար՝ օրերը,
Մահը նորա՝ արևի դէմ՝ չի սփռիր իւր՝ ստուերը,
Պարէտ՝ ասա, ես ինչ անեմ, ինչպէս քեզմէն բաժնվեմ,
Ինչպէս աչերս՝ բաց, չըմեռած՝ դրկացս մէջէն՝ քեզ թողնեմ։

Պարէտ նոյնպէս՝ արտասունքով տուեց նըրան՝ պատասխան,
Քառասունքըդ՝ երբ անց կայնես, դու էլ արի՝ Շամրիկ չան,
Հայկայ նետն էլ՝ քո հետը բեր, մարտի գործը՝ վերջացնենք,
Էլի կրկին՝ մեր հայրենիք՝ ուրախութեամբ՝ կը տեսնենք։

Չէ, չէ՝ Պարէտ՝ Հայկայ նետը՝ ասաց Շամրիկ՝ տմր հետըդ,
Առանց նորա՝ մի արշաւեր, ինչի չընի՝ այն մտըդ,
Կարելի է՝ ես կուշանամ, անյաղթ՝ անուն՝ ինչ կընի,
Եթէ յանկարծ՝ մէկ անյաջող՝ Ճակատամարտ՝ պատահի։

Միջադեպով՝ տմուր թերդերն՝ ինչոմ պիտի կոչվանվին,
Ըրամաշնեայդ՝ գոռ ախոյեանք՝ ինչոմ պիտի գըլըսվին,
Անպճելի՝ զըրահները, անվանելի զեղարդունք,
Ինչոմ պիտի տրկարանան՝ և ուժդնապիրկ՝ աղեղունք։

Ֆեզ ինչ վընաս՝ է այն նեռը, կամ ինչ աւել՝ ծանրութիւն,
Թուղ՝ որ նըրան՝ չըկարօտի՝ քո և զօրացդ՝ արութիւն,
Վստահարան՝ է անկասկած, ով դիտէ թէ վտանգը,
Երբ փորձանաց՝ մէջ կը ղրնէ՝ մարդոյ արևն՝ ու կեանքը։

Եւ ես փոքր ինչ՝ վստահ կընիմ, որ յայդ պարարտ՝ ծերութեան
Ֆեզ չեն հանիր՝ մահու ժանիք յաստղարիսի՝ արութեան,
Ուր որ կենաց՝ դարանակալ՝ կըսկսի դափը՝ հարկանել,
Եւ անխտիր՝ մեծ ու պստիկ՝ կոկորդին կեր արկանել։

Թէ ինձ սիրես՝ քաջ իմ Պարէտ՝ զգոյշ կացիր՝ վըտանգէն,
Եւ առաւել՝ Մինջաղեւոյ՝ անզուսպ կանանց փորձանքէն,
Շուտ կը հանեն՝ սրտիդ մէջէն՝ քո Շամրիկի՝ յիշատակ,
Շուտ կու կանգնեն սրտիդ վերայ՝ մոլորութեան՝ յաղթանակ։

Վա՛հ՝ դիտես թէ՝ նշմարում եմ՝ այն աչագեղ՝ կուսանքին,
Որ քո սրտէն՝ պիտի հանէ՝ քո սիրահար՝ Շամրիկին,
Հայաստանի՝ տիկնոջ անուամբ՝ պիտի վըրէս՝ խրոխտայ,
Իմ որդւոյ, և՝ իմ դստերայ՝ քո սրտի մէջ՝ տեղ չըտայ։

Վա՛հ, դիտես թէ՝ սիրտս ատում է, էլ չի լինիր՝ Պարէտը,
Առաջվան պէս՝ աննենդ անկեղծ՝ և մըտերիմ՝ քո հետը,
Հոգին կու տայ՝ օտար սիրոյ, քեզ կը լինի՝ դաւաճան,
Պատճառ կընի՝ չարաբաստիկ՝ ևս վըտանգայ՝ ևս մահուան,

Մի մոռանար՝ քաղցրիկ փեսայ՝ որ հազարէն՝ ես ընտրած,
Որ քեզ առաջ՝ ես սիրեցի, մինչ որ մոքէն՝ չէր անցած,
Բայց ի գահէն՝ Հայկ-Արամայ՝ անբաւ գանձուց՝ տէր արի,
Զը Թողի որ՝ մէկ ծանրութիւն՝ կամ բեռ գառնաս՝ աշխարհի։

Տե՛ս՝ տասնուինն՝ զաւակաց հայր՝ ինձմով գառել՝ ես, Պարէտ
Ան չեմ յիշում՝ որ իմ կամքով՝ եղար ազգիդ՝ նահապետ,
Զքնաղ սիրտդ՝ ինչպէս այժմ է՝ կրկին այնպէս՝ դու ինձ բեր,
Ես այդ սիրեմն, ես այդ սիրոյն, պիտի մընամ՝ անհամբեր։

Պարէտ՝ ուր օր՝ քեզ Հարսնացայ՝ վըրէս շատ աչք՝ վառվեցան,
Գիտեմ ինչեր՝ քաշեց, անցոյց՝ իմ պատճառաւ՝ Հայաստան,
Տես՝ չըլինի՝ որ այն կայծը՝ դաշախի մէջ՝ թաք կեցած,
Հողմոյ ընչմամբ՝ վեր երևի՝ ծածկած տեղէն՝ արծարծած։

Մի հաւատար՝ բարեկամի, ես եմ քո մէկ՝ բարեկամ,
Ձը լինի թէ՝ այլ բարեկամ՝ Աս որոնես՝ տարաժամ,
Ան բարեկամ՝ վատ կը լինի՝ քան զայն կատղած՝ թշնամի,
Որ այժմ ազատ՝ սմբակակոխ՝ է անում մեր՝ Հայրենի։

Պարէտ՝ անցել՝ է ոսկի դար, Հայկազնէից՝ մեծութեան,
Անուշաւան՝ իւր Հետ դըրեց՝ փառք ատն Հայկայ՝ մուխ տապան,
Ազգասէրը՝ թէ մէկ Հատ է, անձնասէրքը՝ բիւրաւոր,
Ազգասիրի՝ դիմայլակով՝ շրջում է օձ՝ թիւնաւոր։

Քանի տարի՝ խօ փորձեցինք, ազգի անուամբ՝ լինչ չարին,
Կեղծեաց տակէն՝ ով է ընտրում՝ իսկապես չարն՝ ու բարին,
Միաքըդ չէ կէտն՝ վըրէժխնդիր՝ էր Շամբիկի՝ գերութեան,
Կէտն էլ ծառայ էր Պարէտի՝ իմ և ազգի՝ ընտրութեան։

Թէ որ Ձդնին՝ ազգին խաբել, միթէ Հնար՝ չեն գանիր,
Սիպտակը՝ սև, սևը՝ սիպտակ՝ միամըտաց՝ չեն ցուցնիր.
Հասաւ՝ Պարէտ՝ այն ժամանակ, որ Հայկի խօսք՝ կատարվի,
Հայկի տունը՝ իւր որդւոցմէն՝ պիտի ընկնի՝ կոտծանվի։

Գանէ մեզմէն՝ չըլնի սիրելն, մենք որ փորը լինչ՝ կանդնեցրինք,
Ձըլինի՛ թէ՝ վատանգամ՝ չարեաց պատճառ՝ մենք լինինք.
Ես չեմ վատահ՝ ոչ մէկին էլ, միայն քեզ եմ՝ ես վըստահ,
Տես՝ Պարէտ Ջան՝ որ իմ այս յոյս՝ մընայ կենդան՝ և անմահ։

Ձը լինի թէ՝ կարենան ինձ՝ քո սրտեմէն՝ դուրս Հանել,
Ձըլինի թէ՝ մեր երկուսի՝ մէջ մարթանայ՝ որ մրանել.
Ես էլ Թառն եմ՝ Շամիրամի, և Դերկէթի՝ զաւակ եմ,
Անուշաւան՝ էր իմ ծընող, Հօրէս մօրէս՝ գշխոյ եմ։

Ես չեմ ընկել՝ անարդութեան՝ արհամարհանք՝ չեմ տանիր,
Գահի վերայ՝ էր իմ ծընունդ, գահէն հեռի՝ չեմ մեռնիր.
Վաթսուն ու մէկ՝ տարեկան եմ, մէկ պարզամիտ՝ աղջիկ չեմ,
Երակնեղումն՝ Բելայ արեան՝ շրջան առածն զգում եմ։

Կայս էի որ՝ քեզ Հարսնացայ, և մըտայ քո՝ անկողին,
Քեզ ուզեցի՝ ժառանգ անել՝ իմ բարձրատոհմ՝ ծընողին.
Ինձ մի լինիր՝ դու ոսնհար, օտար գրկայ՝ մի փարիր,
Օտար աղբիւր՝ մի մերձենար, և օտար ջուր՝ մի խըմիր։

Մխաքէ բէր այն՝ չորս բանակը. որ իմ անուամբ՝ էր խմբած,
Հայաստանի՝ ծագած ծաղկունք՝ փինջոյ նըման՝ բոլորած.
Իմ ձեռին էր՝ Հայկայ նետը, միայն նա քեզ՝ պաշտպանեց,
Նա քեզ արաւ՝ անյաղթելի, Մկրտագեսայն՝ էլ վանեց։

Տես՝ պարէտ չան՝ արգանդում՝ կայ քո սիրոյ՝ աւանդը.
Ես իմ ձեռօք՝ կը պատառեմ՝ իմ այս ուռած՝ արգանդը,
Դուրս կը քաշեմ՝ այն զաւակը՝ որ դու Ջաւան՝ կոչեցիր,
Տես՝ ասում եմ՝ ինձ քո ընդդէմ՝ բընաւին մի գրգռիր։

Էլի էնպէս՝ համարիր թէ՝ ես անբաժան՝ հետըդ կամ,
Իմ աչքերը՝ հետըդ կընին, կամ Արբակը, կամ Վաստամ,
Շուտ կը լսեմ՝ ամեն համբաւ, դու իմ սիրտը՝ մի խոցեր,
Ես քո կինն եմ՝ կին մըտերիմ, օտարի հետ՝ մի փոխեր։

Խընայիր մեր՝ զաւակներին, խընայիր քո՝ համբաւին,
Դաւաճանը՝ տակնուվրայ՝ կարէ բերել՝ բընաւին.
Մեր աւագայ՝ մէջն էլ շատ կան՝ հաւատապուճ՝ ախերիմ,
Եւ երևում՝ են մեր աչքին՝ բարեկամ և՝ մըտերիմ։

Զը հաւատանք՝ քաղցր լեզուին, չը հաւատանք և շրթանց.
Զը թուղթերնենք՝ որ որոշայթ՝ թաքուցանեն՝ մեր անձանց.
Զորս աներնք մեր՝ երկու աչքը, տեսներնք լարած՝ թակարդներ,
Չպուշանանք՝ որ նոցա մէջ՝ չը բռնըվին՝ մեր ոտներ։

Ձեմ հաւատում՝ քաղցր ամուսին՝ թէ մէկ էլ քեզ՝ կը տեսնեմ,
Այդպէս մաքուր, այդպէս անբիծ, ինչպէս ծոցէս՝ հանում եմ,
Դու ինձ համար՝ անդիւտ ակն ես, ինքդ քեզ մի՝ կորցնիր,
Լուսաճաճանչ՝ փայլդ անաղօտ՝ բծկանօք մի՝ մրթացնիր։

Պիտի համրեմ՝ վայրկեան և ժամ, օր և եօթնեակ և ամիս,
Թէ արդեօք դու՝ ետը կը դառնաս, որ առընթեր՝ գտնըվիս.
Մինչև այն օր՝ ինչ արտասուայ՝ հեղեղք պիտի՝ ես թափեմ,
Ի՞նչ ցաւ, ինչ հոգ, ինչ տաղտապանք, պիտի հոգւոյս՝ մէջ քաշեմ։

Երանի՛ թէ՝ հընար լինէր՝ ամեն օր դէպ՝ գըտանել,
Որ ձեռքս հասնէր՝ կարօտելոյ՝ առատ տուրքեր՝ բաժանել,
Ի՞նչ խոստանամ՝ Մասեաց գաղջայ՝ ինչ գահամունք՝ ուխտ անեմ,
Ի՞նչ գործ բարի՝ ազգի օգուտ՝ կամ լաւութիւն՝ միտք անեմ։

Դու գիտես որ՝ հանապազ օր՝ այն էր հոգւոյս ցանկութիւն,
Որ ազգի մէջ՝ աւելցնեմ, երջանկութիւն, ճոխութիւն,
Արդեօք ինչ կայ՝ որ չեմ արել, դեռ պակաս է՝ մընայել,
Ինձ սիրտը՝ ծոռ յուշ բերէ, որ մարթիմ այն՝ ևս անել։

Պարէտ՝ Ճանփիէ՝ է Արտիմէտ՝ մի՛ զանց առներ՝ մըտանել,
Նորա շըքեղ՝ տաճարայ մէջ ողջակիզաց՝ զոհ առնել,
Ցոյս իմ կարած՝ է մարդոցմէ, միայն՝ ի գաղջս է իմ յոյս,
Նոյանէ եմ՝ ակնկալում՝ թէ կը ծագէ՝ զուարթ լոյս։

Մի՛ ակնկոր, քաղցր իմ փեսայ, ուղիղ նայէ՝ երեսիս,
Թէպէտ կինդ եմ՝ յիսուն ամեայ, այլ որբ ի մէջ՝ դարտակիս,
Թուանդ սէր եմ, և Թուռնէից, բայց առանց քեզ՝ այրի եմ,
Հարիւրաւոր՝ սերնդոց մէջ՝ պանդուխտ, նշդեհ օտար եմ։

Տէս՝ պարէտ չան՝ ինձ նըման կին, մէկ հատ էլ կայ՝ աշխարքում,
Մանկութիւնը՝ անթառամ է՝ վարդի նըման՝ քո գրկում,
Օրիորդք շատ՝ կը գըտանես, սակայն Շամրիկ՝ չեն լինիր,
Շամրիկի պէս՝ այսքան ջերմիկ՝ եռանդագին՝ չեն սիրիր։

Ստա ժպտանօք՝ կը խաբեն քեզ, կը զինեն սիրտդ՝ իմ դիմաց,
Ծաղրու ծանակ՝ կ'ընեինք մերոյ, արհամարհանք օտարաց.
Սրիւն և մահ՝ կը մանին մէջ, սիրոյ տեղ վէրք՝ վարակեն,
Աթոռ և գահ՝ սև քողերը՝ ստուերթեթով կը ծածկեն։



ԷՐՄԱԺԵՑ ԵՒԱՐԻՆԻ ԵՒ ՊԱՏՐԻՑԻ

Զարմանք պատել՝ էր Պարէտին՝ Շամրիկի այս՝ խօսքերէն,
Որ նորա լայն՝ և արտասունք՝ չէր գադարում՝ աչքերէն.
Արդեօք ինչ չար՝ է նա զգում, ինչ պիտի ինձ՝ պատահի,
Մինչ վրանդ՝ կայ իմ հանդէպ՝ կամ պերսէթեան, կամ մահի։

Կամ մինէ այս՝ հասակիս մէջ՝ ինձ պիտի կին՝ խարբալէ,
Եւ կամ տիկնոջ՝ աչքն ի սրտէս՝ օտարօտի՝ սէր խլէ,
Կամ բաղդ Հայկայ՝ և Արամայ՝ պիտի թողու՝ դիս մինակ,
Եւ թշնամին՝ Հայոց վերայ՝ կանգնէ մարտից՝ յաղթանակ։

Կամ նախանձու՝ օձ չարաթոյն՝ ամբառնայ իւր՝ գլուխը,
Որ յիմնամեայ՝ ժամանակաւ ջաղխել էր իմ՝ բազուկը,
Հայաստանի մէջ տարածէ՝ շփոթ և յոյզ՝ դաւաճան,
Եւ դրդուեցընէ՝ ամուր հիմունք՝ շրջել գահիս՝ Հայկազեան։

Կամ տիկինս ինձ՝ դաւաճանէ, այլում տայ իմ՝ աթոռը,
Ուր որ առաջ՝ տուած լինի՝ իւր քնքոյշ սիրտ՝ և ձեռը.
Եօթնագլուխ՝ վիշապի շունչ՝ ապականէ Արմաւիր,
Դաւ յղանայ՝ իւր հոգւոյ մէջ՝ Հայկահիմն ազգ՝ և երկիր։

Կամ ես խոթվիմ՝ պատիր պղծոյ՝ սրախս սանձը՝ կընոջ տամ,
Ա՛յս զառամած՝ օրերումըս՝ նշաւակի՝ խաղ դառնամ,
Մոռանամ իմ՝ հայրենիքս, մոռանամ իմ՝ Հայաստան,
Թոյլ տամ որ ինձ՝ թովէ սուտ սէր, լարէ թակարդ՝ կորսեան։

Չէ, չեմ կարծում՝ թէ սէր օտար՝ յաջողէ սիրտս՝ սպրդիլ,
Սէր իմ տիկնոջ՝ ինձ չի ներթր՝ ծածուկ նետէ՝ խոցոտիլ.
Այն ինձ վհան՝ է ամեն տեղ, կը պահպանէ՝ անվտանգ,
Ո՛չ մահապէն՝ է ինձ ահեղ, ո՛չ լարից դաւ՝ խորամանգ։

Ես պատերազմ՝ ունիմ ընդդէմ՝ Միջագետաց Արքային,
Յանդիման իմ՝ ինչ գործ ունի՝ կամ օրիորդ, կամ տիկին.
Ես չեմ գընում՝ որ Նինուէի՝ մէջ հասանեմ իմ՝ ամուսը,
Միայն պատիժք՝ պատուհասից՝ պիտի ափռէ՝ իմ ձեռը։

Ասորեստան՝ դրդուեցրել է՝ բազմամեայ մեր՝ լուծիդեն,
Վերջին անգամ՝ որ յարձակից՝ ինքնին հայոց՝ յաղթուիդեն։
Հայաստանը՝ խաղաղութիւն՝ է ցանկանում՝ ստրկացնել,
Որ մարդ կարնայ՝ երջանկութեամբ՝ իւր օրերը՝ լըրացնել։

Այժմ մօտել՝ մեր սահմանայ՝ և եղել է՝ միջամուխ,
Հայկայ որդիքս՝ յանկարծ տեսնում՝ ենք Ճապաղած՝ արեան ոխ.
Անհանգիստ են՝ միշտ Ասորիք, չեն պակասում՝ շրխոթքըն,
Վախենում են՝ որ ժանկ պատէ՝ նոցա սուսերը և զէնքըն։

Բայց քաջայոյս՝ եմ որ այն զէնք՝ հայ պատանիք՝ խորտակեն,
Եւ ամենի՝ ձիեանց նըման՝ կըզակները՝ սանձարկեն,
Միանգամ՝ չը յանդգնի՝ Ասորեստան՝ միտք բերել,
Թէ հընար կայ՝ Հայոց ազգին՝ նուաճվելոյ՝ հարկադրել։

Զքնաղ Շամրիկ՝ քո սէր ինձ հետ՝ է մինչեւ ես՝ կամ կենդան.
Չէ ձեռնհաս՝ պատրել թովել՝ ինձ կին շքեղ, կամ կուսան.
Չեմ մոռանար՝ քո այն սէրը, որ մանկական՝ հասակիդ,
Անօրինակ՝ վեհանձնութեամբ, տուիր անարգ՝ ստրկիդ։

Ինձ հաւատար՝ շատ սիտանիք՝ կայինն Հայոց աշխարքում,
Որ քո սէրը՝ անշէջ բոցով վառ կայր նոցա՝ սրտերում,
Քան զիմ աւել՝ էր երախտիք՝ նոցա նախնեաց՝ պանծալի,
Քան զիմ ճոխ էր՝ նոցա կալուած, ու մթերքն՝ պանձալ լի։

Քան զիս հզօր՝ և քաջ էին՝ քո տարիածուք՝ սիրահար,
Քեզ միշտ հանում՝ էին նոցա՝ սիրալիր բանք՝ անդադար,
Այն ամեն դու ուխց ներքոյ՝ գրկիր, քեզմէն՝ հեռացրիր,
Ցիրմի մէջէն՝ ինձ հանեցիր, ինչպէս զոհար՝ ընտրեցիր։

Միթէ ես քեզ՝ այսուհետև՝ պիտի ատեմ, ուրանամ,
Քո այս ամբաւ՝ երախտիքը՝ անխղճաբար՝ մոռանամ,
Զէ՝ Շամրիկ չեմ՝ ես չեմ կարող՝ լինել այնքան՝ ապերախտ,
Ես մի միայն՝ քեզ հետ կընիմ՝ երջանիկ և բարերաղդ։

Քաջիկ պարէտ՝ տուեց ներքան՝ պատասխանի Շամրիկը,
Իրաւի է՝ անպարտութիւն՝ են բերում ինձ՝ քո խօսքը,
Ես քո անձին՝ մէջ տեսնում եմ՝ այն սիրական՝ պարէտին,
Որ իւր խելօք՝ կենակցութեամբ՝ սիրած ունի՝ իմ սրտին,

Բայց ինչ անեմ՝ որ աչքերս՝ սրտիս անդուլ՝ ասում են,
Թէ պարէտին՝ կոյս Ասորի՝ պիտի խլէ՝ իմ ձեռնէն,
Ա՛խ՝ պարէտ չեն, եօթանասուն՝ երկու ամեայ՝ հասակդ,
Ձունի բնաւ այժ քողարկել պեղեցկութեան՝ պսակդ։

Իրանդ նոյնպէս՝ պեղեցկադիր՝ ինչպես վեհ էր՝ տեսչէլ,
Երբ հինդ բանակ՝ ցիր ցան արիր, արդ չքնաղես տեսեալ,
Զառամութեան՝ հասակիդ մէջ՝ երիտասարդ՝ ես զուարթ,
Ընդեղատիպ, քաջազանդուր, վարպետիրթիթ, փառազարդ։

Երանի թէ՝ մէկ մազ լինէր՝ հերացդ մէջ՝ սպիտակ,
Խորհրդաւորութեան՝ կնճիռ կըրէր՝ հրաշագեղ՝ քո դիտակ,
Կամ կոնակդ՝ կուզ երևէր՝ նըշան տիոյդ՝ ծերութեան,
Կամ ոսից և ձեռաց մէջ հետք՝ նշմարվէին՝ դողդոջման։

Ի՞նչպէս կարծեմ՝ որ աչագեղ՝ Միջագետայ՝ աղջկունք,
Զեն յառիր քո՝ շրքեղ դիմայդ՝ իւրեանց փայլուն՝ թուխ աչկունք,
Զեն հառաչեր՝ սիրոյդ համար, սրտիդ դուռը՝ չեն բաղխեր,
Զեն գառնար քո՝ անձին դերի, քող երեսայ՝ չեն պատռեր։

Ո՛հ, տեսնում եմ՝ ես այն օձը՝ որ քո սիրտն է սողոսկում,
Ջեզ գողանում՝ է իմ ձեռքէն, և իմ աչքերս՝ քողարկում,
Իմ ամէնութեան՝ փառքն է խլում, ծիծաղում է՝ երեսիս,
Աչքիս առջև՝ սիրափաղաղ՝ համբոյր տալիս՝ է փեսիս։

Երկիւղ ընկաւ՝ սրտիս մէջը, պատասխանեց Պարէտը,
Ինձ պաշտպանել՝ ոչ են կարող՝ ոչ Հայկ և ոչ՝ իր նետը,
Ջեզ խօսեցնում՝ է օրհասը, նորա ահեղ՝ գաւազնիք,
Ոչ ոք կարէ՝ յետ դարձընել, ոչ քաջք անմահք և ոչ դիք։

Երեւի թէ՝ գարանամուտք՝ են սպասում՝ ինձ ճանփին,
Որ ինձ բռնեն, դերի տանեն, մատնեն բանտիդ՝ խաւարչտին,
Միթէ բանտէն՝ ինձ ազատել՝ միտի մէկ կին՝ խոստանայ,
Որ իմ անձին՝ փրկանայ տեղ՝ իմ սրտիս սէր՝ ստանայ։

Ես հազար բանտ, հազար կապանք՝ սիրոյդ համար՝ կընդունիմ,
Որ Աստղի՝ օրիորդի՝ երախտապարտ՝ չըլինիմ,
Դու միտի գաս՝ ինձ ազատել, և ոչ կուսան այլազգին,
Իմ կապանք դու՝ կը լուծանես, և հայր կանես մեր ազգին։

Միթէ ինձ վերք՝ հոգեպահանջ՝ միտի հասնին՝ մէջ մարտին,
Եւ կիսամեռ՝ միտի տանին՝ նըման անտէր՝ հիւանդին,
Մէկ պեղի կամ՝ քաղաքի մէջ՝ դարման տանիլ՝ իմ վիրաց,
Որ ես այլ ոք՝ չըտեսանեմ, բաց յԱստղի կուսանաց։

Որ նորա դեղ՝ սպեղանի, առողջարար՝ պալասան,
Իմ կարեվէր խոցուածներուս՝ բժշկութեան՝ հընար տան,
Եւ ես նոցա՝ քնքոյշ հոգով, գողտրիկ ջանից՝ փոխարէն,
Հոգիս նոցա՝ ուղերձ տալով, սէրս խոստրեմ՝ քո անձնէն։

Եթէ թոյնէ՝ պզուշանամ, կարելի է թէ կարիճ,
Ինձ մահաւիթ՝ հարուած ատամբ՝ յարքունական՝ տայ դահլիճ,
Երբ ես բազմած՝ ի դահ փառայ՝ յաղթանակիս՝ հանդիսում,
Իմ թշնամեայ՝ ասեան բացած՝ լինիմ արդար՝ դատ խօսում։

Զունիմ այնքան՝ կարողութիւն՝ ոյժ տալ մարդիս՝ թեւերուն,
Որ թափանցել՝ հընար գտնեն՝ ապագայից՝ խորերուն,
Թէ ինչ արդեօք՝ են անմահ դիք՝ հանդերձեալ ինձ պատրաստել,
Որ ես անձնս՝ չյն վտանգէն՝ միայն ջանամ՝ ազատել։

Կամ գուցէ յոր՝ լինիմ հեծած՝ Միջագետաց՝ մարմանդքը,
Ամբակակոխ ձիոյ արած՝ նոյա այգիք՝ և անդքը,
Յանկարծ իմ դէմ՝ մռնչալին՝ ճչէ կորիւն առիւծու,
Կամ գարանեալ՝ լինի նաւած՝ մահակ վազեր կամ ընծու։

Չեմ հասկանում՝ ես Շամրիկ ջան, այժմեան սրտոյդ՝ պատճառը,
Ո՛չ աշտարակին՝ է հընացել, և ո՛չ տնկած մեր ծառը,
Որ մեր նախկին՝ արշաւանէն՝ վերադարձի՝ ժամանակ,
Երեքպատիկ՝ ուրախութեան՝ մեր կանդնեցինք՝ յիշատակ։

Չէ, չէ՝ պարէտ, քեզ չենք կարող՝ տուեց Շամրիկ պատասխան,
Մէկ վընաս տալ՝ ո՛չ ատր, ո՛չ ծոյն, և ո՛չ տղուն, կամ պաղան,
Ջեզ մի միայն՝ գարանակալ՝ ինքնին կարես՝ լինելու,
Սիրոյդ ընկեր՝ նոր հընարել, ինձ քո սրտէն հանելու։

Պարէտ՝ յիշէ՝ քո այն երդումն՝ որ ինձ տուիր՝ այն օրը,
Երբ ես հօրս՝ աճուոյ հետ՝ քեզ ձօնեցի՝ իմ սէրը.
Դու չոքեցար՝ ծնրադիր վերայ, փարեցար իմ ոտներուն,
Ասիր. միթէ՝ կարող եմ ես՝ դաւաճանել՝ քո սիրոյն։

Դու ինձ այսօր՝ բայց ես անուշ՝ երջանկութեան դռները.
Ես ինչպէս՝ եմ կարող բընաւ՝ մոռնալ՝ քո՝ այս սէրը.
Ատեաց ձաջքը՝ ինձ կը պատժեն, այն երկնատաք շանթիկով,
Ինչ որ վերստաս՝ պիտեն ցայտել՝ անակնկալ՝ կայծակով։

Ես ասացի. Պարէտ՝ Մասեաց Քաջք թող մեր մէջ չըմանին,
Ես եմ քեզ հետ՝ այժըմ խօսում, այս ծերը վկայ՝ թող կանգնին,
Այսօր քեզ հետ՝ պիտի մնանեմ՝ ես յառապաստ՝ հարսնութեան,
Ցայնժամ պիտի՝ երթամ անտի՝ երբ ինձ փորվի՝ մութ տապան։

Դու կանչեցիր. Հընազանդ եմ, յօժար եմ այդ պայմանին,
Քեզ միայն ինձ՝ հարան ունենալ, մինչև՛ ի դուրն տապանին.
Ապա եթէ՝ դժրեմ խոստմանս՝ դու ունենաս՝ իրաւունք,
Գլխիս վերայ մահու շանթիկ, որպէս յերկնից կայծակունք։

Ես կրկնեցի. վըկայ կացէք՝ իմ փեսային՝ խօսքերուն,
Ծերը մեր ազգի, ձեզ լաւ հաշուեմ՝ քան թէ Մասեաց՝ Քաջերուն,
Պարէտ պիտի՝ մինչև ի մահ՝ միայն ինձ հարս՝ ձանաչէ,
Մինչդեռ Շամրիկ՝ է կենդանի՝ այլ ոք Հայոց՝ տիկին չէ։


Վկայ ենք մենք՝ ասին մեր ծերը, նոյն կրկնեց քո՝ հայր Գեղամ,
Վկայ ձեր մէջ՝ է բոլոր ազգ, չքնաղ տիկին՝ Շամիրամ,
Թէ քաջ Պարէտ՝ երբէք դրժէ՝ իւր այս աւուր ուխտերին,
Վըրէժխնդիր՝ պիտի ձանչէ՝ համազգային՝ ծերերին։

Դու կրկնեցիր, Թէ մոռանամ՝ ես այս աւուր՝ քո սէրը,
Թող պատառէ՝ լերդ ու սիրտս՝ քո պաշտելի սուր սայրը.
Թող իմ արիւն՝ խոխոջեսցի՝ ներքոյ ոտից՝ քոց դշխոյ,
Թող քո վրէժ՝ հրաւիրց պէս՝ հասցէ վերայ իմ դլխոյ։

Ես իմ երդմանցս՝ չունիմ դժրել՝ տուեց Պարէտ՝ պատասխան,
Քնքոյշ քո սիրտ՝ զուր մի՛ մաշեր, քեզ մի՛ տանջեր՝ Շամրիկ Ջան,
Դու խօ ինձ լաւ՝ ես ձանաչում, յիտուն տարիյան՝ ընկերդ եմ,
Ես բայ ի քէն՝ այլ օրիորդ տեսանել սիրել կարող չեմ։

Շամրիկ լուռնեց՝ խօսքն ծայրը, ասայ. Պարէտ՝ լաւ լըսիր,
Եթէ օտար՝ սիրելոյ պէս, երեսն անպատ՝ մի տեսնիր.
Ինչ կին, աղջիկ՝ որ պան քո մօտ, խելոյն ծեծով՝ դուրս հանէ,
Ասա Շամրիկ՝ այսպէս կամի, և այս նորա՝ հրաման է։

Յօժարեցաւ՝ պարէտ ամեն՝ Շամրիկի կամք՝ կատարել,
Ձէր կամենամ՝ ներան ըրնաւ՝ յաչաղանօք՝ չարչարել.
Կրկնեց իւրեան ամեն երգմունք, դարձեալ կրկնեց՝ ուխտերը,
Եւ իւր ձեռամբ՝ սեղան ղըրեց՝ այս նոր խոսամանց՝ պոհերը։



ԱՐԵՎԱՀԱՑ ՊԱՐԻՏԻ

Միւսանդամ՝ ծածանեցյան՝ Հայկ-Արամայ՝ դրօշակք.
Արարատեան՝ դաշտք լցուցին՝ Ասքանազեանց՝ նահատակք.
Պատերազմի՝ փողը փչեց, քարոզվեցաւ՝ արշաւան,
Քաջիկ որդւոց՝ հանդէս հանեց՝ լայնածաւալ՝ Հայաստան։

Ո՞ւր է՛ք գնում՝ քաջ պատանիք՝ նըման ծովու՝ ծփանաց,
Որ վարվելով՝ փոթորիկէն՝ վազում ալեօք՝ յետ ալեաց,
Կամ թխպայորդ՝ ամպրոպայ պէս՝ տարածասփիւռ՝ երկինքում,
Սարը, ձորը՝ միօրինակ՝ անխոչ, անխութ՝ անց կենում։

— Մենք գնում ենք՝ այն Հանապարհ՝ ընդ որ մեր Հայկ Թորգոմեան,
Բաբիլոնէն՝ յետ դարձըրեց՝ ալաստութիւնն՝ Հայրենեան.
Մասեաց նըման՝ հաստատ դրեց՝ մեր ազգութեան հիմունքը,
Իւր երկիւղով ապահովեց՝ մեր ամեն չորս՝ կողմունքը։

Այս իսկ Հանիւով Արամ գընաց՝ որ սահմ դրնէ՝ Բարշամին,
Հասաւ բունեց՝ այն ամեհւոյն, և սահմ դըրեց՝ բերանին,
Սահմ դրեց այն՝ Հետ կզակին, որ Անուշին՝ էր ուզում,
Եւ Անուշի սիրով՝ վառված՝ Սիսակին էր չարչարում։

Անուշավան՝ էլ՝ այս ճանփով գնաց ուժով՝ յետ բերել,
Հայաստանի՝ անկախութիւնն՝ որ իւր հայրն էր՝ կերցրել.
Երբ Արայի՝ մահէն յետոյ՝ բռնացել էր՝ Ասորին,
Ոանկախ էր՝ արել բընաւ՝ իւր սիրական՝ Հայրենին:

Պարէան էլ շատ՝ է գնացել՝ այս ճանփայով արշաւան.
Շատ է հասել՝ նինուէի դուռ՝ և կանգնել անդ՝ իւր նշան.
Այժմ էլ նա է՝ մեր առաջնորդ, և տանում է՝ մեզ նինուէ,
Որ Ասորին՝ իւր խեղութեան՝ վըրէժ առեամբ՝ լուծանէ:

Մընաց յետև՝ Արարատը, մընաց ծովակ Ցաղթամարը,
Կորդուաց լեռինք՝ աջակողմը, Տիգրիս առջև՝ կ'երևնար,
Այս տեղ ընդառաջ՝ ելան Հայոց՝ Ասորց քաջ զօրքերը,
Կըռիւ բացվեց՝ զարհուրելի, այլ յաղթեցին՝ Հայերը:

Փախուստ դարձան՝ դունդք թշնամեաց, մտան նինուէ՝ փակվեցան,
Հաստակառոյց՝ պարսպաց դէմ՝ Հայկազեան դունդք՝ շարվեցան.
Պարէա ասաց՝ ես այս քաղաք կը պաշարեմ՝ իմ զօրքով,
Թէ մեր բազուկ՝ տըկարանայ, մեզ շուտ հօգնեն՝ քաղց ու սով:

Իրաւ այն մեծ՝ քաղաքն մէջ՝ ու քանի բիւր՝ մարդիկ կան,
Սովի ահեղ՝ վտանգները՝ վաղօրօք, փոյթ՝ զօրացան,
Առաջ՝ եկաւ՝ մեծ թանկութիւն, նեղանում են՝ չքաւորք,
Հարուստք հասան՝ անանկութեան, աղքատացան՝ փառաւորք,

Մինչդեռ այ՝ Միհրդատ՝ մէկ դուռը ունէր, վեց որդի,
Ցորց դեռ ոք՝ չէր ստացել՝ անուն ժառանգ՝ յաջորդի.
Հայրը ասաց՝ իւր վեց որդւոց՝ նա կը լինի՝ իմ ժառանգ,
Ով Հայերուն՝ կը հետայնէ՝ այս քաղաքէն՝ անվըտանգ:

Գաղանի գոնում արքայորդիք՝ դուրս փախչելում նինուէն,
Գընացին դէպ՝ շրջակայ վայրք՝ որ անդէն զօրք ժողովեն.
Ընդրանիկը՝ դէպ Բաբելոն՝ ուղեց ուխ՝ գնացքը,
Սարաքոս էր՝ նորա անուն, յաջողեց իւր ընթացքը:

Բաբելոնի կուսակալը՝ Սարաքոսին՝ ընդունեց,
Իր պեղեցիկ Հաճմար դստեր՝ փեսայութեան՝ հրաւիրեց.
Ուրախութեամբ՝ կատարվեցան՝ այս ձեռնադիր՝ հարսանիք,
Բաբելացոց՝ զօրք փութացան՝ փրկել նորա՝ հայրենիք:

Եկան հասան՝ մինչև նինուէ, այլ ներս մտնել՝ չեն կարում,
Պարէտ զօրքով պաշարել է. Հայոց պատուել՝ չեն զօրում.
Շատ հայ, պաշար՝ ունին բերած, շատ ղէնք, մեծերք և նըշար,
Այլ նինուէին՝ հասուցանել՝ չըկայ ուստէք՝ մէկ հրնար:

Որովհետև՝ արքայորդիք՝ պաղտնի դունէն՝ դուրս փախան,
Այսու առթիւ՝ որքան գունեը, կայլն՝ ամուր փակվեցան,
Հըրամայեց՝ Պարէտ Հայոց՝ որ գուները՝ լաւ պահեն,
Ոչ ներսէն՝ դուրս, ոչ դրսէն՝ ներս, մուտ եւ անել՝ չըթողնեն:

Նստան ամուր՝ Բաբելացիք՝ իրեանց Ճանփի՝ գլխուն,
Դոքա էլ չեն՝ արձակ թողնում՝ եղուտան այն՝ Ճանփուն,
Բայց չեն կարում՝ Հայոց համար՝ ամեն կողմը՝ պարփակել,
Որ Հայերը չըյաջողեն՝ իրեան բանակ՝ հաց բերել:

Սարաքոսի՝ երկրորդ եղբայրն՝ որոյ անուն՝ էր Արմակ,
Այս միջոցիս՝ հասաւ նինուէ, և ամրացոյց՝ իր բանակ,
Սա եկբատան՝ էր գնացել, և այն աեղ Մարք՝ ժողովել,
Քրսան հազար՝ քաջ այրուձի՝ էր իրեան հետ՝ անդ բերել:

Սարաքոսը՝ մինչև այն օր՝ Ճակատել չէր՝ յանպատած,
Թէպէտ ինքն էլ՝ քրսան հազար՝ հետը ունէր՝ զօրք բերած.
Երկու եղբարք՝ խորհուրդ արին, և իրեանց հօրն՝ իմացրին,
Որ այս ինչ օր՝ Հայոց վերայ՝ անակնկալ՝ յարձակուին:

Դէտք և լրտեսք՝ այս խորհուրդը՝ իմաց արին՝ Հայերուն,
Հայք աւելի ուշադրութեամբ՝ զգուշացան՝ գուներուն,
Որ երբ ներսից՝ դուրս զեղանիլ՝ մէկ փորձ փորձեն՝ Ասորիք,
Նոցա առջև՝ վճռու վառեալ՝ կանգնած լինին՝ քաջարիք:

Պարէտ Ճանչցաւ՝ իւր վըրիպակ՝ որ Թոյլ տուել՝ էր Ադիին,
Ա յժմ պիտի՝ դիմակալէ՝ միանդամայն՝ երիքին.
Դըրանց առջև՝ դնդեր շարեց, ինքըն ընտիր կաճառօք,
պէս պիշեըլին՝ յարձակեցաւ, լցոյց սրտերն՝ արհաւրօք։

Քաջութեամբ են՝ պատերազմում, Սարաքոս և Ըրմակը,
Մէկ ըմբոստ՝ կապտուրում են՝ նոցա երկու բանակը,
Բաբելացիք, Եկրատանցիք՝ հայերուն դէմ՝ կանգնած են,
Գամ քան զգամ՝ կատաղում է՝ մարտ այս քաջաց՝ հարուածէն։

Եօթանասուն՝ երկու ամեայ՝ ծեր զառամեալ՝ պարէտը,
Երիտասարդ՝ զինուորի պէս է արձակում իւր նետը,
Նետը Թռչում՝ է անընդհատ՝ նպատակին՝ հասանում,
Առանց զոհի, առանց մահու՝ դասալիք դեռին՝ չէ ընկնում։

Իւր լայնալիճ՝ աղեղ լարեց՝ Ճարճատելով՝ հասա լարը,
Նետը ոտեաւ՝ շառաչալին, ուղղվեցաւ՝ կամարը,
Ճայթիւն Հանեց՝ լարի հարուած՝ իւր տեղ դարձեալ դիպչելով,
Եւ ախոյեան՝ դըլորվեցաւ՝ իւր յետին շունչ՝ փըչելով։

Ճարտարութեամբ՝ էին շինում՝ հայերն իւրեանց աղեղը,
Երկու ծայրը՝ կիսաթոյր՝ կամար բռնելոյ տեղը,
Այսպէս են Թնդ՝ արծըւայինք՝ երբ սատանած՝ են Մասիս,
Երբ ծանրաշարժ՝ օդն են Ճղքում՝ պարում Հարաւ՝ և Հիւսիս։

Այս ձև տուեց՝ Համասփիւռը՝ նախկին քաջայ՝ աղեղին,
Որ շրջանակ՝ կիսաթոյր՝ էր անյարմար՝ նետաղին,
Այլ այժմ ուղիղ՝ նըման ցպոյ՝ ունի ձեռին՝ միշտ բռնած,
Թէ չէ կամուր՝ անթիւ սակ՝ լինի ասէն՝ վայր կախած։

Կապարճ կախ կայ՝ միշտ ձախ ասէն, մէջն էլ լիքն է՝ նետերով,
Եւ ասկեայն՝ զինուորը՝ վառէ ամեն զէնքերով,
Զօրագըլուխ՝ չունի կապարճ, կապարճակիր՝ կայ Հետը,
Կապարճակիր՝ և զինակիր՝ բազում անգամ՝ չէ մէկը։

Արագաձիկ՝ աղեղնաւոր՝ միով հիմնիւ՝ բաւական,
Պատարագիկը՝ չի հանգուրժիր՝ նորա առէալ՝ կրկնութեան,
Հինգ վեց հատ նետ՝ միասին է՝ բռամբ հանում՝ կապարձէն,
Բայց մէկ մէկ տալ՝ չէ հասցընում՝ նորա արագ՝ լարածէն։

Երկու պէտք են՝ կապարձակիրք՝ որ չըյամին՝ նետերը,
Նորա բաղկին՝ են երկուսի՝ խելք ու միտք և աչքերը,
Ետու նետը՝ դըրեց լարին, լարն էլ քարշեց՝ ուժգնակի,
Գոդը լցրեց՝ լիճ աղեղան, փըքին Թըռաւ՝ շեշտակի,

Աղեղն ուղղեց՝ իր կոր քամակ, լարը դարձաւ՝ սատկապին,
Օդ շառաչեց՝ ահեղ Ճայթմամբ՝ երբ լար դիպաւ՝ կռնակին,
Նետուղին բուռ մատն ահկի՝ պիտի աղեղն՝ կոթացնէ,
Բայց աղեղան՝ միջնակամար՝ մատին փրկող՝ պաշտպանն է։

Բուռը այն տեղ՝ ապահովէ, լարը մատին՝ չէ հասնում,
Երբ կոր աղեղն՝ ուղղըվեցաւ, և լար իր տեղն՝ է գառնում,
Շըրինդ, Ճայթիւն՝ որ լսվում են՝ կոր քամակին՝ դիպչելից,
Մատն ապահով՝ է հարուածէն, այդ թիւրամեք՝ կամարից։

Աղեղնաւոր՝ իր աջ թեւի՝ ցուցամատին և բութին,
Հագած ունի՝ թաթպանի պէս՝ երկու մատնոց՝ պնդապին,
Որ անդադար՝ լար քարշելում մատանց մաշկը՝ չըմաշվի,
Եւ բորբոքած՝ մէջ պայքարի՝ աջ քաջարուն՝ չըցաւի։

Նոյնպէս ահեակ ցուցամատն՝ ունի հագած՝ մատնապան,
Եւ լինում է՝ կամարձան՝ վեր կամարի՝ աղեղան,
Նորա մէջից՝ է միշտ ուղում լարած նետը՝ թափանցիկ,
Նավաւ բռնում՝ ուղղակ նետը՝ հաստատուն՝ նետաձիգ։

Բութի և միս՝ երկու մատանց՝ մէջն է կամար՝ աղեղան,
Աղեղնաւոր՝ վեց մատով է՝ ընում իր գործ՝ քաջութեան,
Եօթնեորդին է՝ խարխափ նետն, երբ կորնում՝ է աղեղ,
Երբ քարշելում լար եռանկիւն՝ է ձևացնում՝ աջ ուժեղ։

Աղեղն, վերինք՝ համաչափ են՝ երկնանգնաչափ՝ բարձրութեամբ,
Փըքինք պահուած՝ կան ի կապարճ, տրցակ կապմած՝ իրաւութեամբ՝
Երբ մէկ կապարճ՝ պատարկվեցաւ, իսկոյն կերթայ դէպ բանակ,
Ուր աղեամաղն՝ է համակոյտ, և նոցա դէմ՝ կայ պահնակ։

Պարէտ երկու՝ կապարճակրաց՝ նետեր տալով անպատար,
Մուխ դիշերին՝ զօրք Ասորեաց՝ կոտորում էր չարաչար,
Իսկ զօրք Հայոց՝ որ թշնամեաց՝ պատել էին՝ բովանդակ,
Նոյն օրինակ՝ իւրեանց նետից՝ արել էին՝ նըշաւակ։

Այսպէս՝ մինչդեռ՝ ամեն կողմանց՝ նեղված էին Ասորիք,
Պարէտ յանկարծ՝ ջահը ձեռին, և իր հետ Հայք՝ կորովիք,
Յարձակեցաւ՝ անակնկալ՝ դէպ ի բանակ՝ թշնամեաց,
Եւ ասորիք՝ ցրիւ ընկան՝ յերես դաշտաց՝ և հովտաց։


Հըրձիգ արին՝ տաղտապեաց, բորբոք ցոլայ՝ խորանքը,
Հրդեհ փռվեց՝ բանակի մէջ՝ յաճախն դարձան՝ վըրանքը.
Հայք կամեցան՝ յաւար վազել, այլ պարէտ ոչ՝ թուլասրեց,
Մինչ լուսացաւ՝ վաղ առաւօտ, և այդ ի ծուխ՝ թափանցեց։

Նինուէի բարձր՝ պիսանոցէն՝ տեսել էին՝ բոցերը,
Բայց չէին լաւ՝ հասկացել թէ՝ ուսոի էր այն՝ մեծ հուրը.
Այլ երբ ծագեց՝ այդ լուսաբաց, և նայեցան՝ դաշնակցաց,
Իմացան որ՝ մեծ այն հըրդեհ՝ վըրանպել է՝ բանակաց։

Գիշերախառն՝ արշաւանը՝ խռնջեցրել էր՝ Հայերին.
Եւ այս միջոց՝ ժամ բարեպէտ՝ համարեցաւ՝ Ասորին,
Նինուէի մէկ՝ դուռը բացին, դուրս թափվեցան՝ քաջերը,
Մրատն Հայոց՝ բանակի մէջ՝ կըռիւ ընկաւ՝ մէջերը։

Եկեղեցիք, Քարէլացիք՝ որ դաշտք, հովիտք՝ ցրուած կան,
Իմացան որ՝ Նինուէացիք՝ պաշարմանէն՝ դուրս գիզան.
Հաւաքվեցան, գունդ կազմեցին, դէպ ի պայքար՝ վազեցին,
Ասրաքոսին՝ և Արմակին՝ զօրապետ՝ կարգեցին։

Զարմանում են՝ քաջ Ասորիք՝ որ Հայք անտէր՝ թողել են,
Նոցա ամեն՝ հին կողոպուտ, ինքեան բանակ մըտել են,
Ուրախութեամբ էին ասում, մեր աւարը՝ մեզ մընայ,
Եւ Հայերի՝ գիշերային՝ աշխատանքը՝ զուր գընայ։



ՊԱՇՏԱՐՈՒՄՆ ՆԻՆՈՒԷԻ

Հայոց մեծայ՝ մեծ նահապետ՝ պատերազմի տեղեակ էր,
Ո՛չ դաշնակցայ՝ յարձակմանէն, ո՛չ նինուէից՝ ահ ունէր,
Ցառաջ խաղայ՝ իր վրատուօք, նեղ տեղ լծեց Ասորոյ,
Նինուէացիք՝ վանդակաձև՝ սեսան շարաւած՝ գունդք Հայոց։

Կոտորածը՝ սաստկանում էր, Ասորիք չեն՝ հանդուրժում.
կրկին նինուէ՝ յետ մտնելու՝ հնարներ են՝ հայթայթում.
Բայց Հայերն այս՝ չեն թոյլ տալիս, գուներն ամուր փակել են,
Եւ ինքեանք էլ՝ սուսր գնդովք՝ դըրանց առջևն՝ շարվել են։

Երկնաբերձ բարձր՝ յաշտարակայ՝ թափվում են զէնք մահաբեր,
Նետք և քարինք, վիրգք և նիզակք, փքինք, սրլաքք և վէմեր,
Սակայն Հայերն չեն հեռանում՝ քաղաքի մեծ՝ գուներից,
Որ Ասորիք՝ հրնար գանեն՝ փախչիլ Հայոց՝ թըրերից։

Յանկարծ Հայերն՝ մէկ նետ գտան, մագաղաթով թաթըթած,
Իմացան որ՝ դաշնակիցքն են՝ դէպ ի քաղաք՝ այն նետած.
Նոքա այնպէս՝ սովոր էին՝ մէկմէկի հետ՝ միշտ խօսել,
Մխանից խորհուրդ՝ ի միտ առնուլ, և իրեանցն՝ իմացնել։

Նեռը տարան՝ պարէտի մօտ։ Պարէտ քակեց՝ փաթոյթը,
Կամեցաւ շուտ՝ հասկանալ այն՝ անձայն խօսից՝ խորհուրդը,
Բանակի մէջ՝ կային Հայեր, որ Ասորոյ՝ գլխուքեան,
Ըստէպ նինուէ՝ երթևեկով՝ հըմուտ էին՝ բաւական։

Մէկ ծեր գինուոր՝ եկաւ կանգնեց, մատաղաթը ձեռքն առաւ,
Երբ այն կարդաց, միջի իմաստն՝ նահապետին՝ հասկացրաւ,
Որ Սարաքոս՝ այն հընարքով՝ իւր հօրն իմաց՝ է տալիս,
Թէ ինքն շուտ՝ բոլոր զօրքով՝ դէպ՚ի դուռըն՝ է գալիս։

Ուրեմն նինուէ՝ երբ որ տեսնէ՝ թէ Սարաքոս՝ մօտ հասաւ,
Իսկոյն պիտի՝ դուռը բանայ՝ և դուրս գնդով՝ զօրք անբաւ,
Որ խառնըվին՝ Հայերի հետ, երբ դաշնակից՝ մօտ հասնին,
Նոքա կրկին՝ պատերազմէն՝ դառնան քաղաք՝ յետ մըտնին։

Ծիծաղեցաւ՝ պարէտ իսկոյն։ Զօրապետաց ետ հրաման,
Որ դաշնակցաց՝ քաղաք մտնել՝ խափան չըլնին, այլ թոյլ տան.
Սակայն արթուն՝ զգոյշ կենան, որ միայն զօրք՝ մըտանեն,
Իսկ հետերը՝ հաց ու պաշար, կամ յարդ ու խոտ՝ չը տանեն։

Նշանագրեաց՝ ժամանակին՝ Բաբելացիք՝ խիզախմամբ,
Եկբաժանցոց՝ հետ միասին՝ դուռը հասան՝ յարձակմամբ.
Քաղաքապետն լոյն բացուեցաւ, դուրս վազեցան՝ Ասորիք,
Նահապետի՝ ակնարկութեամբ՝ թոյլ տուին հայք՝ քաջարիք։

Գլուխ մի ջին՝ խառնըվեցան՝ երեք բանակք Ասորոց,
Ամենք նինուէ՝ են շտապում՝ փախչիլ ի սրոյ՝ քաջ Հայոց.
Յանկարծ պարէտ՝ հրամայեց, հայք նոցա դէմ վազեցին,
Բեռինք հացի և պաշարոց՝ Հայոց ձեռին՝ մընացին։

Այս տեղ Ճանչցան՝ նինուէացիք՝ որ Հայք նոցա՝ խաբել են.
Սարաքոսը՝ և Արմակը՝ կրկին եկան՝ քաղաքէն.
Որ բեռնակիր՝ գլուխքները՝ Հայոց ձեռքէն՝ խլելով,
Սովալլուկ՝ քաղաքացոց՝ հաց ընձեռուն՝ սուրբով։

Այլ անցեր էր՝ դէպ ժամանակ, հայք ցրուեալ են՝ բեռնեալը,
Բանակի մէջ՝ զետեղվեալ է՝ նոցա պատրաստ՝ մթերքը.
Արքայորդիք՝ որ պաշարի՝ համար դոնէն՝ դուրս եկան,
Միւս անպամ՝ ներս մտանել՝ բնաւ հընար՝ չըզըտան։

Պաշարեցին՝ նոցա յամն՝ կողմանց քաջիկ՝ Հայերը։
Երիւսին ևս՝ ձերբակալեալ՝ կապանք դրին՝ ատեները.
Որս են դառեալ՝ պատրաստական. Պարէտի զէմ՝ հանեցին.
Նահապետի՝ հրամանաւ՝ իբրև պատանիք՝ պահեցին։

Այնուհետև՝ Հայ զօրականք՝ ցըրիւ ընկան՝ դաշտերը,
Առին անթիւ աւև ապուր, ժողովեցին՝ զէնքերը.
Որքան դըրաստ՝ բեռնաւորված՝ կային երկու բանակում,
Բոլորովին՝ աւար ընկան Հայոց զօրաց՝ ձեռներում։

Ուրախ էին Հայոց զինուորք՝ իւրեանց արած՝ յաղթութեամբ,
Տխուր էին՝ Ասինուէացիք՝ քանիպատիկ՝ արամութեամբ,
Երասն հապար՝ մարդ աւելցաւ, հայ և պաշար՝ չունեցած,
Ըրքայորդիք՝ զեր ընկան, կան դիպահոլ արգիլուած։

Սարաքոսի՝ հարսը լսեց՝ իւր փեսային՝ գերութիւն,
Բաբիլոնէն՝ Նինուէ հասաւ՝ հայթայթել առն՝ փրկութիւն,
Մրտաւ Հայոց՝ բանակի մէջ, կանգնեց հանդէպ՝ պարէտին,
Ոտքերն ընկաւ՝ արտասուելով՝ որ արձակէ՝ իւր փեսին։

Պարէտ տուեց՝ պատասխանի, Սարաքոսին՝ չեմ թողնիր,
Բայց և քեզ չեմ՝ նորա կշռին՝ տէպ լինիլ՝ արգիլիր.
Թէ կամենաս՝ կեցիր հետը, Հայք կը լինին՝ հիւրընկալ,
Ազատ կարես՝ եւ մնաս անել, եթէ կամիս՝ երթալ, պալ։

Մատաղաւուրց՝ այն նորահաս՝ երախտապէտ՝ գոհութեամբ,
Փութայ գընալ՝ ամուսնոյն մօտ, և ափսէլ՝ խնդութեամբ.
Գովասանում՝ էր պարէտի՝ դիւցազնական՝ գըթութեան,
Նորա անձին՝ վեհ արութեան, նորա բարուց՝ քաղցրութեան։

Յորժամ լսեց՝ Բաբիլոնի՝ կուսականն՝ թէ Պարէտ,
Իւր դստերն՝ թոյլ՝ է տուել՝ որ կենայ իւր՝ փեսի հետ,
Մէկ լոյս ծագեց՝ նորա սրտին, մոքում՝ մէկ յոյս յղացաւ,
Եկաւ բանակ՝ Հայոց զօրայ, նահապետին՝ յայտնեցաւ։

Գրեց երեան՝ դեռնի վերայ, և գոհութիւն մեծ մատոյց,
Նոր արած՝ անբաւ շընորհ՝ մինչև երկինք՝ բարձրացոյց,
Աղաչեց որ՝ տայ հըրաման՝ որ ինքն էլ իւր՝ դստեր հետ,
Կարողանայ՝ երթևեկել։ Այս շնորհ ևս՝ ետ Պարէտ։

Զարմացել էր՝ Սարաքոսը՝ դեռ Շահմարին՝ տեսնելով,
Անչափ զարմանք՝ կրկին զլաց՝ աներօլ իւր՝ մօտ գալով,
Ասաց մեզ չէր՝ բընաւ կարիք՝ Հայերի դէմ՝ մարտնչիլ,
Թէ յոյց տայինք՝ խոնարհութիւն, չէինք այսպէս՝ կորնչիլ։

Աներն ասաց՝ մի վըհատիր, դեռ ևս խաղաւ՝ կորած չենք.
Ես մէկ երթամ՝ նինուէ մտնեմ, մէկ հնար կու՝ մըտածենք.
Բարեմիտ ոք՝ է Պարէտը, աղաչանաց՝ կը լսէ,
Յաղթող նա է՝ մենք յաղթըված, պիտի լսենք՝ ինչ ասէ։

Ա՛յն երեկոյ՝ Շահմար և Հայրն՝ մըտան քաղաք յայտնապէս,
Նոցա աչքին՝ երևեցաւ՝ գառնակերծ՝ աստղերս.
Սոճի ընկել էր՝ քաղաքի մէջ, կոտրըտում՝ են՝ չարաչար՝,
Քաղցածութեամբ՝ տանջըվելով՝ աղքատք, հարուստք՝ հաւասար։

Շահմար ասաց. Հայրիկ՝ հարսն իմ՝ Մելքատեսոց աղջկայ,
Իմ մտա նինուէ՝ չունի նըշան՝ հանդիսավէն՝ պշխոյի.
Տեսնենք ինչպէս՝ կընդունի ինձ՝ իմ սկեսրայր՝ թագաւոր,
Մինչ իմ փեսայն՝ թագաժառանգ՝ կայ բանտարկել՝ մենաւոր։

Հայրը տուեց՝ պատասխանի. եթէ արքայն՝ ինձ լըսէր,
Այս պատերազմ՝ չէր պրպուվիր, նինուէ չէր պայր՝ սուր սուսեր.
Շատ ժամանակ՝ խաղաղ էինք, Պարէտ էր մեզ՝ բարեկամ,
Երկու ազգաց՝ մէջ այս շրփոթ՝ ձըղեց մէկ կին՝ անզգամ։

Սա Հայաստան՝ էր պնայել՝ աղքատութեամբ՝ բընակել,
Շամրիկ տիկնոջ՝ յաջողել է՝ տուրք առնելով՝ տեսանել,
Եկաւ Նինուէ՝ և քարոզեց՝ հրապարակաւ՝ թէ Տիկին,
Երկյոզիս է, և ժամանակ՝ է արդ վանել՝ Պարէտին։

Մեր նախարարք՝ միաբերան՝ խորհուրդ տուին՝ արշաւել,
Որովհետև՝ Պարէտ չունի՝ հընար երկրին՝ պաշտպանել.
Կինը յղի՝ է ծանրացած, և պատերազմ՝ չի դուրս գար,
Առանց տիկնոջ՝ նոհապետն էլ՝ ուրեք երբեք՝ չի երթար։

Ես ի միայն՝ ընդդէմ գարձայ՝ այս մահաբեր՝ խորհուրդին.
Եւ ասացի՝ թէ մի դիպչիք՝ խաղաղասէր՝ Պարէտին.
Նորան Շամրիկ՝ կը հանէ մարտ, ինքը տանը՝ կը ճնայ,
Զմերկացնենք՝ նանիր մեր դէմ՝ միշտ յաղթակիր՝ սուր նորա։

Իմ կարծիքը՝ անպտուղ էին, ասպատակէց՝ Սարաքոս,
Հայաստանի՝ սահմանապլուխք՝ տեսան արիւն յորդահոս.
Գերի, աւար՝ շատ վարեցին, բայց զարմեցրին՝ Պարէտին,
Ահա Պարէտ՝ մեր առջևն է, ոչ են պարծանք՝ հրապարակին։

Այս խօսելով՝ հասան գարպաս։ Այս տեղ արքայն՝ սրդալի,
Նստել էր իւր՝ աւագանւոյ՝ ժողովրդովը՝ յատենի.
Խորհուրդ էին՝ անում ինչպէս՝ կարնան հաճել՝ Պարէտին,
Որ շատ ոսկի՝ արծաթ առնու՝ փրկանք նեղեալ՝ քաղաքին։

Երբ ներս մտաւ՝ կուսակալը, ամենեքեան՝ զարմացան,
Արքայն տեսաւ՝ իւր նոր հարսին՝ հագած զգեստ՝ այրուձեան,
Արտաստաւլիր, կականալիր, մէկմէկու զրկեցին,
Նոցա տըխուր՝ զրկածութեանց՝ էր վըկայ մած՝ թագուհին։

Միահաղոյն՝ խորհուրդ նստան՝ արքայական՝ դիւանում,
Բարիլոնի՝ կուսակալը՝ Պարէտի գործքն՝ էր պատմում.
Անանջ էին՝ գընում աւազք, ու զարմացմամբ լըսում են,
Որ Սարաքոս և Արմանիը՝ Հայոց ձեռին՝ անգորը են։

Թագաւորը՝ հըրամայեց՝ որ հարսն, և հայրն՝ կուսակալ,
Առաւօտը՝ բանակ դառնան, նահապետին վրկանք տալ.
Եւ խոստանալ՝ ամ ըստ ամէ՝ հատուցանել Նինուէից,
Հազար քանքար՝ մաքուր ոսկւոյ, բայ մարգամէիւ՝ հարկերից։

Կուսակալը՝ և իր դուստրը՝ կատարեցին՝ այն վէհ կամք,
Միւս առաւօտ՝ Նինուէից դուրս՝ եկան, հասան՝ Հայ բանակ.
Նահապետի՝ առեան ելան, յայտնեցին բանք՝ արքայի,
Մըտածելոյ՝ ժամ պահանջեց, պարէտ երկու, կամ օր մի։

Երբ ժամադրեալ՝ այն օր հասաւ, կուսակալին՝ կանչեցին,
Պարէտ ասաց. գնա, ասա՝ քո թագաւոր՝ առաքչին,
Որ ես յօժար՝ եմ ընդունիլ՝ քո առարկած՝ պայմանը,
Կը հաշտուիմ՝ Նինուէի հետ, կը դառնամ իմ՝ աշխարհը։

Գընաց դեսպան՝ կուսակալը՝ իւր դստեր հետ՝ ’ի Նինուէ,
Ուրախացան՝ ամենեքեան, երբ լըսեցին՝ նոցանէ,
Թէ նահապետ՝ Հայաստանի պիտի առնու՝ հարկերը,
Խաղաղութեամբ՝ պիտի դառնայ՝ իւր հայրենի՝ երկիրը։

Բայց յանկարծ բանն՝ փոփոխվեցաւ, շըփոթ նորին՝ բարձրացաւ,
Թագաւորի՝ երրորդ որդին՝ անթիւ զօրօք՝ մօտ հասաւ.
Սա գնացել՝ էր դէպ Վրկան, և այն տեղ զօրք ժողովել,
Եւ այն զօրուն՝ դէպ ի Նինուէ՝ քաղաք յորդան՝ է տուել։

Երբ լսացան՝ Նինուէացիք՝ եթէ հասաւ՝ օգնութիւն,
Մուսացան սոքը՝ կարսաական, անպատեցին՝ հաշտութիւն,
Պէս պէս հընարք՝ գործ ածեցին նահապետին՝ խաբխըբել,
Որ կարենան՝ Սարաքոսին՝ և Արմակին՝ ազատել։

Հազարաւոր՝ զօրք դուրս եկան՝ սովալլուկ՝ Նինուէից,
Եկան ընկան՝ պարէտի մօտ, որ անդ ապրին՝ հայկալից,
Բայց երբ մարտը՝ բորբոքվեցաւ, սոքա ևս սուր հանեցին,
Եւ բանտարկեալ՝ արքայորդւոյ՝ խըլեալ, կորզել Ջանացին։

Այլ զօրք Հայոց՝ թէպէտ ունէր՝ յերկուց կողմանց՝ թշնամի,
Ամենևին՝ չվհատեց, մաշեց ի սուր՝ սուսերի,
Աղբայրսիրին՝ բերած զօրքով կրկին վրէժն յետ դարձաւ,
Վճռեալ նորոյ իւր պաշարման սովատանջին մատնեցաւ։



ԻԱ

ՀԱՅԿԱԶ ԵՒ ՅԱՓԵՏԱԿՈՒԹԻՒՆՆ

Նինուէացոց՝ թագաւորը՝ որ անուն էր Քսեաքսեր,
Եւ Սուսարիս՝ արքայէն յետ՝ այն բարձր աթոռ՝ բազմել էր,
Իմանալով՝ որ իւր որդիք՝ Հայոց ձեռին՝ հանգիստ են,
Ցոյս յղեցաւ՝ թէ չորս որդիք՝ մէկ օդնութիւն՝ կը բերեն։

Կուսակալի՝ և իւր հարսին՝ միջնորդութիւնն՝ անարգեց,
Ժողովրդեան՝ աղաղակի՝ դէմ իւր ականջ՝ խըլացրեց.
Հըրամայեց՝ որ պարսպաց՝ աշտարակէն՝ բուրգերէն,
Հայերու դէմ՝ սիւ և պիշեր՝ նետք և քարինք՝ արձակեն։

Զուռնէր պարէա՝ որմակործան՝ մեքենաներ և զէնքեր,
Հարկ հաւարեց՝ նոր մըտածել՝ այդպէս մեծ մեծ՝ գործիքներ,
Ըղջակայից՝ հեռի մայրեաց՝ հըրամայեց՝ փայտ կըտրել,
Եւ ապառաժ՝ լեռնոտներից՝ խոշոր հատոր՝ քար կըրել։

Նինուէի չորս՝ ըղջապատը՝ հնչեց մուրճն ու՝ տապարը,
Տաշվում կոփվում էին անտաշ՝ ամուր փայտը և քարը.
Հարվեցան խոյք՝ և բաբաններ, շուրջանակի՝ քաղաքին,
Եւ ձեռն արկին՝ հարուած շանթել՝ հաստակառոյց՝ պարսպին։

Ինչ են կարող՝ այն պարսպաց՝ վրնաս բերել՝ մեքենայք,
Ի զուր, նանիր՝ են չարչարվամ՝ քարով, փայտով՝ խղճուկ հայք,
Ան պատուարքը՝ որ կերտել էր՝ նինոս իւր մեծ՝ զօրութեամբ,
Երբէք խախտել՝ չկայր հնար՝ մարդկան ուժոյ՝ բռնութեամբ։

Նախ որ բարձր էր՝ շատ աւելի՝ Բաբելոնի՝ պարիսպից,
Տիգրիս գետը՝ անցանելով՝ կիսում՝ նըրան՝ մէջ տեղից,
Պարիսպների՝ լայնութիւնը, հաստութիւնը, թանձրութեան,
Էր համեմատ՝ և հաւասար՝ իւր հաստահիմն՝ մեծութեան։

Երեք չորս կառք՝ կարող էին՝ հորա վերայ՝ ընդարձակ,
Դէմ առ դէմ գալ՝ պահպանելով՝ ձիարշաւն՝ համարձակ,
Առաջ այս տեղ՝ թագաւորեց՝ Շամիրամ կին մեծապործ,
Այս պարիսպքն նա ամրացոյց, այն տեղ հիմնեց՝ իւր մեծ գործ։

Ցետոյ յորժամ՝ միապետեց՝ ատելութեամբ՝ նինոսի,
Բաբիլոնը՝ հաւասարեց՝ գեղեցկութեամբ՝ նինուէի,
Այլ նինուասայ՝ թագաւորքն՝ Բաբիլոնին՝ կասեցոյց,
Եւ առաջին՝ մայրաքաղաքն՝ ամեն կողմանց՝ բարձրացոյց։

Աշխարհասփիւռ՝ այս տէրութիւն մէկ քաղաք էր՝ զարդարում,
Ասորեստան՝ ինչ այժ ունէր՝ բոլոր նինուէ՝ էր բերում,
Ոչ թէ միայն Բաբիլոնի, Արմաւիրի՝ առուտուր,
Այլ և հնդկաց, Եգիպտոսի՝ վաճառք այն տեղ՝ ժողովուր։

Որքան մեծ մեծ՝ քաղաքք կային՝ տիեզերաց՝ երեսին,
Ո՛չ մեծութեամբ, ո՛չ բազմութեամբ՝ հասանէին՝ նինուէին,
Ո՛չ թէ միայն՝ բընակչօք էր՝ նա ծախսյած՝ և փարթամ,
Երկոտասան՝ բիւր զօրք կային՝ անդ բանակած յարաժամ։

Այս քաղաքն էր՝ ուզում առնուլ՝ պարէտ գինուց՝ զօրութեամբ,
Եւ այս տեղ հայք՝ էին կռվում՝ իրանց ուժոյ՝ բռնութեամբ,
Դեռ ամիս մի՝ չէր լըրացել՝ նորա խռպատ՝ պաշարման,
Որ Պարէտին՝ Արմաւիրէն՝ հասաւ համբաւ և գեսպան։

Դեսպանն է մեր՝ ծանօթն Արթակ, հակառակորդ՝ Վստամայ,
Որ զօրավար՝ էր մի կ գնդի՝ ընդ դրօշակաւ՝ Արամայ,
Սորան պարէտ՝ ի նինուէէ՝ ուղարկել էր՝ Արմաւիր,
Որ իմաց տայ՝ թէ Ասորոյ՝ պատել է ինչ՝ արհաւիր։

Արթակ գնացել՝ է Արմաւիր, Շամրիկ տիկնոջ՝ պատմել է,
Թէ նահապետ՝ ինչ դիպուածով՝ Սարաքոսին՝ բռնել է,
Եւ թէ ինչպէս՝ նորա հարսըն՝ երթ եկել է՝ բանակը,
Նորան սիրով՝ ընդունել է, և մեծարել՝ պարէտը։

Այծ կասկածի՝ է Շամրիկի՝ սիրտը ընկել՝ այս խօսքէն,
Ան գեռաւուրց՝ հարսի համար՝ հարց փորձ արել՝ Արթակէն,
Արթակ այնպէս՝ է հասկացրել՝ թէ այն հարսը՝ ամեն օր,
Նահապետի՝ խորանումն է՝ անցուցանում՝ կեանք բոլոր։

Շամրիկ ձանփայ՝ է կամեցել՝ դէպ ի Նինուէ՝ երթալ,
Բայց վերահաս՝ երկանց ցաւն է՝ նորա խորհուրդ՝ խափանել,
Թէպէտ ողջամբ՝ ազատուել է՝ աշխարհ բերել՝ զաւակըն,
Այլ իրեն շատ՝ նեղացրել է՝ ծննդական՝ երկունքըն։

Արթակ ծածկեց՝ նահապետէն՝ այս ամենայն՝ հանդամանք,
Միայն ասաց, քո աչքի լոյս, տիկին ծրնաւ մանչ զաւակ,
Պարէտ խնդոյն՝ հրամայեց՝ իւր մըտերիմ՝ Վստամին,
Որ շուտ հասնի՝ մայրաքաղաք ուշ դընել իւր պաշտօնին։

Վստամ դարձաւ՝ յետ Արմաւիր, և նորածնին՝ մօտն առաւ,
Իւր նորահարսն՝ ամուսնին՝ այն երեխի՝ մայր արաւ,
Վստամի կինն՝ առնաւ. էր՝ դեռաբուսիկ՝ Զաւանին,
Վստամ ինքնին՝ դաստիարակ՝ պիտի դառնայր՝ տղային։

Յորժամ Վստամ՝ յուղի անկաւ՝ դէպ յԱրմաւիր՝ յառաջել,
Պարէտ ղրկեց՝ Արթակին և՝ Շամրիկ տիկնոջ՝ ուղեկցել,
Որ երբ տիկին՝ առողջութեամբ՝ իւր քաւաւունք՝ անց կացնէ,
Առաջվան պէս՝ թող գայ բանակ, հայոց գործը, տեսանէ։

Արբակ դարձաւ՝ դէպ Արմաւիր, տիկնոջ հասոյց՝ պատգամը,
Տիկին հաճեայ՝ խնդոյն չուել, այլ այն տեղ չէր՝ վաստամը,
Նա առել էր՝ Զասան մանուկն, և հեռացել՝ իւր կալուած,
Ուր աւելի օդն էր՝ առողջ, երկիր բարեօք՝ էր լցուած:

Խորհուրդ արաւ՝ Արբակի հետ, երթամ արդեօք, թէ չերթամ,
Եւ չերթալով՝ առան լինիմ՝ կոխած տիրոջն՝ իմ պատգամ,
Եւ իրաւունք՝ դնէ պարէտ՝ ինձ կամապաշտ՝ ձանաչել,
Այսքան ամայ՝ մտերմութիւնս՝ ունայն առթիւ՝ նաներացնել:

Տիկին՝ ասայ, այս գաւաճան, ես քո մօտ եմ՝ զարդացել,
Քո երախտիք՝ շատ անգամ եմ՝ նեղութեան մէջ՝ վայելել,
Ես յօժար եմ՝ այսօր մեռնիլ, քան քեզ տեսնել՝ անարդված,
Ինչի պիտէր՝ նինուէ լինէր՝ այսքան երկար՝ պաշարված:

Մինչ պարէտ՝ թէ ուղենար՝ նինուէի որմ՝ կործանել,
Պիտէր բաղնատ՝ կամ մանզղիոն՝ նորա դիմաց գործ պընել,
Ինչ է պահել՝ Հայկայ նետը, ինչի չէ այն ձեռքն առնում,
Ինչի ի զուր՝ է մեզ տանջում, և ժամանակ՝ կորցընում:

Բաբիլոնի՝ նորահարսը նորա խելքը՝ կերել է,
Նահապետի՝ սրտի մէջէն՝ քո սէրն խապար՝ կտրել է,
Դու այնպէս կին՝ ես աշխարքում, որ քո տեղ այլ՝ ոք նստի,
Ձեմ հասկանում՝ ինչ է արդեօք՝ փափագում սիրտ՝ պարէտի:

Այս մինչ Արբակ՝ բարբանջում էր, Շամրիկ յանկարծ՝ միտք բերեց,
Որ նահապետ՝ Հայկայ նետը՝ իւր հետ ի մարտ՝ չըտարեց.
Փառնակ որդւոյն՝ կանչեց իւր մօտ, տուեց ընդան այն նետը,
Որ նա հասցնէ՝ իւր հօր ձեռքը, Արբակն առած՝ իւր հետը:

Շփոթված էր՝ Շամրիկ տիկին, չը մտածեց՝ բաւական,
Թէ կարելի՝ էր Արբակին՝ յանձնել այն իր՝ վերնական,
Վաստահացաւ՝ իւր որդեկին, բայց որդին էր՝ պատանի.
Արբակ ներկժոտ և խորամանկ, տեսնենք ինչպէս կը տանի:

Տիզաչափ նեռ՝ մէկ առուծի մորթիւն մէջ՝ կայր փաթթած,
Փառնակ այն զէն՝ պիշեր ցերեկ՝ ունէր ձեռի մէջ բռնած,
Երկու ծառայք՝ Հաւատարիմ՝ Փառնակի հետ՝ ուղարկեց,
Իւր հերթալու՝ պատճառները՝ որպոյ բերնով՝ ապսպրեց։

Զասայ՝ թէ հայրդ՝ ինձ թողել է, այլ կնոջ է՝ սէր տալ,
Որովհետև՝ ոչ թէ միայն՝ ինքնին չէր այն՝ ստուգել,
Այլ և բնաւ՝ հաւատացած՝ չէր անալի՝ այն խօսքին,
Եւ չարախօս, և դատճան՝ էր ճանաչել՝ Արբակին։

Այլ պատուիրեց՝ որ նահապետ՝ երբ ստանայ՝ այն նետը,
Իսկոյն երթայ՝ Նինուէի դէմ՝ նետն ևս առած՝ իւր հետը,
Կործանէ հաստ պարիսպները, նուաճէ չար թշնամեայ,
Եւ շուտ դառնայ՝ մայրաքաղաք՝ յայցելութիւն՝ հայրենեայ։

Ցուղի ընկան՝ Փառնակ, Արբակ, Հաւատարիմ ուղեկցօք,
Երեք չորս օր՝ անդուլ, անքուն՝ վազում էին՝ արտօրնօք,
Հինգերորդ օրն՝ Փառնակ զգայ՝ մէկ սաստիկ ցաւ զլխումը,
Ստիպվեցան՝ հանգիստ առնուլ՝ մէկ մարդաշատ գեղումը։

Այլ այս գիւղ կայր՝ Խլաթ Բաղեշ՝ քաղաքներուն միջօրում,
Եւ նորա մէջ՝ հրմուտ բժիշկ, կամ գեղօրայք՝ չեն պահվում,
Երկու ծառայք՝ մէկը Բաղեշ, մէկն էլ Խլաթ զրնային,
Բժիշկ բերել։ Փառնակ՝ Արբակ այն գեղ մէնակ՝ մընային։

Մինչ Փառնակը՝ մեռածի պէս՝ խորին քնով՝ քնած էր,
Արբակ իսկոյն՝ գլուխ բերեց, ինչ վաղ մաքսում՝ նիւթած էր,
Փոխեց Հայկայ նետը՝ ծածուկ, տեղը գրեց՝ ուրիշ նետ,
Իսկ այն նետ՝ իւր կալուածոյ՝ բընակչաց մօա՝ աւանդ եւս։

Զը կարծէք թէ՝ այս գիպուած էր՝ այսպէս յաջող՝ պատահել,
Ոչ։ Այլ Արբակ՝ կարողացաւ՝ ամենայն ինչ՝ տրամադրել,
Նա սիրահար՝ էր Շամբիկին, սիրահար էր և փառաց,
Միտքը գրեր՝ էր նենգութեամբ՝ սիրապետել՝ հայրենեաց։

Իմանում էր՝ որ ծչ գահին՝ կը յաջողէ՝ հասանել,
Ո՛չ Շամրիկի՝ սրտի մէջը՝ առանց նեռի՝ մուտ գտնել,
Այն ևս էր լաւ՝ տեղեկացել, որ նեռ կայ մօտ Շամրիկի,
Պարէտ իւր հետ՝ չէր այն տարել՝ ի պաշարումն Նինուէի։

Երբակ շատ լաւ՝ էր հասկանում՝ որ Պարէտ ևս՝ այն մարդ չէ։
Որ նորհարսին՝ Սարաքոսի՝ իւր սրտի սէրն՝ ուղերձէ,
Նա մարդասէր՝ էր գթառատ, խընայում էր՝ այն այրուն,
Եւ չէր թողնում՝ կարօտ մընալ՝ իւր նոր փեսայ՝ ամուսնոյն։

Բայց ըստ որում՝ քաջ հասու էր՝ Շամրիկ տիկնոջ՝ բնութեան,
Որ իւր մարդու՝ վերէն դողում՝ էր երէխի՝ համանման,
Նորա սրտի՝ մէջ սերմանեց՝ որոմն ընդդէմ՝ ամուսնոյն,
Պարէտի դէմ՝ դերեց նորա՝ դիւցազնական ձիրք հոգւոյն։

Ընհատատոյ՝ թէպէտ Շամրիկ, բայց շփոթն ևս՝ փոքր ինչ չէր.
Շամրիկ ինքնին՝ երբ չերևոյ, Պարէտ պիտի՝ չերևէր,
Արբակ այնպէս՝ հատատոյժ՝ որ նա նորան՝ տանում է,
Իւր սեղեխի՝ ձեռքը մատնել, Հայաստանէն՝ հանում է։

Ցնոց իրրև՝ մեղադրելով՝ նեռի խօսքը՝ բաց արեց,
Շամրիկ տիկնոջ՝ վրդովանքը՝ նորա բաղձանք՝ կատարեց.
Տիկինն ուզեց՝ նահապետին՝ նեռը շուտով՝ հասցընել,
Ընհատատոյ՝ որ՝ առիթ տուեց՝ յաւխաեան այն՝ կորցընել։

Շամրիկ նեռը՝ ուղարկելով՝ կամէր յիշել՝ Պարէտին,
Ամեն հին անցք, և իւր աղերս, որ սանձ դրնէ՝ իւր սրտին,
Բայց Արբակը՝ նպատակին՝ առաջ փութաց՝ ժամանել,
Քան Պարէտ իւր՝ տիկնոջ խօսքին՝ կարաց մըտօք հասանել։

Մըտաւ Փառնակ՝ իւր հօր բանակ, տուեց փոխուած՝ սուտ նեռը,
Բայց հանդամանք՝ փոխուել էին, նեղի մէջ չէր՝ Պարէտը,
Առաւ նեռը՝ պահեց իւր մօտ, Փառնակին յետ՝ չդարձոյց,
Փառնակ քաջ էր՝ Հայկատուր մէջ, ձեռք Հայոց շատ զօրացոյց։

Այլ Արքային՝ կրկին ղրկեց, որ Շամրիկին՝ ուղեկցի,
Ցանկանում էր՝ որ Նինուէի՝ նուաճումն նա տեսնի.
Այս պատճառաւ՝ պատուէր տուեց՝ որ իւր կողմէն՝ աղաչէ,
Եւ նորա սիրտն՝ համոզելոյ՝ ամեն հընար՝ գործ ածէ։



ՍՈՎԱՏԱՑԱՀ Ի ՆԻՆՈՒԷ

Մոլեղնաբար՝ կատաղում էր՝ օր ըստ օրէ՝ սովամահ,
Մինչև անդամ՝ թագաւորի՝ ապարանքում՝ ընկաւ ահ.
Վախենում են՝ թէ ժողովուրդ՝ կ'ապստամբին, ոսոխ կ'ելլեն,
Եւ քաղաքը՝ իւր ճոխութեամբ՝ Հայոց աւար կը մատնեն:

Միակ դուստրն՝ Քսենքսերի՝ Սինթայ դշխոյն գեղազան,
Իւր գլուխը՝ կշիռ դրեց, դառնալ փրկանք՝ բազմութեան,
Հրամայեց՝ որ քաղցամահ՝ մեռելների՝ դիակը,
Պարիսպներից՝ դուրս գլորեն՝ դէպ 'ի Հայոց՝ բանակը:

Տեսան Հայերն, և փութացան՝ նահապետին՝ իմաց տալ.
Պարէտ իսկոյն՝ հրամայեց՝ այն թիակունք՝ թաղել տալ.
Այլ ինքն ընկաւ՝ մրտածմանց մէջ՝ թէ արդեօք ինչ՝ հընար կայ,
Որ այս սաստիկ՝ պատուհասին՝ այլ բարեձև՝ մէկ ելք տայ:

Մինչդեռ պարէտ՝ այս վարանման՝ մէջ կեցել էր՝ ընկղմած,
Յանկարծ առջևն՝ երկու հատ կին՝ տեսաւ գեանին՝ ծունր չոքած,
Մէկին ձանչցաւ, որովհետև՝ աւաջ ևս՝ տեսել էր,
Սարաքոսի՝ այրի նոր հարսն՝ կուսակալի՝ դուստրն էր:

Իսկ երկրորդն՝ անծանօթ էր, քողածածուկ՝ երեսն էլ,
Պարէտ խակոյն՝ Հըրամայեց՝ բարձեր բերել, բազմեցնել.
Անծանօթը՝ բացեց բերանն, ասաց. Պարէ՛տ՝ քա՛ջ արանց,
Ֆաջայոյս եմ՝ որ քո երակք՝ ունին արիւն՝ վեհազանց։

Դու մարանչուա՝ ես հօրս դէմ՝ օրինաւոր՝ պատճառով,
Վասն այն եկել՝ պաշարել ես՝ Նինուէ քաղաք՝ քո զօրքով,
Ֆանի անգամ՝ պատերազմաւ՝ դիմամարտիդ՝ յաղթեցիր,
Երկու եղբարցս, որոց մէկն է՝ Շահմարի այրն՝ գերեցիր։

Քո քաջարի՝ զօրաց մատանց՝ յաջողութիւն՝ փայլած է,
Ամեն ուրեք՝ յաղթութիւնը՝ քո զինուց հետ՝ հիւսված է.
Արժան է որ՝ Նինուէն առնուս, հաստուցանես՝ պատիժը,
Արիւնկըզակ՝ Ասորիք տան՝ իւրեանց չարեաց՝ վըրէժը։

Մենք լաւ գիտենք՝ որ թէ առնուս՝ Նինուէն այսօր՝ բռնութեամբ,
Նորա անմեղ՝ բընակչաց հետ՝ պիտի վարվիս՝ գըթութեամբ,
Միայն նոքա՝ պետի կըրեն՝ քո տասերի պատուհաս,
Ում ձեռին որ՝ տուրը տեսնես, կամ կասկած ինչ ունենաս։

Իսկ խաժամուժ՝ տոսկականքը, պիտի շընորհ՝ վայելեն,
Որովհետև՝ նոքա քո դէմ՝ չեն բընաւին՝ հանել զէն.
կարելի է՝ թէ նոցա մէջ՝ հազարաւորք՝ կան այժմ էլ,
Որ քո գալուստ՝ իւրեանց կենաց՝ փրկութիւն են՝ համարել։

Ձեմ կարծում որ՝ քո աչքումը՝ ամենեքեան՝ մէկ լինին,
Յանցաւորի՝ հետ հաւասար՝ գառապարտես՝ անմեղին,
Կամ կամենաս՝ որ անխըտիր՝ քո բարկութեան՝ զոհ գառնան,
Ինպէս անզօրք՝ որ քեզ երբէք՝ վընաս տալ ոչ՝ կարենան։

Այս ամենայն՝ բարի, գթած, քո մարդասէր՝ կամքերը,
Զուր են անցնում, չեն հասանում՝ նպատակին՝ գործքերը,
Գալցրիկ հոգւոյդ՝ յանկութեան դէմ՝ միայն անմեղք են կըրում,
Ի՛նչ քո արդար՝ բարկութենէն՝ պատուհասներ՝ են բղխում։

Տեսար անշունչ՝ դիակները, այն ես էի՝ դուրս ձըգել,
Նոքա ամենք՝ քաղցած անհայ՝ սովից էին՝ վըտանգել.
Հարյուր քանի՝ դիակունք կան, մինչ այս վայրկեան ցած ձգած,
Երկու այնքան՝ էլ քաղաքի՝ պողոտայք կան՝ պատկոտած:

Մինչ երեկոյ՝ նոցա թիւը՝ կատաղաբար՝ կ'աւելնայ,
Սովի առջև՝ աղքատութիւն՝ ինչոմէ պիտի՝ դիմանայ,
Քո կամք այն է՝ որ Նինուէի՝ անմեղ մարդիկ՝ մեռանին,
Եթէ այն է, ըսկսել են, թէզ որ այնպէս՝ կատարվին:

Ապա եթէ՝ պիտի դթաս, աղքատաց կեանք՝ պարգևես,
Կարօտելոց՝ ողորմութեան, օգնութեան աչ կարկառես,
Մահու ժանեաց՝ հաղարաւոր՝ և բիւրաւոր՝ կորչես զոհ,
Անզօր, անտէր՝ աղքատներուն՝ քո խընամքէն՝ առնես գոհ:

Ուրեմն բանց՝ քո գըթութեամբ՝ գողտրիկ հոգւոյդ՝ գանները,
Ա'ռ աղքատաց՝ կենաց մաշող՝ անատանելի՝ բեռները,
Հայ տուր նոցա՝ որ չըմեռնին՝ սովատանջ չար՝ վախճանով,
Կեանք տուր նոցա, կեանք պարգևէ՝ քո մէկ քաղցրիկ հրամանով:

Մի կարծեր թէ՝ թագաւորը՝ կամ իւր իշխանք՝ քաղցած են,
Կամ զօրաց գունդք՝ սովի երկիւղ կամ ունին կամ քաշած են.
Լիքն են նոցա՝ համբարանոցք, ոչ ծախսում են, ոչ բաշխում.
Ա՛յս գառն օրը՝ միայն անտէր՝ աղքատներն են՝ զոհ գընում:

Քաջ նահապետ՝ թէ կամենաս՝ ինձ ևս եղբարցդ՝ հետ պահէ,
Եւ քաղաքի՝ մէջ լրտեսներ՝ ինչպէս պարտ է՝ ուղարկէ,
Թող ամեն ինչ՝ ստուգապէս՝ աչքով տեսնեն՝ իմանան,
Եւ քեզ ճշգրիտ՝ ճշմարտութեամբ՝ և մանրամասն՝ հաշիւ տան:

Ես գաւառիս՝ չեմ ծընողիս, բայց աղքատաց՝ եմ խղճում,
Ես իւր խաբուած՝ խախտած յուսով բիւրաւոր զոհ է բերում,
Գիտէ որ չէ՝ հընար առնուլ զօրօք Նինուէ՝ քաղաքը,
Եւ սովի ճանկ՝ չեն մատնվիր՝ ոչ իւր զինուորք, ոչ ինքը:

Այս պատճառաւ՝ դըրունք ադխել, փակուել է մէջ՝ քաղաքին,
Պատգամաւոր՝ չէ ուղարկում՝ որ հին դաշինք՝ նորոգին.
Ցոյս ունի Թէ՝ երբոր եղբայրս՝ կրկին անգամ՝ յետ կու գայ,
Եւ քաղաքի՝ մէջ պաշարուած՝ մարդոց նպաստ ինչ կու տայ։

Այլ մեր խելքը՝ վաղ է հասել, որ ըսւր է յոյս՝ իմ հօրը,
Հայոց զօրաց՝ վանել ուչ է՝ գործ իմ մէկ իսկ՝ եղբօրը.
Զօրք կը բերեն, կռիւ կըլինի, քաղաքը չի՝ ազատվիր,
Պաշարումն կերկարանայ, խղճոց վիճակ՝ չի փոխվիր։

Պարէտ որ մեծ՝ ուշադրութեամբ՝ ականջ էր դնում՝ աղջկան,
Երբ նա իւր խօսք՝ գաղտնեցուց, տուեց նորան՝ պատասխան.
Դու ձշմարիտ՝ ես հասկացել, որ խղճոց դէմ՝ չունիմ մարտ,
Իմ թշնամի՝ է որ կանգնի՝ տուր ’ի ձեռին՝ դիմամարտ։

Փոյթ չէ, հայրդ՝ թող սպասէ՝ ամեն կողմանց նըպաստից,
Թող միշտ ցանկայ՝ արիւնազանդ՝ պատերազմայ և մարտից,
Ես աղքատայ՝ չեմ կամենում՝ կորուստ մատնել՝ սովամահ,
Սով թող անցնի, իմ թշնամւոյ՝ դէմ դեռ շատ է՝ սըրոյ ահ։

Այս որ ասաց՝ հըրամայեց՝ տանիլ ’ի դուռն՝ քաղաքի,
Շատ սայլերով՝ հաց և ուտեստ՝ բեռնաւորած՝ ծանրագին,
Զդուշանալ՝ որ մի միայն՝ աղքատք առնուն՝ չըքաւոր,
Որոց միայն՝ ակնարկէ տալ՝ այս օրհորդ՝ գեղաւոր։

Մինչ բեռնակիրք՝ կըրում էին՝ հաց ’ի դուռն՝ քաղաքին,
Սինթայ խնդրեց՝ նահապետէն՝ տալ հրաման՝ երկուքին,
Երթալ տեսնել՝ դերի եղբարց՝ որ կան պահած բանակում,
Ցեսոյ դառնալ՝ հաց բաժնելը՝ ընել աչքով՝ մեծ դէնում։

Սինթայ և Հարան՝ գնային այն տեղ՝ ուր Սարաքոս և Արման,
Խորանի մէջ՝ առանձնացած՝ խօսում էին՝ միայնակ,
Երբ Սինթայի՝ գալը տեսան՝ զարմանալով հիացան,
Եւ երկուսն էլ՝ միաբերան՝ հարցանելով խօսեցան։

Ինչպէս երբ՝ գուրս քաղաքէն, մը հայրն ինչպէս ձեզ թողեց,
Ձեզ ով հասոյց՝ այս տաղաւար, ձանապարհը՝ ով ուղղեց,
Ինչպէս կարցաք՝ կրկին մտնել, երկու հոգի՝ այս բանակ,
Հազարաւոր՝ զօրաց մէջէն՝ ով ձեզ անցոյց՝ բարեյաջակ։

Սինեթայ տուեց՝ պատասխանի, մեզ գուրս հանել՝ նեղութիւն,
Մինչև այսօր՝ քաղաք ուստէք՝ չը ըստայաւ՝ օգնութիւն,
Կատաղել է՝ սուլամահը, քաղց անթիւ է՝ կոտորում,
Հոգիս այսպէս՝ թշուառութեանց՝ հանդուրժել ինչ՝ չէ կարում։

Թէ հօրս, թէ մօրս՝ յայտնեցի իմ՝ սրտի ծածուկ՝ խորհուրդը,
Աւլ հարսիս՝ մրտայ բանակ, ինձ ընդունեց՝ պարէտը,
Ողրմեցաւ՝ կարօտելոց, դէպ՝ ի դուռն հայ՝ ուղարկեց,
Ընքաւորաց՝ մէջ բաշխելն՝ առաքինութեամբ՝ ինձ յանձնեց։

Ես եկայ ձեզ՝ այցելութեան, այս ևս կամիմ՝ ձեզ յայտնել,
Որ միտք ունիմ՝ նահապետէն՝ ազատութիւն՝ ձեզ հայցել.
Մեծահոգի՝ մարդ է պարէտս, կարելի է՝ ողորմի,
Ձեզ երկոցունդ՝ էլ արձակէ, պարզև տայ մեր՝ ծընողի։

Պատասխանեց՝ Սարաքոսը՝ եթէ Սուսաւ՝ չըհաւնէր,
Իմ աները՝ այն հաշտութիւն՝ գուցէ արդէն՝ կազդուրէր,
Այլ երբ մեր հայր՝ նպաստ զգաց՝ հաշտութիւնը՝ մոռացաւ,
Մեր մընալը՝ աստ երկարեց, սովը այն տեղ՝ զօրացաւ։

Ո՛չ ես, ոչ ևս՝ Արմակ, Սուսաւ՝ կարենք աթոռն՝ ժառանգել,
Գահաժառանգ՝ է Հալենոս, որ բընաւ սուր՝ չէ մերկել,
Մենք Հայոց դէմ՝ զէն շարժեցինք, և զերի եանք՝ յաղթված,
Մեր նենգէից՝ տարապրութեան՝ գառակընիքն՝ է վճռաց։

Ես Բաբէլոն՝ կը բընակվիմ, Արմակ կ'երթայ՝ Եկբատան,
Սուսաւ Վրկան՝ պիտի կրկին՝ գառնայ իւր վայր՝ բնակութեան.
Մէկը պիտի՝ թագաւորէ, ես կամաւ եմ՝ հրաժարվում,
Ինձ թագաւոր՝ լինել չըկայ, քանի կան Հայք՝ աշխարքում։

Արմակ ասայ. ծեր է պարէտս, ապրելոց չէ՝ յաւխտեան,
Ո՛վ գիտէ թէ՝ նորա կենայ՝ ոմն պատրաստել՝ է պարան.
Նանիր եղէք այս՝ ատտում խօսքով՝ մեր ժամանակն՝ կորնչտում.
Մեր ծընողաց՝ հանպամանքը՝ Սինթայէն չենք՝ հարցանում։

Ցեսոյ սկսան՝ ընտանեկան՝ անցից վերայ՝ խօսակցիլ,
Սփոփվեցան՝ գամ քան զգամ, թողին ողբալ, սրտակցիլ,
Մինչև եկան՝ պահապանքը, և յայտնեցին՝ գշխոյին,
Թէ բաշխելի՝ հայ պատրաստ է՝ արդէն առ գրան՝ նինուէին։

Գընաց գշխոյն՝ Շահմարի հետ, հասաւ ուր հայն՝ էր կուտած,
Տեսաւ որ Հայք՝ առանց զինուց՝ են մերձ ի դուռն՝ ժողված,
Այսպէս պատուէր՝ նահապետը՝ իւր բանակին՝ էր տուել,
Որ զինուորք՝ աղքատներին՝ չերկամնան՝ վախեցնել։

Մեծ գրան մօտ՝ երկու դուռ կայր, մէկը աջ կողմ, միսը ձախ,
Աղքատք մէկից՝ դուրս են գալիս, միսից մտնում՝ են ուրախ,
Մեծ դուռը փակ՝ է ամրցրած, հացը այն տեղ՝ են բաժնում,
Սինթայ և Հարան՝ մօտիկ նստած, ամենն աչքով՝ են տեսնում։

Դուրս են գալիս՝ արք և կանայք՝ մրջինի պէս մէկ դառնէն,
Հաց կամ ոչխար՝ են առնում, և ներս մտնում՝ միսէն.
Սինթայի մօտ՝ կան Ասորիք, որ ճանչնում են՝ ամենին,
Ո՛մ որքան հաց՝ է հարկաւոր, այնքան սալիս են բաժին։

Երկարեցաւ՝ այս բաշխումն, հասաւ ճաշու ժամանակ,
Նահապետի՝ խոհանոցէն, եկաւ սեղան՝ անուշակ,
Գշխոյք այն տեղ՝ գրան առջև՝ այսօր մէնակ՝ ճաշեցին,
Եւ սեղանոյ՝ առելորդօք՝ շատ քաղցելոց՝ օգնեցին։

Ձեր վերջանում՝ կարօտից ծայր, խոնջեցան ձեռք՝ բաշխողաց,
Հայք իրեանց հետ՝ ընկեր առին՝ քանի հազարք՝ Ասորեաց,
Մինչ կէս գիշեր՝ տևեց այս տուրք, այն օր քաղցեալք՝ յագեցան,
Սովի ձեռնէն՝ իւր մահազէնք՝ առաւօտ լրումք՝ կապտեցան։

Երբ դռները՝ փակվում էին, երկու դշխոյք՝ գընային,
Իրանց ձընող՝ թագաւորին՝ ամենայն ինչ պատմելին,
Լուռ նստել էր՝ ամբարտաւանն, չը կայր բերնում՝ պատասխան,
Ձեր իմանում՝ ինչ տալ փոխան՝ նահատակի՝ զրկութեան:



ԺԴ

ՉԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆԴ ԱՐԲԱԿԱՑ

Սուրհանդակի՝ պէս էր կ՚ընում՝ Արթակ դէպ ի՝ Ամաւէր.
Աներկբայ էր՝ որ այնուհեա՝ լիւր են թէ ապդ, թէ երկիր.
Հայկայ նետը՝ ձեռք է բնրել, չունի երկիւղ՝ ել ատեք.
Այժըմ նորա՝ զուտզուխեան՝ հանդուրժեցէք՝ թէ կարէք։

Արթակ ասում՝ էր մտքումը, պիտի տանիմ՝ Շամրիկին,
Որ միւս անգամ՝ աչքով տեսնէ՝ իւր սիրական՝ պարէտին,
Չէ, ես այդպէս՝ չունիմ տանել։ Նա ինձ ասաց՝ աղաչել,
Բանակ երթալ՝ ամուսնոյ մօտ՝ սիրտ Շամրիկի՝ համոզել։

Զարմանալի՝ են սիրտք մեծաց, ինչ են արդեօք՝ մտածում,
Թուի թէ շատ՝ խելքով պակաս՝ են իրենցմէն՝ մեզ կարծում.
Պարէտ որդի՝ էր Գեղամայ՝ նահապետի՝ Սիւնեաց տան,
Ես էլ Աղձնեաց չեմ նահապետ, պտուղ տոհմին՝ Բզնունեան։

Երկուքս էլ ենք՝ Հայկայ ցեղէն, և մէկ մէկէ՝ չենք պակաս,
Չէ՝ Պարէտ չան՝ այնպէս անեմ, որ երբ լսես՝ զարմանաս։
Ես Շամրիկին՝ չեմ համոզիր՝ որ գայ և քեզ՝ կեր պատնայ,
Այլ կ՚ասեմ թէ՝ չանա՝ որ միշտ՝ տիկնութիւնդ՝ քեզ մընայ։

Եօթանասուն՝ երկու ամեայ՝ զառամին է՝ դեռ սիրում,
Ինձ պէս չքնաղ՝ երիտասարդ՝ այր ունենալ՝ չէ կամում.
Ալ ես նըրան՝ շատ տարի է՝ որ տուել եմ՝ իմ սէրը,
Ո՞նչ անեմ որ՝ մինչև այսօր՝ չէի գտնում՝ հրնարը։

Այսուհետև՝ իմ ձեռին է, չունի հրնար՝ ձիկ հանել,
Ինչ կամենամ՝ պարտաւոր է՝ Շամրիկ տիկին՝ կատարել։
Բաւական է՝ յիսուն տարին՝ ինչ որ պարէտ՝ վայելեց,
Մինչէ նա այս՝ մեծ սէրուելին՝ իմ հօր ձեռքէն՝ չըխըլեց։

Մինչէ հայրըս՝ չէր վիճակին՝ ողձնեաց գունդք ոտք՝ հանողը.
Ես պիտի այժմ՝ գլուխ տանիմ, ինչ չարաւ իմ՝ ծընողը.*
Հայկայ տունը՝ կը ժառանգեմ, Շամրիկ կը ճնայ՝ էլ տիկին.
Ո՞վ նահապետ՝ կամի՝ լինի, այս տեղ ինչ հոգ՝ կայ աղգին։

Անուշավան՝ որ մեռնում էր՝ ժառանգ կարգեց՝ իր դաւեր,
Ժամանակի՝ ձերոց կարգում՝ իմ ծնողն էլ՝ բարձ ունէր.
Ասաց ումմ որ՝ Շամրիկ ընտրէ, նա է գահիս՝ ժառանգը,
Շամրիկ ընտրեց, և պարէտով՝ կատարեց իւր՝ հօր կամքը։

Ալժմ էլ կրկին՝ նոյն Շամրիկն է, որ ինձ այն գահ՝ պիտի տայ,
Սիւնեաց երկրի՝ ժառանգութիւն՝ շատ է որուց՝ պարէտայ.
Եթէ իմ դէմ՝ զէն չըշարժեն, ես նըրանց չեմ՝ հալածիր,
Թող ժառանգեն՝ իւրեանց կալուածք, հեռուստ ինձ չեն՝ զըուեցնիր։

Շամրիկ ահա՝ ես հասնում եմ, առագաստըդ՝ պատրաստէ.
Գեղ պէս տիկին՝ ունենալն էլ մեծ պարծանաց՝ դուէստ է.
Վաթսուն տարիդ՝ ես չեմ յիշիր, պատանութիւնդ՝ ինձ չէ փոյթ,
Սըրտիդ հոգուդ՝ մէջ ինձ տեղ բաց՝ խորշ ապահով և անքոյթ։

*Վիճակաբէն չէշտուած էր երես 26, և հռետուված էր ըէ աս չեպոյ
կը յայտնվի։

Քեզ սիրում եմ՝ սիրուն պատաս, դու պիտի ինձ՝ կին դառնաս,
Ինձ պիտի քո՝ աջով բռնես, պահ Աբրամայ՝ ամբառնաս.
Երանի թէ՝ այսուհետև՝ վաթսուն տարի՝ էլ ապրիս,
Խեղճ Աբրահիդ՝ մըխիթարիչ՝ դորովապուր՝ մայր լինիս։

Համ կին, համ մայր։ Երեսն ամեայ՝ երիտասարդ՝ եմ Շամրիկ,
Քանի ամօք՝ երիցապոյն՝ է քան զիս քո՝ անդրանիկ,
Բայց դու այնքան՝ գեղեցիկ ես, այնքան չքնաղ, պատուական,
Որ տասնևութ՝ ամեայ կուսան՝ օրիորդք չեն՝ քեզ նըման։

Որդեօք քո մայր՝ քեզ սէս զաւակն՝ որ աստղի տակ՝ է ծընել,
Ինչ երջանիկ՝ ժամու մէջ է՝ քեզ յղացել, և երկնել.
Ամբան առատ՝ քեզ Մասեաց Քաջք՝ շընորհք և ձիրք՝ զանազան,
Անձնդ համակ՝ պճնազարդել՝ առ ընձեռել՝ հաճելեան։

Լըսել ենք կան յուշկապարիկք, յաւերժահարսն, համբառու,
Որ հանապազ՝ դից անմահից՝ ուրախակից՝ են պարու,
Սոցանէ որն՝ է առել քեզ՝ քո ծննդեան վայրկենին,
Աբրահամայ՝ պըլուխ տարել, պըրել Հայկայ՝ ’ի գրկին։

Եւ Լուսընթաց՝ մայրն է առել՝ թռցըրել է՝ ’ի վարագ.
Դեռ չը չամբած՝ քեզ դայլ կաթէն՝ կամ խաւիծ մեղր ու կարագ,
Քեզ իւր մատամբք՝ համասփիւռը՝ պետանէն քաղել, ճմլել է,*
Եւ առաջին՝ կերակրոյ տեղ՝ այնու յաղել՝ տըւել է։

Որ պահում ես՝ հոգւոյդ մարմնոյդ՝ մշտապարուն՝ մանկութիւն,
Մտաղաւուրց՝ սիրց բընիկ, քնքոյշ, դոլորիկ՝ փափկութիւն.
Ճապուկ, ճարպիկ, թեթևաշարժ, հոլու նըման՝ շրջիլը,
Եւ անթառամ՝ զուարթութեամբ՝ առանց թևոյ՝ թռչիլը։

*Հոմանոփեա՝ ձոպիկ՝ ի վարագ։ Արտ-եղջ հատոր։

Լուսինը նոր՝ ըրացած քեզ՝ ամաչում է՝ տեսնելիս,
Թաք կենալու՝ տեղ է պտրում՝ երկնքումը՝ ման գալիս,
Արուսեակը՝ չէ յանդգնում վերնակամար՝ ցոլանալ,
Մինչ Արշալոյս՝ չէ ժամանում՝ նորին քողով ցօղանալ։

Քանի հազար՝ վարդք, վարդենիք, և լուսերփեան՝ ծաղիկներ,
Քո յանդիման՝ դալկահար ին, ցուցել իրանց՝ մոդ դուներ,
Ոչ շահողրամ, ոչ շապուրակ, և ոչ կակաչ՝ գեղապսակ,
Կարել մնել՝ չքնաղ դունով քո գիտակին՝ նըմանակ։

Թէ մէկ նոր հարսն՝ գեռ քողի տակ՝ ունենայ քո տեսիլը,
Ունենայ քո՝ նազիկ շարժմունք, քո քաղցրանուշ՝ խօսիլը,
Փեսայն ընդան՝ կաստուածանայնէ, ինչպէս արին՝ Աստղիկին,
Ընդէր մեր ազգ՝ աստուածուհի՝ չէ անուանում՝ Շամրիկին։

Քրան որդւոց՝ մայր բամբիշը՝ տեսէք՝ ուրքան՝ քնքոյշ է,
Տեսէք նորա՝ ձարտար լեզուն՝ ուրքան համեղ, անոյշ է,
Տեսէք նորա՝ մատաղատունկ՝ նաճուոյ նըման՝ իրանը,
Տեսէք կարմիր՝ շրթանց լարը, բերկրաժըպիտ՝ բերանը։

Ահա Շամրիկ՝ ես գալիս եմ, քեզ պիտի քիչ՝ վշտացնեմ,
Քո սիրական՝ Պարէտին էլ՝ սիրտըդ սիրավ կշտացնեմ,
Դուք վարդ՝ տոխակ՝ էք սիրակից, ես ձեր մէջ փուշ կը գառնամ,
Այսուհետև՝ սիրոյ բաժակ՝ ձեզ կերևի՝ գառնահամ։

Ինչ հընարիք՝ սերմանեցին՝ քո սրտի մէջ՝ կատիածը,
Ես իմանում եմ թէ՝ ատալի կուզայ անդ իր՝ կըսկիծը,
Պարէտ հարսին՝ ըրթացել էր, ես ասայի՝ սիրում է,
Հաւատացիր՝ թէ քո գահէն՝ քեզ տարապրել՝ ուզում է։

Ընթովեցար, Հայկայ նետը՝ քո ձեռքով ինձ յանձնեցիր,
Այժմ էլ նոյնպէս՝ գահ Արամոյ՝ քո հաճութեամբ ինձ յանձնիր,
Էլ Պարէտ քեզ՝ չէ հարկաւոր, այսուհետ ես՝ եմ պիտոյ,
Սանձ ու պախուց՝ իմ ձեռին է, կը հասկանաս՝ դու յիտոյ։

Գիտեմ՝ ինչպէս՝ կը ընդունիս՝ առաջ դու իմ՝ ասածը,
Տեսնում եմ՝ քո պըռըստանքը, քո պչրանք ու նազածը,
Իմ սիկին ես՝ կը համբերեմ, յետոյ իմ կին՝ որ դառնաս,
Գուցէ՝ ճէ այդ՝ քնքոյշ ձեռամբ՝ անհամ կեանքն էլ՝ կը բառնաս։

Հասաւ Արթակ՝ մայրաքաղաք, մըտաւ պառպաս՝ Պարէտի,
Նահապետի՝ ողջոյն հասոյց՝ սիկնոջ մէջ իւր՝ սեռնեկի,
Ասաց՝ Նինուէ՝ Ասորեստան՝ մէկ հարսի հետ՝ փոխլեցան,
Պարէտի սէր՝ և երդմունքն՝ նորան վարձանք՝ օժտեցան։

Շամրիկ՝ էլ չես՝ դու մեր սիկին, մեր սիկին է՝ Ասորի,
Դու ծանրութիւն՝ հա աշխոյժ, և բնուն Հայոց աշխարհի,
Տան Արամայ՝ սիկնութիւնը՝ այլում ձօնեց՝ Պարէտը,
Նորա պերի՝ արաւ իւր միաք, և պարզ հոգին՝ և սիրտը։

Դու չես կարող՝ պահել ղլխիդ՝ քո սիկնութեան՝ ապարօշ,
Քո առջևէն՝ սուրհանդակը՝ չի վաղեցնէր՝ էլ դըրօշ,
Թէ քո արին՝ չը պահանջէ՝ քո ախոյեան՝ Պարէտէն,
Նաժըշտաց պէս՝ պիտի ապրիս, արտաքս ընկած՝ քո տախտէն։

Շամրիկ սիկին՝ ամբոխվեցար, և չը տուեց՝ պատասխան,
Չէր հաւատում՝ զրպարտութեանց՝ ինչ խօսում էր՝ դաւաճան,
Եկաւ բարձէն՝ ու բազմած էր, և դուրս գնաց՝ սենեկէն,
Մըտաւ դահլիճն՝ պետականի, և Արթակն էլ՝ յետևէն։

Շամրիկ դարձաւ՝ նայեց վըրան, հարցուց, ինչ ես կամենում,
Նոր որոճներ սերմանելոյ՝ հնձնարներ ես՝ որոնում,
Ձեռքը սրտին՝ դըրած ասաց. այս տեղ հինեղն էլ շատ են,
Յիսուն ամեայ՝ ամուլից մէջ՝ փուշ է բուսնում՝ քո լեզուէն։

Արթակ ընկաւ՝ սիկնոջ ոտքը, ասաց Շամրիկ՝ ականջ դիր,
Վըտանգը շատ՝ մօտալուտ է, թէ կարծել ես ինձ լսիր,
Ես կը պահեմ՝ քո սիկնութիւն, կապահովեմ քո կեանքը,
Չի յաջողիր ամենայն տեղ՝ քո առելեայ՝ չար կամքը։

Պատասխանի՝ տուեց Շամրիկ, դեռ ատելիք՝ չեմ տեսել,
Տիկնուհինէս՝ եւ ամենէլ՝ դեռ պատուամ ինչ՝ չեմ լսել,
Շեմ հաւատում՝ քո խօսքերի, պարէտ ինձ չի՝ ուրանար,
Ցիտուն տանց մըտերիմ այրս՝ ինձ թշնամի՝ չի պառնար։

Երբակ ասաց՝ այս բանի դէմ, պարէտ չէ քեզ՝ թշնամի,
Այլ միայն քո՝ տեղը դրրեց մէկ նորահարս՝ Ասրի,
Դու քաջ գիտես՝ որ նահապետք՝ զոյգ տիկնաց չեն ունենար։
Այն Ասրի՝ համբարուէն՝ նորա կորզել՝ չիք հընար։

Կատրում են՝ Հայոց քաջաց, պարէտ ձայն էլ՝ չէ հանում։
Բանակի մէջ՝ ով է ընկել, սա հոգ բընաւ՝ չէ անում,
Գիշեր ցերեկ՝ տաւիղ թմբուկ, է մէջ նորա՝ խորանի,
Խաղոց վերայ՝ պար է բռնում՝ նորհարս Շահմար՝ Ասրի։

Նուագերգուք՝ և ըղցասաց՝ երգ են յօդում՝ անդադար,
Մեր քաջարեաց՝ դովեստները՝ խանդարում են չարաչար,
Ինչ տեղ Հայկի՝ անուն պիտի, ինչ տեղ պարծանք՝ Արամայ,
Այն տեղ Նեբրոդ, Նինոս, Նիւքար՝ են յիշվում ընդ Բարշամայ։

Գիտեմ՝ ինձ էլ՝ եթէեմն այդպէս՝ անուն էինք փոխփոխում,
Յուսումնասիրաբար՝ տաղ երգելիս՝ էինք անուն՝ քո յիշում,
Այժմ քո խէ՝ անուան փոխան՝ նորա անունն՝ են տալիս,
Պարէտ այսպէս՝ է հրամայել իւր տաղն երգ՝ ասելիս։

Շամրիկ կանչեց՝ բաւական է. գընա քո տուն, ըսպասիր.
Երբ քեզ կանչեմ, այն ժամանակ՝ արի՝ պատգամ՝ ըսսացիր.
Արդէն չունիմ՝ դեռ ասել ինչ. և ուշ տալոյ պատասխան,
Ահա այս է՝ այսօր ինձմէն՝ քեզ յանձնելի՝ պատուիրան։

Երբ որ Երբակ՝ այն գահլիճէն՝ ելաւ, յուշիկ՝ հեռացաւ,
Շամրիկ կրկին՝ եկն յիւր սենեակ, և յիւր բարձին՝ բաղմեցաւ,
Սկիզբն արաւ՝ լաւ մըտածել, Երբակի բանք՝ բերել,
Շրխոճ ընկաւ՝ անզորը սիրտը, և չըկարաց համբերել։

Կանչեց իւր մեծ սուրհանդակին՝ որ անուն էր Խանդամիր,
Ասաց՝ այսօր՝ յայս իսկ ժամուս՝ պիտի Թողնուս Արմաւիր.
Երթաս բանակ, մանես մէջը, ծածուկ՝ որ ոք չը Ճանչնայ,
Մէկ մարդոյ հետ՝ չը խօսակցիս, որ նահապետ՝ չիմանայ։

Տեսնես աչքովդ թէ Պարէտը՝ ինչ գործով է՝ պատաղումդ,
Կամ՝ Իննուէին պաշարումն՝ էր է այնքան՝ երկարումդ.
Ինչ են խօսում՝ Հայագունդ զօրք, խաղաղ անդորր՝ է բանակ,
Ինչ են արել՝ Ասորց զէմ՝ այնքան երկար՝ ժամանակ։

Կամ ինչ կարծիք՝ կան զօրաց մէջ, շուա պիտի գան Հայաստան,
Զօրավարաց՝ մէջէն քանիք՝ են պակասել, քանիք կան.
Կամ նահապետ՝ որոնց աւել՝ է իւր անձին՝ մօտեցրել.
Եւ որոնց է՝ մէկ պատճառաւ՝ իւր առջևէն՝ հեռացրել։



ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿԱՑ

Թէպէտ Ջամրիկ՝ ծածուկ ղրկեց՝ խանդամիրին՝ դէպ բանակ.
Բայց Արբակի՝ լրտեսք իսկոյն՝ բանն իմացան՝ բովանդակ.
Դեռ չէր Արբակ՝ հասել իւր տուն, որ համբաւը՝ հասցըրին,
Տիկնոջ գաղտնեաց՝ վարագոյրը՝ չարահընար՝ մերկացրին։

Արբակ ուրախ՝ ղընաց իւր տուն, բարեկամաց՝ հաւաքեց,
Ծածուկ նոցա՝ արտի մէջ էլ՝ կասկածանքը՝ սերմանեց,
Ոչ թէ մէկ կերպ՝ նահապետին՝ մեղադրութիւն՝ էր խօսում,
Այլ Ջամրիկի թշուառութիւնք՝ գուշակաբար՝ արտասվում։

Գովում էր շատ՝ նահապետին՝ որ ի սէր իւր՝ հայրենեաց,
Պարարտ տիւց՝ զառամութեամբ՝ դիմաց ընդդէմ՝ թշնամեաց.
Այն թշնամեաց՝ որ ոչ միայն՝ յայտնի գինուք՝ են կռվում,
Այլ և անյայտ՝ կախարդութեամբ՝ յուսութիներով՝ վընասում։

Ափսոս եղէ՝ ասում էր, մեր՝ նահապետի՝ ծերութեան,
Ջամրիկ բամբշի՝ այսքանամեայ՝ երանաւէտ՝ տիկնութեան,
Էլ չի մընար՝ նոցա մէջ այն՝ մըտերմութիւնն՝ անկոպար,
Երկոցուն էս՝ զըրաւ կենաց՝ սիրո հաստի՝ չարաչար։

Խեղճ Պարէտի՝ ահից ներքոյ ծածուկ թախարթք կան լարած,
Շամբրամի՝ հին ոտպայթք՝ նորան ևս են պատրաստած.
Ինչ գեղեցիկ՝ օրիորդք կան, մըտել ին ամբ՝ քանակը,
Մէկ մէկ ուտում՝ են այն քաջի՝ սիրտքը։ խելքը և միտքը։

Ո՞վ էր կարող՝ մըտածել թէ՝ մեր դիւցազնեայ՝ նահապետ,
Եօթանասուն՝ երկու ամեայ՝ զառամութենն զալէն յետո,
Պիտի գառնայ՝ մէկ Ասորի՝ նորահարսի՝ խաղալիկ,
Ո՛չ աս իւր անձն՝ յարդ միտ գերէ, ձէ կասկած ինչ աս Շամրիկ։

Շամրիկը չէր՝ ար այն ատոր՝ տեղէն ներան՝ բարձրացող,
Իւր կենակից՝ արաս ներան, Հայկի աթոռ բազմեցող,
Բոլոր ազգի՝ ընտիրներին՝ չինեց նորա՝ արքանեակ,
Հայաստանի սիրուղ արար, ասն Արամայ՝ պետ մինակ։

Տեսէք Պարէտ՝ ինչ սըրիտուր՝ ե այժմ ներան՝ յետ տալիս,
Երբ մեր տիկնոջ՝ ծառը են անում, առաջ նա ե՝ ծափ տալիս.
Համարձակվում՝ են Ասորիք՝ նորա առջև՝ երգ երգել,
Եւ Հայկազանց՝ նահապետաց՝ յիշատակը՝ անարգել։

Լսեցէք թէ՝ ինչ են երգում՝ այն անհամօթ պուտանքը,
Եւ նոցա հետ՝ ձայնակից են՝ գինեմոլնալ՝ կատանքը.
Այս ամէնը՝ Պարէտ լսում՝ ե խնդալին, և լուում,
Եւ ի սէր այն՝ նորահարսի, խելագարված՝ ձիծաղում։

Թըռեաւ արծիւ Արտրատեան, լայն Ծևերը՝ հալանեց,
Երկնակամար՝ կապուտակի՝ մէջ պարթևիլ սաւառնեց,
Թուչունք և հաւք՝ նորա ստուերէն՝ փախան, բընձրն պահուեցան,
Երէք, եղինքև այծեմանք՝ խարձերի մէջ թաք կեցան։

Արծիւ տեսաւ՝ Տիգրիս գետի՝ ափուռ ընկած՝ մէկ որսիկ.
Գէր ու պարարտ՝ գառն էր որսիկ, դորշախայտ և գեղեցիկ,
Սըլաքաձև՝ սեղմեց թևքը, վերուստ՝ ի վայր՝ սըլացաւ,
Գէր ու պարարտ՝ խայտուկ գառի՝ վերայ խիզախ՝ թառեցաւ։

Մի՛ շոտափիր՝ Մասեաց արծիւ՝ քո այդ որսին՝ պատառել,
Սուր սուր մագիլ՝ և հզօր ճանկ՝ գօրա ճարպի՝ մէջ խրելով.
Գօրայ գողտրիկ պեղման մէջը՝ ծածուկ կարմիր՝ կան շարած,
Ինքն էլ առիւծ՝ է գառնազլուխ՝ անմատոյց քո՝ Հիրանաց,

Արծիւ Պարէտ՝ էր քաջազէն՝ Հիւնափադամի՝ սարերում,
Իր ահ և գող՝ սիրած ունէր՝ ցրտատուտոյց լեռներում.
Նորան Հայոց՝ ազգ պաշտում էր՝ մեծարելով իր տիկնոջ,
Տիկին՝ Հայիկ՝ էր շատ սիրուն, քաջաց ընձիւղ և բողբոջ։

Գէր ու պարարտ՝ գառն էր ընտուէ, Մեծ Ասուրայ դաստակերտ,
Շամիրամ այն՝ քաղաքի մէջ՝ ունէր անթիւ՝ աշակերտ,
Նոքա էին՝ այն կարմիրները՝ վճափուկ պեղումն՝ տակ շարած.
Նոցա պիտի՝ սուր սայրերին՝ կոխէին ձեռք որսորդաց։

Որսորդ Պարէտ՝ որսորդ Բէլի՝ վիճակի մէջ՝ որս հեծաւ,
Շամիրամի՝ շրջնաղ սանիկ՝ որսի հասպոյր՝ դրուեցաւ,
Որսը որսաց՝ իւր որսորդին, որսոյ մընաց՝ որսացած,
Արծիւ ընկաւ՝ գառապետը, Հայք մընացին շուարած։

Էր ես վախում՝ այդ որսիկէն՝ Հայոց մեծաց՝ նահապետ,
Ինչ ես նեռդ՝ ձեռիդ բռնել, և գողում եմ՝ քաջ Պարէտ.
Քո բանակն է՝ քո արգելան, քեզ բանտ է քո՝ տաղաւար,
Դա քո հզօր՝ բնութեօք՝ մեր դեղերին՝ ես աւար։

Պարէտ՝ սուսերդ՝ դարձուր պատեան, էլ մի մերկիր՝ մեր ընդդէմ,
Էլ մի Ճակատ՝ դու յարդարիր՝ Միջագետաց՝ քաջաց դէմ.
Մենք չենք կամում՝ ձեզ հետ կռուիլ՝ սովորական զէնքերով,
Այսուհետև՝ մեր մարտ կըլնի՝ մեր պեղեցիկ՝ դէմքերով։

Մեր պեղին ես, մենք եկաքի՝ շղթայով չենք՝ քեզ կապէր,
Կամ ոտնակապ, կամ ձեռնակապ՝ մենք քո դէմ չենք գործ բերէր,
Քո կապանք են՝ բարակ թելեր, բարակ սարդի՝ ստայնէն,
Քեզ քո կամաւ՝ կը պարանենք, էլ չենք վախիր քո ձայնէն։

Այն ձայնէն որ Աբրահամեան՝ սարեբից երբ՝ լսվում էր,
Ասրեստան՝ դող էր ընկնում, և բաբիլոն՝ սարսում էր,
Այլ այն ձայն արդ՝ ոչ առիւծու՝ մռնչիւն է սոսկալի,
Ո՛չ արծրուս՝ ձըչոյն հանգոյն՝ յերկինից լինի՝ լսելի,

Մեր գերին ես՝ քաջիկ պարէա՝ քեզ որսացան՝ թակարթով,
Քեզ ականաթ՝ էինք լարել՝ մէջը ընկար քո սըրտով,
Քեզ հաւնեցրինք՝ մեր նորհարսին, խելքըդ առաւ չքնաղը,
Քեզ խեղդ ձըգեց՝ ամօթալի, նորա տսիլն ու գեղը։

Ա՛յ զառամեալ՝ իզաւոր ծեր, որ քեզ առիւծ՝ ես համրում,
Նորահարսի՝ գրկայ մէջը՝ կոտուխ պէս ես մնամուտ,
Քեզ Հայերն են՝ առիւծ ասում, այլ Ասորիք՝ ծաղրում են,
Նմնուէի պէս՝ քո զօրութեան՝ նուաղութիւնն՝ տեսնում են։

Ինչ ես կեցել՝ մեր պաշտերում՝ թուխսը դըրած՝ հաւի պէս,
Միթե մէկ նոր՝ հարսի համար՝ զօրքդ հաւնեցիր՝ ասպարէս.
Կորդուայ լերինք՝ չըզօրեցին, Հանապարհըդ՝ խափանել,
Մէկ կին է որ՝ քեզ չէ թողնում՝ արդ մեր դռնէն՝ ներս մտնել։

Այս այն կընոջ՝ սերտնդէն է, որ Նինոսի՝ խելքն առաւ,
Երեք օրեայ՝ ժամադրութեամբ՝ նորա գահին տէր դարաւ,
Իւր սիրական՝ ամուսնոյն զո՞հ Հասած ծերին՝ պատրաստեց,
Նորա թաղված՝ տեղի վերայ, այն տխմարին՝ գլխատեց։

Այս մեր երկրըդ՝ Շամիրամն է՝ այլ դու Պարէտ՝ Արայ չես,
Մեզ ինչ փոյթ թէ՝ տիկնոջ կամօք՝ նորա աթոռ՝ բազմած ես,
Նա իւր արեան՝ չը խընայեց, որ իւր ուխտին՝ չը դժրի,
Դու Շամրիկին՝ շատ մոտացար, որ հարս Շահմար՝ քեզ սիրէ։

Թաբցըրիր քո՝ մազ ու միրուք, ի մէջ շըղարշ՝ փաթոյթի,
Սնձնէ բոլոր՝ շուրջ պատեցիր՝ սարսուռ կանանց՝ ըզգեստի,
Սարսափ չէ գլխիդ գըրած, այլ կանացի՝ տպարօշ,
Ծածանում է՝ յետնէդ վանդամ՝ բարեկաման՝ ուշ գըրօշ։

Ձեռիւ նիզակի՝ է թէ իլիկ, պուճասա մէջ՝ ձգմարիտ,
Ետնջայ վերայ՝ կրծապատնակ, է թէ պոհար, մարգարիտ,
Դու Շահմարին՝ այնքան սաստիկ՝ սիրով՝ սիրտդ մատնեցիր,
Որ գեղարդեամբ՝ նորա համար՝ բուրդ ու բամբակ մանեցիր։

Խոստացել ես՝ դու նոր հարսին՝ քեզ հետ տանիլ Հայաստան,
Բամբիշ կոչել՝ Երամաղնեայդ, և ժառանգորդ՝ Հայկայ սան,
Շամրիկ տիկնոջ՝ նորա առջև՝ կացուցանել՝ աղախին,
Սարաքոսին՝ ի սէր նորա՝ ժառանգ յաջորդ քո գահին։

Չէ։ Սըխալ ես՝ քաջիկ պարէտ, Հայք քեզ այդքան՝ չեն ներիր,
Անուշավան՝ նոյա արտէն՝ այդպէս վաղ չի՝ ջնջըվիր,
Չեն թողնիր որ Շամրիկ տիկին՝ իւր աթոռէն՝ վայր ընկնի,
Չեն թոյլ տար որ՝ չքնաղ բամբիշ՝ իջնէ ի կարդ՝ աղախնի։

Պարէտ՝ քո ուխտ՝ մոռացել ես, բայց Հայք դեռ չեն՝ մոռացել,
Ա՛յն՝ գարէ գար՝ պիտի մընայ, դեռ յիսուն ամք՝ չեն անցել,
Քա երդմունք շուտ կը յիշեցնեն, երդաշխատոր՝ են մեր ծերք,
Կը բերեն քո՝ յուշ՝ այն ուխտերն՝ մահազինով վաւաշած ձեռք։

Դու ասացիր, հընազանդ եմ, յօժար եմ այդ՝ պայմանի,
Քեզ միայն ինձ՝ հարս ձանաչել՝ մինչև ի դուռն՝ տապանի,
Ապա եթէ՝ դրժեմ երդմանդս, դու ունենաս՝ իրաւունք,
Գլխիս տեղալ՝ մահու շանթեր, ինչպէս ամպրոպք կայծակունք։

Վկայ կացէք, ասաց Շամրիկ, իմ փեսայի՝ խօսքերին,
Ես լաւ հաշուեմ՝ ձեզ ծերք ապիս, քան թէ Մասեաց՝ քաջերին,
Պարէտ պիտի՝ մինչև ի մահ՝ միայն ինձ հարս՝ ձանաչէ,
Մինչդեռ կենդան՝ է Շամրիկը, այլ կին՝ Հայոց՝ տիկին չէ։

Վկայ են ինք մինք՝ ասին մեր ծերք, վըկայ յաւէժ յաւրաժամ,
Վկայ ձեր մէջ՝ է ապէ բոլոր, չքնաղ տիկին՝ Շամիրամ,
Եթէ պարէտ՝ երթէք դժրէ՝ իւր այսօրման՝ ուխտերին,
Վըրէժխնդիր՝ պիտի ձանչնայ՝ համազգային՝ ծերերին։

Պարէտ ասայ՝ թէ մուտանամ՝ ես այսօրվան՝ քո սէրը,
Թող պատառէ՝ լերդ ու սիրտս՝ քո սայրատուր՝ սուսերը.
Թող իմ արիւն՝ ի գետ թափվի՝ քո ոտից տակ՝ իմ դէհոյ,
Թող քո վերէժ հըրատից պէս՝ հասնի վերայ՝ իմ գլխոյ։

Զարմանալով լըսեցին այս՝ համբաւ ևերդ՝ Հայերը,
Պարէտին այս՝ գործոյ համար՝ ձմլվում են՝ արտերը.
Ալ ինչ գարձան, երբ դիշերը՝ յետ գառնալիս՝ իւրեանց տուն.
Լըսեցին որ՝ փողոցներումն՝ էլ են երգում՝ բազմութիւն։

Սըրտակըտուր՝ և վըհատած՝ ցրուեցան մեր ասպքը,
Նոյա մըտայ՝ մէջ ցանեցին՝ ոխ Արթակայ՝ այս բանքը.
Ոմանք մեղինում՝ են Պարէտին, ոմանք խնայում՝ Շամրիկին,
Ոմանք վառվում՝ սաստ լոթեամբ՝ դէմ նորահարս՝ Շամարին։

Նոյանէ շատն՝ աճապարեց՝ դէպ ի բանակ՝ Հայկազանց,
Ամենայն տեղ՝ տեսան ուրախ՝ վինուորութիւն՝ Արամեանց.
Ո՛չ գօրայ մէջ՝ լըսեցին մէկ՝ արտուն՝ ընդդէմ՝ Պարէտի,
Ո՛չ Շահմարին՝ հանգիստեցան՝ ի մէջ նորա ծորանի։

Շահմար նոյնպէս՝ սըգաւոր էր՝ ինչպէս նախկին՝ օրերը,
Նորա բանակ՝ մուտ և ելը՝ չէր տեղյընում՝ յոյսերը,
Պաշարված էր՝ վինուէ քաղաք, Պարէտ սիմնոյն՝ է մընում.
Հայերն իւրեանց՝ բանակի մէջ՝ ուրախութիւն՝ են անում։

Ողորմելի՝ ազգ Արամեան, տես թէ ինչպէս՝ է խարուել,
Չէ հասկանում՝ թէ այս ամեն՝ սուտ համբաւ ոչ է ցրուել.
Տիրապետուժ՝ գառաճանը՝ մտքին դառը՝ գնելով,
Հիմնել է՝ Արմաւիրը՝ գրպարտութիւն՝ անելով։

Ալ ազգապաս՝ երկն էլ ինքն էր՝ չարահընար՝ խարդախել,
Իւր համախոհ՝ արթանեկայ՝ բնդնով ազգի մէջ՝ սիրել.
Որ ո՛չ միայն՝ ազգ և երկիր՝ փոխէ սիրալ՝ Պարէտէն,
Ալ և Շամրիկ այն լսելով՝ մերժէ նըրան՝ իւր սրտէն։

Ի՛նչ մտածեց՝ դատաձանը, ամենայն ինչ՝ յաչքուէց,
Բանակէն նար՝ եկած համբառ՝ հինը գրգռել՝ չը զօրեց,
Շամրիկ հազաւ՝ անձին վերայ, այրիութեան ահ շօրեր,
Էլ չըմընայ նորա սրտի մէջ Պարէտի նախկին սէր։



ԳԱՐԵՆԻՆ ՇԱՄՇԵԱՆ

Հայաստանին՝ միշտ էր հասել՝ ձախորդութեան՝ հայծակը,
Սրդէն Մշակ՝ պարբնում էր իւր՝ փայլակնային՝ Շանթիկը։
Թխպայորդ ամպ՝ պատել էին՝ լերինք նըման՝ բալու լի,
Ձուարթ սիկինն՝ խորշ սենեկի՝ պուճ էր եկել՝ սըզոտ լի։

Մըտածում էր՝ բանակ երթալ, և ամեն ինչ՝ ատոգել.
Բայց վախում էր՝ անձն կամ կեանք՝ պատ փորձանքով՝ վտանգել,
Արծարծում էր՝ իւր մտքի մէջ՝ ինչ լսել էր՝ Արթակէ,
Մանաւանդ այն՝ խայտառակիչ երկիծական՝ չար երգէն։

Եղուկ՝ ասաց՝ դլխէդ Շամրիկ, որ աշխարհի՝ ծաղր եղար,
Ինչու՝ մինչեւ՝ նոր Հարսն էիր, առապատում՝ չը մեռար,
Որ քո ձեռքէն՝ յիսունամեայ՝ փեսայդ նենգիւ՝ խըլեցին,
Եւ քո աչքը՝ նորա սըրտէն՝ արմատախիլ՝ հանեցին։

Ճշմարիտ էր՝ ասում Արթակ, թէ քո սէրը՝ կորել է,
Բաբիլոնի՝ նորահարսը՝ նորա խելքը՝ կերել է.
Այ օրհնած մարդ, եօթանասուն՝ երկու ամեայ՝ հասակդ,
Ինչպէս յիշել՝ չը տուեց քեզ՝ հանդիսաւոր՝ երդմունքդդ։

Դու իմ ծառայն՝ էիր առաջ այլ ատպաց՝ հատասար.
Ես քեզ տըվի՝ Հայկայ նետը, և նահապետ՝ ասվեցար,
Ուխտ և պայման՝ ունին գըրած՝ որ լինիս ինձ մտերիմ,
Ինչ հար արի՝ քեզ որ եղել՝ ես ինձ այժմիկ՝ ոխերիմ:

Միթէ քո՞ է՝ անկնութիւն իմ՝ որ Ասորի՝ Հարսին տաս,
Իմ տախտիցըս՝ ինձ վայր բերես, աղախնոյ տեղ՝ ունենաս.
Զը պիտեմ որ՝ ես յօժար եմ՝ աղախին էլ՝ քեզ լինել,
Միայն թէ քո՝ չը կամենաս՝ սիրտը երիս՝ բաժանել:

Այլ դու սիրել՝ ես Ասորի՝ մատաղամարդ՝ նոր Հարսին.
Ամենք պիտեն՝ որ էլ չեմ ես՝ միայն սիրող՝ իմ փեսին.
Վայ է Հոգիդ՝ ատելութեամբ՝ մերժել հին սէր Ճամբիկի,
Եւ նոր սիրով՝ նորահարսին՝ առել ի մէջ իւր գրկի:

Էլ քո գիրկ չէ՝ այնպէս մաքուր, ինչպէս էին՝ մեր անցեալք,
Մինչ ինձ ձօնած՝ էին համբոյրք՝ հըրով սիրոյն՝ բորբոքեալք,
Այժմ՝ օտարի՝ գիրկ փարվելով՝ օտարոյար՝ իմ սրտէն,
Սիրտս ու Հոգիս՝ դէն մերժելով՝ հեռացուցիր՝ քո մտքէն:

Ես էլ ինչպէս՝ պիտի կոչեմ, քեզ իմ Պարէտ սիրական,
Մինչ դու այդքան՝ ժըպիրհ կամօք՝ սիրոյս գըտար՝ պատճան,
Ախթան առանիկ՝ խորխոցեցիր՝ իմ ոխրաիր՝ սըրտիկըս,
Որ աչքերըս՝ ցամաքել են, արեամբ լցվել՝ աղիքըս:

Ինչի պիտի՝ այսուհետև՝ քո աղագաս՝ սև Հագնիմ,
Ինչի համար՝ փեսիս փորած, և ինձ այրի համարիմ.
Եթէ Պարէտ՝ ինձ մոռացաւ, ես չունիմ այժ՝ մոռանալ,
Նա իւր համար՝ նոր Հարս գըտաւ, ես նոր այր չեմ՝ ունենալ:

Ո՛չ: Հարկաւոր՝ չէ ինչ այր նոր, արդէն վաթսուն՝ ամեայ եմ,
Հայկազն եմ, և՝ ոչ Ասորի, ազգիս պատիւ՝ 'տի պահեմ.
Ողջախոհի՝ ունիմ պարծանք, համազգային՝ ասանդ է,
Մարմնոյս սիրող՝ ինչպէս յայս օր, նոյնպէս դեռ ալդ՝ պարէտ է,

Իմ ամուսինն՝ էր արդարև, բայց աթոռոյ՝ ժառանգ չէր.
Ես ժառանգողդ՝ աըի գահին, նա պիտի լաւ՝ ճանաչէր.
Ծածուկ չէր մեր՝ ուխտագրութիւն, մեր ձեռքն էին՝ վըկայքը.
Ամենեցուն՝ դեռ մտքերն են՝ մեր պայմանեալ՝ դաշինքը։

Նա ուխտ դաշանց՝ ոտքով կոխեց, էլ նա չէ իմ՝ ամուսին,
Էլ ոչ հոգւոյ՝ հաւակրութիւն՝ է կապում մեր՝ երկուսին,
Նա որ քանդեց՝ պայման ուխտից՝ ես շատ առաջ՝ եմ ազատ,
Ո՛չ է նա տէր՝ այս աթոռոյ, այլ ես ծնունդ պայազատ։

Մօտ յիսնամեայ է անդրանիկս, նըրան կու տամ՝ աթոռը,
Կը պատուիրեմ՝ որ պաշտօնէն՝ հեռի պահէ՝ իւր հօրը.
Թող իւր կալուած՝ երթայ Սիւնիք, կենայ Կապնոյ՝ բերդումը,
Անտեղ տանէ՝ իւր նոր Հարսին, գրուէ միշտ իւ՝ գրկումը։

Կը հաւաքեմ՝ մեր ժերերին, կը բանամ մեծ՝ գատաստան,
Կը բացատրեմ՝ գանկատանքը՝ Թոռ նոքա մեզ՝ վըճիռ տան.
Հարիւրաւոր՝ ազգապետք կան, որ նորան են՝ յաչալուսմ,
Ամենք իմ կողմ՝ կըլինին, երբ ես՝ վըրէժ լինիմ՝ պահանջում։

Զի ունենար՝ մէկ ջատագով, այս իւր գործոյն՝ ոք պաշտպան,
Նորան պիտի՝ գատապարտէ՝ անշուշտ արդար՝ այն ատեան,
Մասեաց Քաջաց՝ էր նա դիմում, ես մեր ձերոց՝ ընտրեցի.
Թող մեզ այժմիկ՝ մեր ձերք գտնեն, գտաւս նոցա՝ յանձնեցի։

Ինչպէս ինքնին՝ ձեռքէն բռնած՝ բազմեցուցի՝ այս գահում,
Նոյնպէս կրկին՝ ես ինքնին եմ, նորան գահէն՝ հեռացնում.
Ժառանգութիւնն՝ Անուշաւան՝ ինձ էր Թողել, ոչ նըրան,
Նա նահապետ՝ էր ազգընտիր, փեսայացաւ Հայկայ տան։

Մեր ազգ կ'ուզէ՝ այն այրաթոռ՝ Ատրին՝ ընդունել.
Անուշաւան՝ նահապետի՝ գատերն այսպէս՝ ընդոտնել,
Հայոց սիւնեայք և Մեծհոիք՝ բամբիշ կասէն՝ ատրուն,
Նըրան կուզեն՝ տալ օրինակ՝ պարկեշտութեան գատերուն։

Համաստիւռի՝ օրէն հետէ՝ կուսանաց մայր՝ է տիկին,
Հազարաւոր՝ աղջիկունք են՝ հըրահանգվել՝ իմ կշռին.
Ամենք իրեանց՝ բաղդ են կարծել՝ դառը իմ մօտ՝ լինելը,
Թեթեւ գործ է՝ ազգի համար՝ հանդերձեալ մայր՝ կրթելը։

Դեռևէթ իմ մայր՝ քանի հարիւր՝ աղջիկ ունէր՝ իւր տանը,
Նորա մօտ էր՝ տալիս իւր դուստր՝ զաւակասէր՝ պաշտպանը,
Ինչպէս ուստերք՝ նահապետի՝ դըրանն էին՝ կրթըվում,
Նոյնպէս դստերք՝ իմ հովանւոյ՝ ներքոյ էին՝ յանձնըվում։

Այո՝ այսպէս՝ է իմ կամքս, որ Պարէտին՝ հետացնեմ,
Անուշաման՝ նահապետի՝ դուստր լինել՝ իմացնեմ.
Թէպէտ անուն՝ Շամիրամ է, բայց ես վարքով չեմ նըման,
Համաստիւռ է՝ իմ նախատիպ, ես նորա թոռն՝ եմ թոռան։

Ո՛րքան ծերք կան՝ Արմաւիրում, պիտի նոյա հաւաքել,
Պարէտի այս՝ ուխտադըրուժ՝ մեղմեխ թինն՝ առարկել.
Եթէ ասեն՝ թէ նա կարէ՝ երկմանոյ ստել՝ համարձակ,
Այնուհետև ես ևս իմ կամք՝ կը կատարեմ՝ բայարձակ։

Այլ իմ կամքս՝ թէ իսկ ինչ է, ինքնին դեռ լաւ՝ չը գիտեմ,
Իմ ամուսին՝ ինձ ուրացաւ, ես այս միայն՝ լաւ գիտեմ.
Ես այս յանցանք՝ ամենևին՝ ներան ներել՝ չեմ կարող,
Այսուհետև՝ ներան ինձ այր՝ բընաւին չեմ՝ համարող։

Գիտք մեր ծերք՝ ինձ ձշմարտեն, ներան անեն՝ յանցաւոր,
Ո՞վ է կարող՝ ներան մղել՝ կամ բանտ երթալ, կամ աքսոր.
Դեռ զօրութիւնն՝ նորա ձեռքն է. ազգաւիջեան՝ մարտ կըլնի.
Հայ նեսը՝ նորա մօտ է, ումմէն պիտի յաղթըվի։

Ձէ։ Ա յս խորհուրդ՝ լոկ ցընորք են, օգուտ չունին՝ կըսէին,
Ինքնին տուի Հայկայ նեսը, ով ձի առնու՝ նորանէն.
Կը պահպանէին՝ նորա առջև, ծերք, ազգապետք, դաստաւորք,
Որ որ նորա՝ գէմ մարտնինք, ամենք կըլնինք՝ յանցաւորք։

Ես կիմանայ՝ որ ծերոյ եմ՝ եմ ամբոխել, ուր հանել,
ի սէր նորհարս՝ Ասորին՝ ինձ էլ կուզէ՝ ծաղր անել,
Լաւ է՝ թէ որ՝ սպանել ասէ. կարելի է ապրեցնէ,
Եւ իւր լկտի՝ սիրահարի՝ առջև պահէս՝ իջեցնէ:

Ո՛հ, քանի՛ որ՝ միտք եմ անում, աշխարհք աչքին՝ է մթնում,
Որ կողմն էլ՝ լաւ նայում եմ, բնաւ՝ հրնար՝ չեմ գտնում.
Երթամ ընկնիմ՝ երասխի հուն, կամ գառնամ խիկ՝ անձնատուր,
Իմ զաւակաց և թառնեկաց՝ որոնց թողում՝ ապաստան:

Վայ քեզ՝ Շամրիկ՝ ինչ աստիճան՝ է հասել քո վիճակը,
Որ քո կամքով՝ պիտի թողուս՝ այն Ասորուն՝ քո փառքը,
Որ թէ սայլով գալիս լինի, ու դիակըդ՝ տեսանէ,
Ամենևին՝ մըտիկ չարած՝ պիտի կոխէ, անցանէ՜:

Ապա ուրեմն՝ մեռանելով՝ պիտի նրան՝ ցնծացնեմ,
Նորա Ճանիան՝ դէպ ի գահն իմ՝ միայն պիտի դիւրացնեմ.
Իմ ձեռօք ինքս՝ պիտի նրան՝ առած լինիմ՝ գանակը,
Որ աշխարքի՝ մէջ կենդանի՝ չըպահէ իմ՝ զաւակը,

Չէ, Շամրիկ ջան՝ քաջութիւն չէ՝ անձնատպան՝ լինելը:
կենդան մնալն՝ էլ չէ օգուտ, բայց վընաս է՝ մեռնելը:
Ասրի հարսն՝ էլ այն կուզէ, որ ես կենդան՝ չըմընամ,
Ինչ պարծանք է՝ որ իմ ձեռօք՝ գահս ու աթոռս՝ նրան տամ:

Մենք պայմանով՝ ամուսնացանք, երդմամբ ուխտով՝ ինձ պարէտ,
Որ մի միայն ինձ Ճանաչէ, մեռնի ապրի միշտ ինձ հետ.
Ապա եթէ՝ նա մոռանայ՝ երդէք անկեղծ՝ իմ սէրը,
Թող պատառէ՝ նոր ընտրէ՝ իմ սպրատուր՝ սուսերը:

Ես իրաւունք՝ ունիմ սրեմն, նրան ի մահ՝ մատնելոյ,
Այսպէս անխիղճ՝ գազ հասոր՝ նորա արիւն՝ մանելոյ,
Ես իմ ծառայն՝ էր ննջարան, ես էի գահ՝ նստեցրել,
Երդմնազանց է՝ ինձ խաբել է, պարտիմ նրան՝ մահացնել:

Ո՞վ է կարող՝ նորա գլխին՝ բարձրացնել իւր՝ բազուկը,
Առաջ պէտք է՝ նետը խլել, որ ներսործէ՝ դաշնակը,
Ո՞ւմն եմ կարող՝ խորհուրդս յայտնել, որդիքս չեն՝ յօժարիր,
Պաշտօնէից՝ մէջէն լսել՝ ոք անպամ չի՝ յանդգնիր։

Ամենքեան՝ ծածուկ կուզեն՝ թէ յաջողեն՝ վրնաս տալ,
Ապա եթէ՝ կասկած լինի՝ թէ այն կարէ՝ ի յայտ գալ,
Խոզոյն կերթան, և կը մատնեն, նըրան էլ խօ՝ այն է պէտք,
Այնպէս չարիք՝ կը նկատէ, որ՝ ոչ ծայր պտնեն, և ոչ հետք։

Գայլոյ շըլինք՝ վասն այն է հաստ՝ որ իւր որս ինքն՝ է բռնում,
Ես իմ բազկաւ՝ անելի գործն՝ ընդէր այլոց՝ եմ յանձնում,
Պիտի գողայ՝ ձեռըս եթէ՝ նորա վերայ՝ բարձրանայ,
Մինչէ հոգիս՝ նորա կրծոյ՝ խոյէն պիտի՝ վախենայ։

Ես իմ մահէն՝ չեմ վախեցել, էր զարհուրիմ՝ նորանէն.
Նորան ինձմով՝ էի ծածկում, երբ փայլում էր՝ մահազէն։
Նա իմ սէրն էր։ Ի սէր նորա՝ կեանքս էլ չէի՝ խընայում,
Այժմ Աստի՝ հարսի համար՝ ինձը տածեմ՝ իմ ծոցում։

Ինչով հատոյց՝ իմ երախտեայ՝ այս յիմնամեայ՝ մինջոյին,
Տիկնութեամբըս՝ ոմը չէի՝ կարող լինել՝ առաւելն,
Մեծ շընորհ էր՝ որ իւր տիկնոջ՝ պատվում էր, կամ՝ սիրում էր,
Ո՞ւմ ես արդեօք՝ այր անէի, որ ինձ սիրով չը պատվէր։

Նորա պատիւ՝ այն կը լինէր, որ պահէր իմ՝ պատուէրը,
Անտես չանէր՝ իմ արտատունքս, այլոց չը տայր՝ իւր սէրը.
Դեռ չորս ամիս՝ չէր անցել որ՝ անջատուել էր՝ ծոցիցըս,
Խօթալի պոյժն՝ բերեց Ընթակ՝ թէ թըռել է՝ ձեռիցըս։

Նախնի քաջայ՝ մէջէն արդեօք՝ ումն է կամում՝ նըմանիլ,
Կամ մեր յետնորդք՝ կուզէն նորա՝ օրինակին՝ հետևիլ.
Ինչ է արդեօք՝ այս կամաւոր՝ կուրացեալ մարդն՝ մըտածում,
Չը լինի թէ՝ իւր մտքի մէջ՝ ամենիս կոյր է կարծում։

Ո՛ւր մընաց մեր՝ առաքինի՝ դիւցազնների՝ յարացոյց,
Ան Աստի՝ լիաի հարսը՝ միթէ՞ ամենն մոռացոյց.
Թող մոռանայ՝ միայն Պարէտ, արդեօք ազգն էլ՝ չի՞ յիշեր,
Ան վեհասպանծ՝ արանց պործքը՝ բընաւ իւր միտք չի՞ բերեր:



ԺԲ

ՏՐՑՈՒՆՋ ՇԱՄՐՈՒԿԻ՝ ՀԱՑԿԱՑ ԵՒ ԱՐԱՄՑԱՑ ԵՒ ԱՐՍԱՑԻ ՕՐԻՆԱԿՕՔ

Զէ : Զեմ կարծում, որ վիպասանք՝ մեր նախնեաց գործ՝ մոռանան,
Մեր պիւցաղնեայ՝ առաքինեաց՝ չը տարփողէ՝ երգատան.
Եթէ նոքա՝ մոռանային՝ աղդն ուստի այժմ՝ կիմանար,
Ոյ ամեն մէկ՝ խօսքի մէջ՝ նրանց յիշէր՝ անդադար :

Եթէ Հային է՝ մեր նախահայր, նրան պիտի՝ միաք բերենք,
Ինչպէս էր նա՝ Հուրնէթային՝ սիրում, պատինք՝ որ սիրենք,
Նորա համար՝ Հայկ չուրայաւ՝ Բաբիլոնի՝ Ճոխութիւն,
Նորա սիրով չկանդնենց ապդ, չը Հասանէց նոր՝ աէրութիւն :

Մինէ նեղ էր՝ մեծ Բաբիլոն, որ Հայկ այն տեղ՝ չը կեցաւ,
Կամ սէպուհիւնն՝ էր աւելի որ՝ դէպ այս աշխարհ՝ պաղեցաւ,
Նեբրոդ կամէր՝ Հուրնէթային՝ իւրեան կանանց՝ մէջ խառնել,
Իւր կանանցմէն՝ Հայկի Համար՝ Հարճեր, Հարսներ՝ շընորհել :

Այլ Հայկ չուզեց՝ Հուրնէթային՝ երբէք տեսնել՝ անարգուած,[*]
Իւր զաւակաց՝ Հարսանց, որդւոց և թոռներից՝ բաժանված,
Թողեց կալուածք, երկիր, արներ, անդք և այդիք՝ պարտատան,
Եկաւ այս տեղ՝ բընակվեցաւ, անուն դրեց՝ Հայաստան :

*Աբա-Եղէի մէջ Մենան է պատմում նմին այս առասպելիքը :

Ինչ էր առաջ այս երկիրը, չար ու ցամաք՝ հող ու քար,
Կորզուայ լեռնէն՝ ինչ ի կավկաս՝ հալիս ուրեք թէ պեղ կար.
Թէ մէկ քանի՝ վայրենի ազգ՝ լերանց, ձորոց՝ մէջ կային,
Այն էլ անգութ՝ իրերայ դէմ՝ ցայգ ցերեկ մարտ՝ ունէին:

Երեք հարիւր՝ խաշնապարման՝ մարդ ունէր Հայկ՝ իւր հետը,
Նոցա գլխոյն՝ մահապէն էր՝ սոսկ պարսաքար՝ և նետը.
Ոչ նիզակ կայր՝ և ոչ սուսեր, ոչ գրբրահ և՝ ոչ վահան,
Միայն Բէլն էր՝ սպառազէն՝ ունէր գէնք և՝ վառապան:

Այսքան սակաւ՝ զօրութիւնով Հայկ Նեբրոթի՝ դէմ կանգնեց,
Իւր սիրական՝ ամուսինին՝ աննենգ սիրով պաշտպանեց,
Իւր որդւոց էլ՝ այն էր ասում, լաւ է որ մենք՝ կռտրվենք,
Քան թաց աչքով, մեր պերդաստան՝ գերի ընկած՝ տեսանենք:

Անկեղծ սէրն էր՝ զօրացնողը՝ որ Թշնամու՝ դէմ գինվեց,
Ո՛չ քաջ զօրքէն՝ երկիւղ կրեց, ոչ խռամունքէն՝ հրապուրվեց,
Տեսաւ վէրին խընամարկուն՝ հաւնեց նորա՝ նրպատակ,
Եւ այն նետը՝ նորահրաշ՝ գրկեց նրան՝ օժանդակ:

Նա էլ երբ որ՝ կանգնեց իրեան՝ անակնկալ՝ յաղթութիւն,
Անմոհեան՝ դժուար չեղև՝ հիմնել փոքրիկ՝ պզտութիւն,
Այն իւր անկեղծ՝ սէր առ տուն իւր՝ ետ ազգասէր՝ կռչումը,
Մինչ պերդաստան՝ դեռ այն ազգի՝ սերմն ունէր իւր՝ միջումը,

Բայց ազգասէր՝ արժանապէս՝ կռչուեցաւ մեր նախահայր,
Լուսընթացն էր՝ այն հանդերձեալ՝ Հայոց ազգի՝ նախկին մայր,
Նորա սէրը՝ առ արմատն էր, արմն էլ, ոստքն էլ, տերևքն էլ,
Պիտի 'ընէին՝ անշուշտ սիրուած: Արմատէն են՝ բուսրոջել:

Պարէտ արժան՝ է անուանել՝ նոյն օրինօք՝ ազգասէր,
Մինչ բացայայտ՝ ցոյց է տալիս՝ թէ չէ անգամ՝ որդեսէր,
Ինչպէս սիրած՝ պիտի լինի՝ նա իւր որդւոց՝ զաւակաց,
Երբ նոցա մօր՝ տարապարտուց՝ պարտական՝ է կենաց:

Ես այնպիսին՝ ոչ թե կոչեմ՝ ազգասէր կամ որդեսէր,
Այլ և կասեմ՝ թէ նա երբէք՝ չէ լեալ անգամ՝ մարդասէր,
Ինչ մարդասէր՝ բարուց աչեր է՝ իւր մահերին՝ ատողը,
Յիսուն տարվան՝ կնկան թողած՝ լիրբ Ասրոյն՝ սիրողը։

Իգամոլ չէր՝ երբէք պարէտ, նովաւ էին՝ պարծենում,
Արամի ու՝ Համասփիւռի՝ նըմանութեամբ՝ մեզ զովում,
Եւ Ձշմարիտ՝ իսկ էր զովեստ, յիսուն տարին՝ անցուցինք,
Մեր վարուք, այս անզոյգ ամուլք՝ ազգի սըրտէն՝ մոռցուցինք։

Այլ Արամ մեծ՝ որ պատանի՝ հասակի մէջ՝ անեղնք էր,
Մինչև ի մահ՝ պահեց սրտում՝ Համասփիւռի՝ անկեղծ սէր,
Մահուան ժամուն՝ էլ այն ասաց, թէ Համասփիւռ՝ իմ տատան,
Այնպէս չինէ՝ որ երկուսիս՝ էլ թող լինի բաւական։*

Տեսնենք ումէ էր՝ Համասփիւռն էլ, ինչ էր նա իր՝ հօր տանը,
Դըստերաց մէջ՝ կրտսերագոյն. հարսանց և քերց՝ յետինը,
Մար-Նիւքարի՝ դուստրն Անոյշ՝ որ Սիսակին՝ հարսնացաւ,
Տեսաւ նըրան, և Արամին՝ ի հարսնութիւն՝ խօսեցաւ։

Քան զայն առաջ՝ Արամ ազգքաւ՝ Մարիկին էր՝ սէր տուել,
Ցեղոյ Անոյշ՝ գշխոյին էր՝ յիւր հարսնութիւն՝ հրաւիրել,
Բայց երբ գաւաւ՝ Համասփիւռի՝ բարեբաստիկ ամուսին,
Էլ ոչ յիշեց՝ թէ բընաւ սէր՝ տուել էր այն երկուսին։

Գեռ նոր հարս էր՝ Համասփիւռը, որ Բարշամ՝ մարտ՝ զրպուեց,
Արամ Թողեց՝ հարսին տանը, ինքն Բաբիլոն՝ արշաւեց,
Համասփիւռը՝ ինքնին նորա՝ զըրահները՝ զգեցոյց,
Եւ ինքը այն՝ սև նըժուղի՝ վերայ նըրան՝ նստեցոյց։

*Ոչք Համասփիւռ է մահ Արայէ։

Բաբիլոնի՝ տիկնայք, կուսանք և օրիորդք դեղեցիկք,
Ուզում էին՝ սիրտ Արամայ՝ աւար առնուլ՝ վէտ մարտիկք.
Այլ Համասփիւռ՝ տիկնոջ աչերը՝ նրբան պահեց՝ զերթ վահան,
Արամ մաքուր՝ գարձաւ փառօք՝ իւր հարսի գիրկ՝ Հայաստան:

Եւ երբ Անոյշ՝ կախարդութեամբ՝ Համասփիւռին՝ խօթացրեց,
Ու Արամի՝ պայծառ սիրը՝ անպուճ նենգով՝ մըթացրեց,
Արամ գընաց՝ քանի ամիս՝ աշխարք աշխարք՝ ման եկաւ,
Շատ կին տեսաւ՝ բայց սիրական՝ Համասփիւռին՝ չտեսաւ:

Ընպատ սարի՝ վերայ ուր կայ՝ թաղած նոյի՝ տապանը,
Գաղանի տեսլեամբ՝ լսեց նոյէն՝ Հայկայ նետի՝ մուխ բանը.*
Եկաւ իւր տուն՝ Համասփիւռին՝ գիւթեալ քընէն՝ զարթեցուց,
Դիւցազնական՝ վհատնութենն՝ մինչև ի մահ՝ փայլեցուց:

Միթէ ես քան զԱստղիկ՝ և Համասփիւռ եմ տղեղ,
Ինձ ամենքեան՝ անուանում են՝ Շամրիկ տիկին՝ հրաշագեղ,
Ինչի պիտի՝ նոքա առնուն՝ համհատասար՝ դից պատիւ,
Ես տիկնութեան իմ աթոռէն՝ վայր գըլորվիմ՝ անպատիւ:

Ցանցանքս ինչ է. ինչ եմ արել՝ ընդդէմ կամաց՝ Պարէտի,
Որ նա ինձմէն՝ հեռացրել է՝ աչը իւր հոգւոյ և սըրտի.
Թէ լինէի՝ հանուոյս նըման, անյապ մըլի, հեշտասէր,
Պարէտ դարձեալ՝ ինձ անարգել՝ դահիս վերայ՝ կարող չէր:

Ոչ ապաքէն՝ նա ծառայ է, ես տիրուհի և տիկին,
Գահաժառանգ՝ յաջորդ ես եմ, այլ նա լոկ իմ՝ ամուսին,
Հանիս խըլել՝ էր նինոսի՝ ձեռքէն կեանքն էլ, աթոռն էլ,
Ես իմ փեսին՝ կեանքս եմ տուել, դահս էլ օժիտ՝ եմ բերել:

*Շամրիկ՝ Արտ-երջիկ աստղաստղիկոնը՝ այգեպահ էր իւր տղոց ձեզ պատհիերացոցել:

Ամ՛ԹԻ՝ պարէտ՝ ծաղկեալ աչեացդ, որ Արայի յաջորդ ես,
Բայց պործերովդ՝ այն վեհանձնեայ՝ առաքինւոյն՝ նըման չես,
Նա իւր Նուարդ՝ սիկնոջ այնքան՝ աննենգ սիրով՝ էր սիրում,
Որ Շամիրամ՝ իւր փառաց մէջ՝ նըրանց սէրն էր՝ յաչառում։

Ի՞նչ էր Նուարդ։ Շատաշրջիկ՝ մէկ բաղդայոյ՝ աղջիկ էր,
Իւր ծընողաց՝ հետ արշաւան՝ Հայոց Ճամբար՝ եկել էր,
Երբ որ Արամ՝ Պայ-Աբիսի՝ դէմ ի պայքար՝ էր մըտել,
Կարմիր ձիով նա Արային՝ քանի անգամ՝ էր օգնել։

Արայ նըրան՝ բամբիշ կարգեց, և պարտապան՝ չը մընաց,
Նուարդ սիկնոջ՝ կեանք բարեբաղդ՝ շատ օր անցաւ ու գնաց,
Երբ Շամիրամ՝ առաջարկեց՝ իւր սիրտ ու գահ՝ Արային,
Արայ վասն այն յանձն չառաւ, որ վիշտ չըտայ՝ Նուարդին։

Սիմէ Նուաստ՝ ոք էր սիկին՝ Բաբիլացոյ՝ Շամիրամ,
Որ չըհաճեց Արայ՝ սիրով առնել ինքեան՝ բարեկամ,
Արայ չուզեց՝ ամուսնական՝ գաշն գժրել՝ ուխտանենգ,
Նորա հոգւոյ՝ մէջ կենդան էր՝ մի սէր անկեղծ՝ և աննենգ։

Հոգով սիրեց՝ Հայոց ազգը՝ առաքինի՝ Արային,
Նորա անուամբ՝ կոչեց պայծառ՝ լուսապարկն արևին,
Կեանքի վերայ՝ էլ գրոշմեց՝ այն սիրական՝ անունը,
Եւ նորանով է մինչ այսօր սրբացնում իւր երգումը։

Իմ արևըս, քո արևը՝ որպուհս արև՝ առեղով,
Հայք Արային՝ են խնկարկում՝ նորա անուն՝ յիշելով,
Ողջախոհին՝ ողջակէզ զոհ՝ է բերում իւր՝ յիշատակ,
Ողջամիտ գատ՝ ապագային՝ է անցեղոյն՝ օժանդակ։

Սիմէ Արայ՝ չէ գատախաղ՝ մեղմիկ բարուց՝ պարէտի,
Սիմէ ազգ չէ գատապարտում՝ արդէն նըրան՝ ի սրտի,
Արայ սիրեց՝ բոլոր սրտով, և սիրուեցաւ՝ անդրադարձ.
Նուարդ նորա՝ անկեղծ սիրոյն՝ կեանք իւր Հատոյց՝ փոխադարձ։

Երբ Շամիրամ՝ ձրկեց խոր վիհ՝ իւր Արայի՝ դիակը,
Մինչ վայրապար՝ դերև ելին՝ ջաղդէական՝ հրմայքը,
Եւ կարդացին՝ Արայ կոչեց, և նորա պահ՝ բալմեցուց,
Եւ Հայերի՝ բարկութիւնը՝ պատիր կեղծեօք՝ լռեցուց։

Շատ ժամանակ՝ երկու պատաւք՝ արտասուաթոր՝ աչքերով,*
Անդնդախոր՝ փոսի կշտին՝ շրջած էին՝ դիշերով,
Ձորացել էր՝ երկուցուն ևս՝ հրաշագեղ՝ կերպարան,
Շունչն էր միայն՝ ճնացել մէջ՝ նոյա մարմնոյն՝ անկենդան։

Գահավէժ էր՝ զարհուրելի՝ այն անյատակ խորխորատ.†
Քառասել ժայռք՝ շաւխղները՝ ծածկում էին անընդհատ,
Անհնար էր՝ ցերեկ մերձիլ՝ յահէ պահնակ՝ Ասորեաց,
Ճրագք դիշեր՝ սիտի գաւէր՝ գալուստ պաղտնի՝ այցելաց։

Բայց սէր կանանց՝ ամեն դժուար՝ մերժեց, վանեց, դիւրացոյց,
Եւ անողոք՝ պահապանաց՝ սիրտ խանդաղատ՝ մեղկացոյց.
Քանի գաւն օր՝ անցնելէն յետ՝ Արայի մերկ դիակը,
Խորին վհէն՝ հանեց, տուեց՝ երկու կանանց՝ պահնակը։

Այն խոր վհում՝ անապատ՝ էր մարմինը՝ մընացել,
Եւ մահաւիթ՝ վիրաբերանք՝ պեռ ևս չէին՝ չորացել,
Թարմ էր արիւն՝ նահատակին, երիթացեալ՝ չեն շրմունք,
Համասփիւռն ու՝ Մարիկ տիկին՝ համբուրեցին՝ թուխ աչկունք։

Տարան այն տեղ՝ ուր Արամայ՝ անմահ մարմին՝ կայր թաղած,
Ուր Համասփիւռ՝ տիկնոջ համար՝ տապանի տեղ՝ էր թողած.
Այն տեղ պըրկին՝ Արային էլ. յետոյ մայրն և՝ Մար տիկին,
Ասանդեցին՝ որ նոյն տեղում՝ թաղեն իրենց՝ երկուքին։

* Ողբ Համասփիւռի ի տէր Արայի։
† Սա յետ Համանուագի կոչուեցաւ խոր վիհ։

Երախտապէտ՝ ազգ որ կոչեց՝ իւր Արամին՝ Արամազդ,
Կայծակնակիր՝ Հըրաա կոչեց՝ նորա շանթիկք՝ երկնաստաա,
Եւ Արային՝ անուն դըրեց՝ արև, արեգ, արեգակ,
Նուարդին ևս՝ լուսին կանչեց, փաղաքշելով լուսինեակ:

Զը յագեցաւ՝ ազգի հոգին՝ լուանալ յիշել իւր սիկին,
Քաղցրիկ անուն՝ Լուսինեակին՝ տուեց քաղցրերով՝ տոխակին,
Ասաց Նուարդն՝ է այս թռչնակ, Վարդի անձկով է մաշվում,
Վարդ Արային՝ կարմիր արեան՝ գաղափարաւն՝ միշտ յիշվում:

Համաստիւռը՝ երկնից կամարն՝ է համաստիւռ՝ տարածված,
Ուր արեգակն պայծառակերպ՝ փեսի նման՝ է պատռած,
Լուսին՝ Նուարդ՝ է սըպաւոր, որ պիշերն է՝ երևում,
Իւր կորցրած՝ սիրականին՝ թռչնոց ձայնիւ՝ կոչկոչում:

Առաքինեայ՝ քաղցր յիշատակք մեր սրտից մէջ՝ անմահ կան,
Դիցապնական՝ բարի գործքը՝ թէ ուշ, թէ շուտ՝ յայտ կուգան.
Բարւոյն համար՝ կան միշտ պարծանք, չարի համար՝ պատուհաս.
Այս երկուսն էլ՝ հաստատուն է: Թէ մուրք լինին՝ ձեռնհաս:



ԺԱ.

ԵԱՄՐԻԿ ԴԱՐՁՈՒՑԱՆԻՑ ՁԱՐՐԱԿ Ի ԲԱՆԱԿ

Ի՞նչպէս մոռնամ՝ ես կարպահին՝ և նորա պործք՝ չըյիշեմ,
Նորա չքնաղ՝ Աստղիկ ախինջ՝ սիրելը միտք՝ չը բերեմ,
Արմենակայ՝ Սօսեայ Ձ ջը պըտաւ նըրան՝ կարպոսը,
Այն տեղ կային՝ Թաղած նորա՝ ծնողք Սխաակ՝ Անոյշը։

Այս Անոյշն էր՝ Համապիւռին՝ նախանձելով՝ ջնաւել,
Եւ Հայկապանց՝ գահն Արամայ՝ ձեռքէն խըլել՝ կամեցել.
Արամ նոցա՝ աքսորել էր՝ Արմենակայ՝ Սօսիքը,
Այն տեղ կեցան, այն տեղ մեռան՝ դժբաղդ Անոյշ՝ Սխաակը։

Զառամել էր՝ արդէն Անոյշ՝ որ Աստղիկին՝ յըղայաւ,
Այն անտառի՝ խարձերի մէջ՝ դուստրն ծնաւ, զարդացաւ.
Այս տեղ Աստղիկ՝ փեսայ գտաւ, և Հարսնացաւ՝ ցնծութեամբ,
Քանի ամիս՝ իր կեանք այնպէս՝ անցոյց այն տեղ՝ խնդութեամբ։

Ապա յանկարծ՝ ուրախութեան՝ օրերն անցին՝ դընացին,
Ծընողք մեռան։ Աստղիկ թափեց՝ իր արտասուք՝ ցաւագին,
Դեռ աչք չէին՝ իսպառ ծամքել, որ փեսայն էլ՝ վախճանեց.
Եւ Աստղիկին՝ անյուսութեան՝ անդունդները՝ դըլորեց։

Մրնայեր էր՝ Ասաղիկ միտակ, մէջ լայնարձակ՝ անտառի,
Մեռելն անթաղ՝ կայր առջևը, ինքն քաղցած՝ ծարաւի,
Գիշերը մութ՝ և անձրևոտ, լուսացնում էր՝ բաց աչքով,
Մահ էր կանչում, մահ չէր գտնում, չարչարվում էր՝ տանջանքով։

Երբ իր քաղցը՝ կատաղեցաւ, հագիւ տեղէն շարժեցաւ,
Գընաց մացառք, և կերակուր՝ ինչ որոնել՝ հարկեցաւ.
Քաղցը փոքր ինչ՝ որ յագեցոյց, դնաց ծնողաց՝ գերեզման,
Նոցա կշտին՝ փորեց մէկ փոս, և թաղեց իր՝ սիրական։

Այս տեղ դաւաւ՝ նորան կարդաս, անմըխիթար՝ սրտով լի,
Իր հարանութիւն՝ հըրաւիրեց, արաւ տիկին Հայ ազգի.
Ասաղիկ չուզեց՝ շուտ Արմաւիր, այն անտառումն՝ էր կենում,
Կարդաս նըրան՝ անդ էր երթում՝ փեսայութեամբ՝ այդ առնում։

Այս տեղ ծրնաւ՝ Անուշաման, Սօսանուէր կոչուեցաւ,
Մանկական տիք՝ այս տեղ անցոյց, մինչև եօթն ամ՝ զարդացաւ.
Եւ երբ կարդաս՝ իմ Հանդոյ հետ՝ ժեռաւ Տոսքայ՝ կողմերը,
Անուշաման այն տեղ ընկաւ՝ աստղատակայ՝ Հանկերը։

Տեսաւ Նինուան՝ Ասաղիկ տիկնոջ, հրաւիրեց իր՝ հարսնութիւն,
Ասաղիկ չուզեց՝ Մէջագետաց՝ փաղփինաւիայէ՝ տիկնութիւն,
Անհետ կորաւ՝ այն բանակէն՝ ուր իր որդին՝ կայր գերի,
Գընաց Նինուէ՝ առաջոյ տիկնոջ՝ ունայնաձեռն՝ Ասորի։

Բայց Ասաղիկը՝ որդուդ յետանէն՝ ծածուկ գընաց գէպ Նինուէ,
Անուշաման՝ 'ի սէր իր մօր՝ միշտ սիրված էր Նինուսէ.
Այլ մայրն այրի՝ Նինուէի մէջ՝ աղքատութեամբ՝ էր ապրում,
Միայն այն էր՝ իր սփոփանք՝ որ որդուդն էր՝ տեսանում։

Իր մահուան օրն՝ Ասաղիկ տիկին՝ ծանօթ տուեց՝ իր որդուդն,
Անուշաման՝ իրեան ձեռօք՝ մօր մարմինը՝ ետ հողդն,
Բայց երբ Հայերն՝ եկան նըրան՝ Նինուէիցը՝ յետ տանել,
Նա ևս իր մօր՝ թաղուած մարմին՝ ծածուկ հողից՝ ետ Հանել։

Այս ամենայն՝ արդէն եղև՝ Դեբկէթի իմ մօր՝ դիտմամբ,
Ատալիկ տիկնոջ՝ մարմին բերին՝ մեծահանդէս՝ տխրութեամբ,
Երբ կարկտոսի կմախներն էլ՝ բերին Տոսքայ՝ աշխարհէն,
Ի միասին հողը՝ դըրին՝ Համաստիւռի՝ աջ կողմէն:

Այսպէս էին՝ մեր նախնիքը՝ մինչև ի մահ՝ մխիթարիմ,
Էլ ինչ ասեմ՝ թէ ինչպէս կեանք՝ անցուցին հայր՝ և մայր իմ,
Այժմիկ պարէտ՝ ունի է արդեօք՝ կամում բանել՝ օրինակ,
Կամ ինչ բարի՝ հետևանաց՝ ուզում պատնալ՝ հեղինակ:

Նա ուզում է՝ ինձ անարգել, չունի պատճառ, իրաւունք,
Տեղս կամի՝ տալ Ասորուն, զոհել կին և զաւակունք.
Ես նըրան թոյլ տալ չեմ կարող, պիտի ցմահ՝ ոգորիմ,
Գահաժառանգ՝ զաւակացս է, և ուչ այլոց՝ աթոռն իմ:

Պատուն և շուն, գայլ և վագր, առիւծ և կամ՝ այլ գազան,
Երբ օտարներ՝ իրանց բունին, և կամ կորեանց՝ մերձենան,
Մինչև ի մահ՝ են մարտնչում, մինչ ի վախճան՝ պաշտպանում,
Ա՛նքան միջոց՝ չեն թոյլ տալիս, մինչև իրանք՝ մահանում:

Մինէ ես քան՝ գազաններն էլ՝ ապուշ եմ կամ պակաս եմ,
Որ Ասորու՝ գալ աեմանելուն, թուղում տեղերս՝ և խուսեմ,
Նա գայ նստի՝ աթոռումս, մարդուս առած՝ ձեռքիցըս,
Զաւակներուս՝ ցանուցիր տայ, աշխարհք հանէ՝ աչքիցըս:

Ձէ, Շամրիկ Ջան՝ այդ մի կարծեր, որ շատ թոյլ տամ՝ պարէտին,
Որ Դեբկէթի՝ ժառանգ կոչէի, հայոց տիրէ՝ Ասորի,
Վկաս հարսըդ՝ տիկին գառնայ, տիկին ընկնի՝ քունջերը,
Զաւակներըս՝ աղքատանան, տիրապետեն՝ ուրջերը,

Ա՛հա պատրաստ է՝ այրն իմ պարէտ, ինձ խաբել է՝ վշտապին,
Ուխտ և դաշինք, ընդոստնել է, դաւաճանել՝ ցաւապին,
Բայց ոմ կարէ՝ յաղթահարել, չկայ այնպէս սըրիկայ,
Որ գողի պէս՝ բանակ մտնի, նորան մահու՝ հարուած տայ:

Թէ Արմաւիր՝ շրփոթի հանեմ՝, հայերն փոքր ինչ՝ ոտք կելլեն,
Այլ երբ Պարէտ՝ մօտ Հասանի՝ ինձ նորա յեռք՝ կու մատնեն,
Յայտնի կրուիւ՝ չի յաջողիր, ծածուկ պիտի դարանել,
Գաղտնի լարած՝ ծուղակի մէջ՝ կարէ Պարէտ՝ պարանել:

Ինչպէս ծածուկ՝ թակարդ լարեմ, որ Պարէտը՝ չիմանայ,
Եւ անկասկած՝ ընկնի մէջը, ու իսկ և իսկ մահանայ,
Լաւ մէքենայն՝ իմ ծոյլս է, այն տեղ պիտի նա մնայ,
Ներան պիտի՝ մահը կանէ՝ ի մէջ հանդիսաւ՝ անկողնի:

Արդեօք յայտնե՞մ՝ այս որդւոյս էլ: Չէ: Նոքա չեն՝ յօժարիր,
Նոքա շատ են՝ սիրում հօրը, վըրէն ծուռը՝ չեն նայիր,
Ես ինքս եմ միշտ՝ նոցա սրտի՝ մէջ այն տեղս սէր՝ ներմանել,
Եւ չունիմ ոյժ՝ արդէն նոցա՝ սրտից այն տեղս՝ դուրս հանել:

Լաւ զաւակաց՝ մայր եմ պատել, ամենք մէկ մէկ՝ դիւցազն են,
Մի քան զմի՝ են պերազանց, անխտիր արեամբ՝ հայկազն են,
Ազգը պիտի՝ նոցա մէջէն՝ մէկին ընտրէ՝ նահապետ,
Մինչև այս օր՝ չէինք մէկին՝ ընտրել ո՛չ ես ո՛չ Պարէտ:

Չէ՝ չեմ կարող՝ ո՛չ մէկ որդւոյս՝ էլ կանպնեցնել՝ հայրապետան,
Պարէտն է տոկ՝ իմ յանցաւոր, որդիք մէջերս՝ չունին քան,
Այրապետին՝ կրընին որդիք, յանցանք իմն է, ո՛չ նոցա,
Լաւ է որ մինչ՝ վերջ չիմանան, օգնել կարող՝ չեն նոքա:

Կը աղմըկեն՝ Հայք քանի օր, յեսոյ մէկին՝ կը ընտրեն,
Հայկայ նետը՝ կ'ըլնի ձեռիս, այն շո՛ւտ կառնում՝ Պարէտէն,
Անդրանիկին՝ պիտի ընտրեն, քան զամեն նա՝ էր արժան,
Ինչ և իցէ՝ ազգի ձեռքն է՝ իրաւունք այն՝ ընտրութեան:

Նման էլ Ներան՝ կու տամ յեսոյ, որին ազգը՝ կը ընտրէ,
Չեմ թողնիր որ՝ մէկը նետով՝ այլոց նեղէ, կամ տիրէ,
Առաջ արժանն՝ թոզ ազգ ընտրէ, յեսոյ նետին՝ տիրանայ,
Ոչ թէ ազգի՝ ընտրութեան դէմ՝ նետի ուժով բռնանայ:

Արթակ կօդնէ՞ արդեօք այս տեղ՝ առաջայնել՝ իմ կամքը,
Պիտի փորձել՝ և իմանալ, ինչ էր նորա՝ լաւանքը,
Իւր գլուխը՝ ձեւայնում էր՝ ինձ մըտերիմ՝ բարեկամ,
Եւ ասում էր՝ թէ երախտեաց՝ պարտապան է՝ յարաժամ։

Բայց ինչ ձեւով՝ ես հասկացնեմ, բացայայտեմ իմ միտքը,
Որ բընաւին՝ իմ խօսքերից՝ կասկած չառնու՝ Արթակը,
Ալ ներդաւոր՝ խորամանկ է, շուտ ամեն ինչ՝ կիմանայ,
Վախեմ՝ թէ յետ՝ իմանալոյն՝ իմ առջեւս էլ՝ լրբանայ։

Ինչ զարմանք է, որ ասէ թէ՝ ինձ կարիաւէ՝ քո ձեռը,
Ամուսնացիր՝ և ինձ ձօնէ՝ նահապետի՝ աթոռը,
Ան ժամանակ՝ եթէ չանեմ, պիտի կատղի, բարկանայ,
Պիտի փախչի՝ պարէտի մօտ, հաւատարիմ՝ ձևանայ։

Բաղդախընդի՛ր ժըպիրհ ումն է, կուզէ իւր անձն՝ ձշմարտել,
Եւ այս դիտմամբ՝ կաճապարէ՝ համ մատնել, համ զրպարտել,
Դեռ ձեռնամուխ՝ չեղած բանի՝ պիտի լինիմ՝ խայտառակ,
Ախոյենիս՝ լարած նետից՝ անպատասպար՝ նըշաւակ։

Արթակի հետ՝ այսպէս խօսիլ՝ ոչ պէտք է ինձ՝ ոչ արժան,
Ապարատան՝ արթանեկին՝ չըտալ առիթ՝ լրբութեան,
Նըրան մէկ էլ՝ յետ կուզարկեմ՝ պարէտի մօտ՝ դէպ բանակ,
Երբ յետ կու գայ՝ յայտնի կըլնի՝ ամեն ինչ այն՝ ժամանակ։

Ճամրիկ տիկին՝ հրամայեց՝ իւր մօտ կանչել՝ Արթակին,
Արթակ եկաւ՝ գըտաւ տիկնոջ՝ բազմեալ մէջ իւր՝ սենեկին,
Այս երկուսի՝ սրտերի մէջ՝ արդեօք ինչքե՞ր՝ կան ծածկած,
Ինչ առիւծներ, ինչ վիշապներ, մահ ու խոր տեղ՝ են պատկած։

Արթակ յանդուգն՝ է անվեհեր, ձեռին ունի՝ և նետը,
Արմաւիրում՝ շատ համախոհ՝ ունի կը ցորդ՝ իւր հետը,
Այնպէս հընարք՝ է գործ դըրել, որ երբ մեռնի՝ քաջ պարէտ,
Աղմուկ կընկնի՝ ծերերու մէջ՝ նա կ՚ընտրվի՝ նահապետ,

Այս ամենը՝ պատրաստել է, մընացել է՝ Շամրիկը,
Նորա էլ յոյս՝ ունի նեռով իւր կողմ քաշել՝ սըրտիկը,
Նա ինչ գիտէ՝ Շամրիկի միտք, նորան մէկ կին է կարծում,
Դերկէթ տիկնոջ՝ դուստր լինելն՝ բընաւին չէր՝ մրտածում։

Յաջողվ կերթար՝ Արբակի գործ՝ թէ Շամրիկի՝ այր լինէր,
Շամրիկ աշուն՝ իւր սրտի հետ՝ Արբակի ձեռք՝ յանձն առնէր,
Բայց կամում է՝ Շամրիկ այն գահ՝ որվուց մէջէն՝ մէկին տալ,
Իւր միտ՝ որ ցարդ անարատ է՝ միշտ իւր ձեռին՝ ունենալ։

Անարատ է սիրտ Շամրիկի՝ օտար սիրոյ՝ նեռերից,
Պարէտի սէր՝ ընկճվել է՝ ատելութեան՝ կիրքերից,
Վերէժ ձօնել՝ է Շամրիկին՝ խէթ, քէն և ոխ՝ և մախանք,
Տիկնոջ հոգւոյ՝ դատարկութեան՝ տիրապետել՝ յաչագանք։

Շամրիկ ասաց, Արբակ՝ ես քեզ՝ կուզեմ բանակ՝ ուղարկել,
Եւ քո ձեռամբ՝ նահապետին՝ ողջոյն սիրոյ՝ աւաքել,
Ասա որ ես՝ շատ առողջ չեմ, ուղևորիլ՝ չեմ կարէր,
Լաւ էր որ ձա՝ ընդ փոյթ իւր տուն՝ վերադառնալ՝ շտապէր։

Այս որ ասաց՝ երկու աչքը՝ յառեց նորա երեսին,
Այս հայեացքէն՝ քոմմեցան՝ համայն ոսկերք՝ Արբակին,
Ձը մարթացաւ՝ բերան բանալ, երկըրպագել՝ պատրաստվել,
Երբ քաղաքէն՝ շատ հեռացաւ, հազիւ թէ յուշ՝ իւր գարձաւ։

Ասաց. Արբակ՝ այս սիրտհոյն՝ ես կամենում՝ կին ածել,
Երբ նորա մէկ՝ հայեցուածքին՝ չըկարացիր՝ պատասխանել,
Խելքըդ պլոխդ՝ լաւ ժողովէ. յիմար միտքդ՝ ձեռք վեր առ,
Նահապետից՝ գահի համար՝ մի հաներ ձիկ, կամ քարտաւ։

Ո՞վ թէ ոքան՝ վատասիրտ ես, վախենում ես՝ կընոջէն,
Երկու անգամ՝ չեն կարող որ՝ հոգիդ քեզմէն՝ պահանջեն,
Մէկ անգամ մահ՝ պարտական չեմ՝ գահի համար՝ մեռնիլը.
Ասել լաւ չէ՞ քան թէ անարգ՝ ծառայի պէս՝ ապրիլը։

Չէ՝ խելօք Հայք, ինձ չէք կարող՝ այդ բաներով՝ կաղացնել.
Եւ իմ մըտքէս՝ նահապետաց՝ աթոռոյ փառք՝ հեռացնել.
Նա այսօր վաղն՝ պիտի մեռնի, ոմ կը մընայ՝ աթոռը,
Թէ ես չառնում, այլ էշ կու գայ՝ կը կապվի այն՝ ախոռը:





ՎԵՀԱՆՋՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԻՐՔՈՅ

Ուրախ անցաւ՝ այն մեծ դիշեր, որ հազարաց՝ կեանք բերեց,
Մահէն փրկուած՝ աղքատներին՝ ուրախութիւն՝ լոյս ծագեց,
Սինեմայ, Շահմար՝ և կուսակալ՝ ընդ առաւօտն՝ դուրս եկան,
Որ Պարէտի՝ ընծուելենէն՝ լիաբերան՝ գոհանան։

Քաղաքի մեծ՝ դուռը բացվեց։ Ինչ տեսան դուրս՝ պարսպից.
Երեկվան պէս՝ Պարէտ դրկել՝ էր հաց առատ՝ բանակից.
Եկան դեսպանք՝ արքայազունք, մըտան վըրան՝ Պարէտի,
Սինեմայ թափեց՝ նորա առջև՝ մեծ գոհութիւն՝ իւր սրտի։

Ասաց. Պարէտ՝ արքայակերպ՝ յանդգնութիւն՝ չըհամրես,
Եթէ հոգւոյս՝ նկարացոյց՝ հոգւոյդ աչօք՝ նշմարես.
Քո գթութիւն՝ պատճառ առիր՝ ինձ առատ՝ յուսալոյ,
Եւ քո վեհանձն՝ շընորհէդ նոր՝ ողորմութիւն՝ հայցելոյ։

Սինեմայ դշխոյ՝ ասա լըսեմ, տուեց Պարէտ՝ պատասխան,
Ես մէկ բան՝ եմ՝ կասկած կրում, տեսնենք ծիր քո խորհրդեան.
Ինչ կարելի՝ է կատարել, կամ ինչ խղճի՝ ընդդէմ չէ,
Խոստանում եմ՝ քեզ շնորհել, դու համարձակ՝ աղաչէ։

Քանչ նահապետ՝ պատասխանեց՝ Սինեմայ, կարող՝ չեմ ասել.
Ինչ ես կամիմ՝ քեզմէն հայցել, իմ հայր չէր սայր՝ և յիշել.
Միայն վեհանձն՝ մեծ դիցազանց՝ խղճի մտայ՝ չէ ընդդէմ.
Այլ թէ նինոս և թէ նինուաս՝ միշտ կ'անէին՝ նորա դէմ:

Ինքան վընաս՝ են տեսել Հայք Շամիրամի՝ օրերից,
Որ շընորհ ինչ՝ պիտի առ մեզ՝ չելնէ նոցա՝ ձեռներից,
Բայց դու երէկ՝ ցոյց տուիր որ՝ թշնամոյդ ևս՝ կողմից,
Այսօրվան քո՝ արած շնորհիւ՝ պիտի լեզուաւ՝ չը գովվիս:

Դու գովեստիդ՝ ևս չես կարօտ, որ հաց ափուես՝ թշնամոյդ,
Մահը բունի՝ հեռացնում ես, կեանք պարգևում՝ առելոյդ,
Ինչ ասեմ որ՝ գովեստ լինի, որ լեզուն է՝ բաւական,
Որ կարենայ՝ արժանապէս՝ լինել քեզմէն՝ գոհաբան:

Անկարող է՝ քո գթութիւն, երէկ այսօր՝ ցոյց տուիր,
Ուրեմն քո այն՝ գթած սրտին՝ գընել սահման՝ մի՛ ներիր.
Թող որ առաւ՝ այն յորդ ազբիւր՝ ամեն կողմանք ծաւալի,
Նորա աւելն ամեն խոչ, խոթ, ամենայն թումբ՝ տապալի:

Երկու հղբարքն՝ կան քո ձեռին, պերսթեան մէջ՝ են հեծում,
Մէկի այրի՝ նոր հարսն ահա՝ քո առջևն է՝ հեծեծում.
Հազարներին՝ կշտացուցիր, բիւրուց կեանք՝ պահեցիր,
Երկուց հղբարցն՝ էլ ողորմիր, և նոցա կեանք՝ ինձ շնորհիր:

Սինեմայ գշխոյ, պատասխանեց՝ Պարէտ զուարթ երեսով,
Շնորհակալ՝ եմ քեզանից՝ ոչ թէ խօսքով, այլ հոգւով,
Որ դու ինձնոր՝ պատճառ տուիր, ողորմութիւն ցուցանել,
Ես չունիմ կամք՝ քո եղբարց և՝ պերսթեան մէջ՝ տեսանել:

Դեռ չէր Պարէտ՝ խօսքն աւարտել, որ այս երկու՝ սրտաւորք,
Նահապետի՝ մօտ վազեցին՝ որպէս թռչունք՝ թևաւորք.
Փաթըթվեցան՝ գարշապարաց, համբոյր տուին՝ գոհութեամբ,
Եւ խրտնած՝ մեծ՝ բերկրութենէն՝ ցուցին ուրախ՝ համրութեամբ:

Ճարտարախօս՝ այն պերճ լեզուք՝ կցուել էին՝ քիմքերին,
Շըրթունք չէին՝ հընազանդլուա՝ մաքէն բղխած՝ խօսքերին,
Պարէա ղպայ՝ սրտի մէջ ահ, որ չըցընորին՝ մրտաթափ,
Կամ ծայրածեալ՝ ուրախութեամբ՝ չը պլորվին՝ ուշաթափ։

Նահապետի՝ հըրամանաւ՝ Սարաքոն ու՝ Արմակը,
Բերվեցան այն՝ ուրախ խորան, առնուլ անձանց՝ փրկանքը.
Էլ չը թողեց՝ պարէտ կանանց՝ կրկնել իրեանց՝ գոհութիւն,
Ասաց, ահա՝ այսուհետև՝ վերջացաւ ձեր՝ ղերութիւն։

Մի ևս հանէք՝ սուր դէմ Հայոց, ազատութեամբ՝ ինքացէք,
Հայոց ազգի՝ անյիշաչար՝ լինելը լաւ՝ հասկացէք.
Ձեր Հայր թէպէտ՝ Թշնամեաց դէմ՝ միշտ քաջութեամբ է կանգնում,
Բայց Հայերու՝ կալուածներում՝ ասպատակ զուր՝ է սիրում։

Մինչ խորանէն՝ դուրս դընացին, երկիրպագին՝ եօթն անգամ,
Ասում էին՝ քո երախտիք՝ պիտի յիշենք՝ յարաժամ.
Արդեօք մեր Հայր՝ ինչպէս պիտի՝ հաշտութեան խօսք՝ ըսխէ,
Կամ քեզնից էլ՝ ինչ պըղտութիւն՝ իր սէրութեան՝ ըսպասէ։

Հայապետն զօրք՝ էլ խնդացին, երբ տեսան այս՝ գըղտութիւն,
Ամենեցուն՝ սրտից մէջն՝ բղխում էր մեծ՝ գոհութիւն,
Զուարթանում՝ էին հոգիք՝ նահապետի՝ այս գործով,
Ձէին կարում՝ բընաւ յայտիլ՝ նոր նոր ընորհաց՝ գովեստով։

Արքայորդիք՝ հասան նինուէ. քաղաքացրունք՝ բացվեցան.
Սարաքոսը՝ և Ճահմարը՝ ուրախ դունէն՝ ներս մտան.
Քաղաքացիք՝ չէին կարում՝ իրեանց աչաց հաւատալ,
Ուրախութեամբ՝ ըսկսեցին՝ հարսուփեսին՝ առաջ գալ։

Մեծ էր նինուէ՝ Տիգրիս գետոյ՝ երկու ափում՝ տարածված.
Նայն ընդարձակ՝ էր հարթավայր՝ գաշտաց հովտաց՝ մէջ փռված,
Շինուածներըն՝ բազմայարկեան, գտակիռնօք, վեհատամբք,
Ամարանքըն՝ ունէին շրջիլ՝ սիւնազարդած՝ պատշգամբք։

Երբ լսվեցաւ՝ քաղաքի մէջ՝ թէ Սարաքոս և Արմակ,
Ազատուել են՝ գերութենէն, և եկել են՝ յետ քաղաք,
Դուրս են թափվում՝ ապարանքից, որ այն գերեայ՝ տեսանեն,
Տեսնում են որ՝ Սինեայ Շահմար հետերն առած՝ գնում են։

Փոխարկվել է՝ կերպ քաղաքի, ամէն երէկ էր՝ վերջացել.
Սրտաւորայ՝ դառն արտասուք՝ աչքերնից է՝ յամաքել.
Ազատուել են՝ արքայորդիք՝ արգելանքէն՝ գերութեան,
Քաղաք լի է՝ ծայրէ ի ծայր՝ նշաններով՝ ցնծութեան։

Գեռ ոչ ամենք՝ են իմանում՝ թէ ոմն է այն կատարել,
Հարևանցի՝ լըսել են թէ՝ հայր Սինեայն է Ճարել,
Եւ խաժամուժ՝ խուռն ամբոխը՝ գեռ իւր քաղցն է՝ յագեցնում,
Փոխոխութեան՝ պարապայից՝ ուշադրութիւն՝ չէ դարձնում։

Այլ երբ մըտան՝ արքայորդիք՝ քաղաք՝ բանտէն՝ ազատված,
Խուժան հնչեց՝ ձայն նուագաց՝ մինչ չէր արքայն՝ լուր առած,
Դարպասներն՝ տափակ տանիք՝ բազմութիւնով լցվեցան,
Ըր մընացին՝ գատարկ թէ գուռ, թէ լուսամուտ, պատուհան։

Շահմար յիշեց՝ իւր գիշերով նախկին՝ պինդ էն՝ մտնելը,
Եւ հարտանեաց՝ ուրախութեան՝ պակասութիւնն՝ գնելը,
Երբ իւր հօր հետ՝ ի միասին, անց էր կենում՝ խուսելով,
Սովալլուկ՝ գիսակնացած՝ մարդոց վերայ՝ կոխելով։

Այլ այժմիկ մինչ՝ իւր վեսի հետ՝ ձեռք ձեռք բռնած՝ գընում են,
Եւ խուժանի՝ ուրախութեան՝ համախմբած՝ տեսնում են,
Միտքը եկան՝ մուսանպամ՝ հին օրերի՝ անցքերը,
Եւ իւր այժմեան՝ խնդութենէն՝ լցվեցան՝ աչքերը։

Ստէպ նայում՝ էր Սինեային՝ որ յետևէն՝ գալիս էր,
Եւ Արմակի՝ հարցուփորձին՝ պատասխանը տալիս էր։
Երկու երկու՝ են մեն գալիս, բոլորն էլ այն՝ են խօսում,
Եւ գարեհի՝ գերութիւնը՝ մինչև երկինք՝ բարձրացնում։

Դեռ հեռի էր՝ արքայարանն՝ Սինթայ, Շահմար՝ յոդնեցյան,
Անցող դարձող՝ բազմութենէն՝ ձի ուզելին, նստելյան,
Նոցա չորս կողմ՝ խառնուած էին՝ արանց կանանց՝ խուժանը,
Գերիներուն՝ և դշխոյից՝ ցուցնում սիրոյ՝ նշանը։

Իրաւ չքնաղ՝ էր Շահմարը, մանաւանդ այն՝ վայրկենին,
Երբ սրտաշարժ՝ սև քուրձերով՝ անցնում էր մէջ քաղաքին,
Բաբիլոնի՝ մէջ զարդացած՝ չէր զսպմանում՝ շինուածքէն,
Սարաքոսի՝ ազատութիւնն՝ չէր հեռացնում՝ իւր մտքէն։

Շահմար մուտքաւ՝ առնն քաշած՝ անցեալ աւուրց՝ նեղութիւն,
Սինթայ ուրախ՝ էր որ հաստց՝ հայրենակցայ՝ օգնութիւն,
Մտածում էր՝ իւր սրտի մէջ՝ իւր աջողակ գործերը,
Որ քաջ Պարէտ՝ անտես չարաւ՝ անհրնարին՝ խնդիրը։

Արդէն հասել՝ էր համբաւը՝ արքունական՝ ապարան,
Թէ բանտարկել՝ արքայորդիք՝ ժամանել են՝ փրկութեան.
Թագաւոր է՝ աւազանին՝ նոցա առաջ՝ դուրս ելան,
Երկուց խմբից ուրախ դիպմանք՝ որդոստայում՝ միացան։

Թէպէտ լոյն էր՝ այն որդոստայ՝ որ էր հանդէպ՝ դարպասին,
Բայց բնութերք՝ կան ժողված՝ արք և կանայք՝ միասին,
Ջինուորք, աւազք, հարուստք, աղքատք, վաճառականք, պար քրմայ,
Փարթամ բամբիշք՝ պատպարակօք, կամ մէջ սայլից՝ և կառաց։

Իսկ պերպատանն՝ արքայական՝ կայր ի մէջ նեղ՝ շրջանի,
Շրջապատած՝ էր բազմահոյլ՝ խառնաղանճօք՝ խուժանի,
Ամենեցուն ցանկալի է՝ տեսնել այն նոր՝ տեսարան,
Որ համախումբ՝ քաղցրված են՝ ամեն աւխթք՝ ցնծութեան։

Ձէր հաւատում՝ խեղճ թագաւոր՝ թէ իւր որդւոց է տեսնում.
Ափշում էր թէ ինչպէս՝ Պարէտ այնքան շնորհ՝ է անում.
Ամաչում էր՝ ժողովուրդէն, երբ լսում էր՝ թէ հայքը,
Ուզում էին՝ մեղմել նոցա՝ արդելական՝ կապանքը,

Շտապում էր մեծ քաղաքը՝ շտապով դառնալ՝ ապարան,
Բայց ամբոխ չէր՝ թողնում մէջէն՝ շրջափակած՝ պերպատան.
Աղաղակում՝ էր թէ մեզ էլ՝ իմաց արէք՝ բովանդակ,
Թէ ինչպէս այս՝ ամեն բանը՝ դըլուխ եկաւ՝ աջողակ:

Բռնադատվեց՝ Սինեմայ դշխոյ՝ մուհեսիկի պէս կանչել,
Եւ ամեն ինչ՝ ծայրէ՝ ի ծայր՝ խաժամուժին՝ հասկացնել.
Թէ ինչպէս ինքն՝ ապաւինեց՝ նահապետի՝ դըժբաղեան,
Առաջ խնդրեց՝ հընար տալէն, կարօտեըց՝ փրկութեան:

Ցետոյ երկու՝ եղբարց համար՝ խնդրեց շընորհ՝ պարէտէն,
Եւ առանց մէկ դժուարութեան՝ հանեց նոցա՝ ի բանտէն.
Դեռ Սինեմայ էր խօսքն աւարտել, որ սուրհանդակ վազեցաւ,
Եւ աւետեց՝ որ հեռուից՝ մեծ կարաւան երևցաւ:

Միւս սուրհանդակ՝ համբաւ բերեց, որ Հայք՝ Ճանփայ բաց արին,
Եւ կարաւան՝ ողջամբ անցաւ, ընդ մէջ Հայոց՝ բանակին,
Երրորդն հասաւ՝ և լուր հասոյց՝ թէ հայի է՝ կարաւան,
Եւ թէ եկել՝ հասել է արդ՝ մօտ քաղաքի մեծ դըրան:

Բացին արձակ՝ քաղաքաղուն, կարաւանը՝ ներս մըտաւ,
Կարաւանի հետ՝ Հալենոս՝ իւր հօր առջև՝ կանդնեցաւ.
Պատմեց՝ թէ երբ՝ սովի լուրը՝ տարածվեցաւ՝ երկրումը,
Իսկոյն գործ եղ՝ որբեան հընար՝ ունէր իւրեան ձեռումը:

Շուտ հաւաքեց՝ հայ ու պաշար՝ և պատրաստեց՝ կարաւան,
Եւ երբ լսեց՝ թէ սովամահ՝ ընկել է մէջ՝ բազմութեան.
Քըշել տուեց՝ կարաւանը՝ առանց մէկ հաս՝ պինտուրի.
Եւ կանգնեցաւ՝ դէմ պահեկաց՝ որ շուրջ Հայոց բանակի:

Թողեց այն տեղ՝ կարաւանը, ինքը մըտաւ՝ ի բանակ,
Գացաւ հանդէպ՝ նահապետին, անցքը պատմեց՝ բովանդակ,
Պարէտ ասաց. կարօտեըց՝ ես իմ հայըը՝ բաշխեցի,
Զկնայ արդեըք, թող ներս երթան՝ պարկ պաշարոյ և հացի:

Ճանապարհին՝ եղբարցս և՝ ազատութիւնն՝ իմացայ,
թէ Ասորիք՝ ոտքան սխալ՝ են դէմ Հայոյ՝ հասկացայ.
Հայոյ հետ պէտք չէ ունենալ՝ թշնամութիւն, դժուութիւն,
Լաւ կը լինի՝ որ այսօր իսկ՝ մէջերս ընկնի՝ հաշտութիւն:



ՊԱՐՒՏ ՄՏԱՆԷ Ի ՆԻՆՈՒԷ ԾԱՂԹԱՆԱԿԱՒ

Հաշտութիւն չէ՛ մեզ հարիւրը, ալատակեց՝ ամբոխը։
Թայէք դուռը՝ որ ներս մանի՝ գորավարուն՝ յաղթողը,
Ինչ հաշտութիւն այն մարդոյ հետ՝ որ յաղթող է և գլխաճ.
Որ մեզ համ կեանք՝ է պարգևել, համ տալիս է՝ առատ հայ։

Իրաւ Պարէա՝ այնքան մեծ էր՝ նինուէացոյ աչքումը,
Որ թագաւոր էր համարում՝ ամեն մարդ իւր՝ հոգումը.
Եթէ հարիւր յաղթանակօք՝ իւր գլուխը՝ պըսակէր,
Այնքան հաստատ՝ նոցա սրտին՝ սիրապետել՝ կարող չէր։

Էլ ուրիշ խօսք՝ չէր դուրս գալիս՝ քաղաքացոյ՝ բերանից,
Բայց թէ միայն՝ եւանգելին՝ բան գոհութեան՝ Պարէտից.
Հայերը մեր՝ բարեբարքն են, կանչում էին՝ ամենքը,
Ինչի՞ նոցա՝ դէմ փակուած կան՝ մեր քաղաքի՝ դըրուռները։

Բայէք դուռը, թող Հայերը՝ մեր սեղանում՝ վայելեն,
Արքունական՝ դանձարանէն՝ ինչ որ կամին՝ թող Հանեն,
Իրանց տուած՝ հացի գինն է, դեռ պարտական՝ կը մընանք,
Մեր կեանք նոցա՝ պարգևածն է, շընորհ պիտի իմանանք։

Թագաւորը՝ շուարալած էր՝ ամբոխին այս՝ խօսքերից,
Որ օրհասման՝ պէս դղրդում՝ էր թանձրաբարդ ամպերից,
Զօրականք խառն՝ են խուժանի՝ հաղարաւոր՝ բազմութեան,
Թագաւորին՝ չէ մընացել՝ մէկ հատ խորհիկ՝ խլրտման։

Հըրամայեց՝ որ քուրմերը՝ հապնին իւրեանց՝ զարդերը,
Տաճարներից՝ հանեն ամեն՝ կըրօնական՝ դրօշները,
Քաղաքի մեծ՝ դուռը բանան, հանդիսապէս՝ դուրս երթան,
Հըրաւիրեն՝ հայերին որ՝ եղբայրաբար՝ նիւնուէ դան։

Լայնածաւալ՝ ասպարէսը լցցըվել էր՝ բազմութեամբ,
Նուագների՝ հետ Ասորիք՝ պար են բռնում՝ բերկրութեամբ,
Հայերն իսկոյն՝ իմացան որ՝ իրանց քաղաք՝ են կանչում,
Նիւնուէացիք՝ Հայերի դէմ՝ էլ չեն գինուք՝ մարտնչում,

Հայերու էլ բանակի մէջ հնչեց բամբիւռ և թմբուկ,
Ըսկըսեցին՝ պար բռնուրել՝ ցրցյասաջք և՝ հապնեցուք,
Դեռ չէին այս՝ երկու բանակք՝ ուրախութեամբ՝ խառնըվել,
Որ արքայի՝ փառաց հանդէս՝ ըսկըսեց դուրս ելանել։

Հարիւրաւոր՝ պատարագիօք՝ գալիս էին՝ քաղաքից,
Ոսկեզօծ են՝ և զարդարած՝ ամեն կազմուածք՝ ծառայից,
Թագաւորը՝ և թագուհին՝ քան զամենը՝ առաջ են,
Արքայորդիք, արքայազունք՝ հետ զհետէ՝ հասնում են,

Սարաքոսի՝ հետ նստած էր՝ իւր նորահարս՝ Շահմարը,
Որ հազել էր՝ իւր հարսնութեան՝ պեզապաճոյճ զարդերը,
Ուրախութիւնն երեսում էր՝ նորա պարկեշտ՝ երեսին,
Փառք ու պատիւ՝ շրջապատել էր չորս կողմէն՝ երկուսին։

Ուրոյն ուրոյն՝ խումբ են կազմում՝ ամեն մէկի՝ ուղեկիցք,
Ծառայք, նաժիշտք, նուագածուք՝ այն հանդիսի՝ պարակիցք,
Առանձին են՝ թագաւորի՝ և թագուհւոյ՝ երախանք,
Եւ առանձին՝ Սարաքոսի՝ նուագերգուք, զօրականք։

Նոյնպէս ուրոյն՝ Սինեմայ դշխոյ՝ էր գալիս իւր՝ նաժշաօք,
Եւ ասկեհուռ՝ հանդերձներով պճնազարդած՝ մեծուհեօք,
Նորա հետ ևս՝ կան ուղեկից՝ քընարահարք՝ երգեցիկք,
Պատպարակի շրջապատը՝ բոլորված կան՝ իւր պայիկք։

Արմակ, Սուսար՝ և Հալենոս, նմանապէս ուրոյն են,
Սրքա երեք՝ առանձին խումբ իւրեանց պարտք՝ կազմում են,
Եւ միս երկու՝ արքայորդիք՝ որ դարձել են՝ արդ Նինուէ,
Իւրեանց դասուք՝ ուրախութեամբ՝ գընում են հետ զհետէ։

Տիկնայք, բամբիշք՝ և մեծուհիք, հարճք և կանայք՝ ասպաց,
Որք միանգամ՝ զարդարում են՝ յարկ կանանոց՝ արքունեաց,
Դեսպակաց մէջ՝ բազմած նստած՝ չորս ծառայից՝ շալակին,
Գընում են մեծ ուրախութեամբ՝ հանդէպ Հայոց՝ բանակին։

Լայնածաւալ՝ դաշտք ու հովիտք՝ խոնել են հոյլք՝ բազմութեան։
Ծայրը վաղ է՝ հասել Հայոց՝ բանակեսեղ՝ լայնութեան,
Ալ միս ծայր՝ դեռ քաղաքի՝ դռներից նոր՝ է ելնում,
Գամ քան զգամ՝ մերձենալով թիւ բազմութի՝ թանձրացնում։

Մաս ջսեաքսեր՝ Հայոց բանակ՝ նուապարան՝ հնչելով,
Հայեր նրան՝ ընդունեցին՝ փող ու սրինդ՝ փչելով,
Նստած էր իւր՝ տաղաւարում՝ Հայաստանի՝ նահապետ,
Երբ ներս մտաւ՝ թագաւորը՝ նա խընդալին՝ ողջոյն ետ։

Ալջազեսից՝ միապետը՝ ասաց սիրով՝ պարէտին,
Դու բարերար՝ և բարեկամ՝ հանդիսացար՝ իմ զահին.
Իմ որդուցս՝ ազատեցիր, ժողովրդեան հաց տուիր,
Հալարաստրք՝ և բիւրաստրք՝ մահու ձանկէն՝ փրկեցիր։

Ուրեմն ինչի՞ ես այս դաշտում՝ մեծ բանակըդ՝ ամրացրել,
Նինուէի դուռն՝ վաղ է հանդէպ՝ քո գըլխութեան՝ լայն բացվել.
Քանի որ դու՝ Տիգրիսէն ջուր՝ պիտի խըմել՝ ասա զօրաց,
Քո է Նինուէ, և ոչ թէ իմ, այս է փափաք՝ Ասորեաց։

Ուրախ թեամբ՝ կընիմ քեզ հիւր, պատասխանեց՝ Պարէտը,
Հաշտութեան ուխտ՝ կը հաստատեմ՝ անխախտ երդմամբ՝ քո հետը,
Մենք հարեան՝ ենք դարեւոր, կարենք խաղալ՝ կեանք վարել,
Եւ մեր երկրաց՝ անդորրութեամբ՝ բազդաւորել՝ և տիրել:

Ձայնէս երկուց՝ ազգայ զըլուխք՝ մէկ զմէկի՝ պատուեցին,
Ցետոյ նոյն իսկ՝ հանդէսներով՝ դէպ ի ներսն՝ դիմեցին.
Արքունական՝ դարպասի մէջ՝ բընակվեցյաւ՝ Պարէտը,
Բոլոր Հայոց՝ աւագախումբ՝ ունէր առաջ՝ իւր հետը:

Անհնար է լեզուով պատմել՝ ներսէսյոյ՝ ցնծութիւն,
Նոյա տուած՝ Հայոց ազգին՝ ուրախ սրտով՝ յարդութիւն.
Ամեն տըներ՝ լցվել էին՝ Հայ զօրականք՝ որպէս հիւր.
Ամեն տան մէջ՝ հնչում՝ էին նուագ, թմբուկ և եղջիւր:

Զարմանք չէր որ՝ ազգապետաց, ցեղապետաց՝ Հայկազանց,
Ներսէսացիք՝ նուիրում՝ են՝ ամեն ուզերձք՝ բերկրութեանց,
Նաև պեղջուկ՝ տոհմականաց՝ այնպէս պատիւ՝ են ցուցնում.
Որպէս թէ այն՝ մեծարանօք՝ իւրեանց անձն են՝ մեծացնում:

Հայք այն մասին՝ չէին ուրախ որ՝ ներսէսյոյ՝ յաղթեցին,
Այլ ուրախ են՝ որ հաշտութիւն՝ երկու ազգի՝ հիմնեցին.
Ձմեռն անցել՝ էր վաղ ուրեմն, գարնանամուտ՝ մօտեցել,
Աշխատասէր երկրագործի՝ վաստակներու՝ ժամ հասել:

Վաղ էր Հայկազն՝ հանել ձիոյ՝ գլխէն գարուոյ տոպրակը,
Վաղ էր կանանչ՝ գալարուոյ մէջ՝ ձին նորել իւր՝ սմբակը.
Վաղ էր հովտաց՝ մէջ երևիլ՝ կակաչ, բացուել՝ մանուշակ,
Եւ երփնազարդ՝ գեղեցկութեամբ՝ պսակել կոկոն՝ շահպուրակ:

Մինչ Հայաստան՝ պատրաստվում էր՝ գարնան առաջ՝ ելանել,
Ներսէսի մէջ՝ արդէն գարուն՝ վաղ էր իւր շունչ՝ տարածել.
Պարէտ տեսնում՝ էր որ իւր զօրք՝ տուն յետ դառնալ՝ են ուզում,
Ինքըն նոյնպէս՝ վերադարձի՝ պատրաստութիւն էր տեսնում:

Խաղաղութեան գաշինք, պայմանք՝ հաստատեցին՝ զօրավարք.
Արդէն էին՝ ուղևորել՝ կարաւանօք՝ ձոխ աւարք.
Օր ըստ օրէ՝ պակտում էին՝ բանակից Հայ՝ զօրականք,
Որ ձոխացած՝ էին դանձիւք՝ քրտնավաստակ՝ շինականք։

Սոքա թէպէտ՝ աւաջ էին՝ այն աշխարհէն՝ հեռանում,
Եւ Հայաստան՝ վարուցանքի՝ հասանելոյ՝ շտապում,
Բայց երբ պարէտ՝ անձնապահօք՝ ուղեյ լինի՝ նիւթէյ,
Անհնար էր՝ թէ չը հաներ՝ վաղ քան զայն ծանր՝ գրասաներէյ։

Նիւթէյ մինչ՝ Հայոց սահմանք՝ լի են պրաստուք՝ ճանապարհք.
Միջագետաց՝ կողոպուտքն են, որ Հայք արել են՝ աւարք,
Ջոկ ջոկ խումբեր՝ են ձևացնում՝ խաշանց անթիւ հօտերը,
Ձիոց, ջորեաց, ուղտաց, իշոց՝ երամակաց՝ դասերը։

Մինչդեռ պարէտ՝ մռածում էր՝ վերապառնալ՝ Հայաստան,
Հայկայ նետի յափշտակողն՝ դաւ էր նիւթում՝ զանազան.
Սուրհանդակի՝ յետնէն հասաւ, և օպտութեամբ ծառայիչ,
Հրնաբ գլաւաւ՝ Խանդամիրին՝ յետ նահանջել՝ ճանփայիչ։

Մէկ անքոյթ տեղ՝ պահել տուեց, հրամայեց՝ կերակրել,
Բայց ընդ ումէք՝ յարակցութիւն ինչ ունենալ՝ չը ներել.
Ընդէս որ այն՝ սուրհանդակը՝ չիմացաւ թէ՝ ինքն ծր է,
Եւ իւր պահող և արդիլող՝ բանդապետաց՝ ոմն ոք է։

Իսկ ինքն Արբակ՝ փութացեալ նիւթէ՝ որ շրխոթէ պարէտին,
Ասաց. ես շատ աշխատեցայ, այլ չըլսեց՝ ինձ սիկին,
Նա չէ տուղջ՝ առաջվան պէս, միայն քեզ է՝ սպատում,
Եւ ինձ պատուէր՝ ունի տուած, որ քո դարձ շուտ՝ իմացնում։

Մինչդեռ պարէտ՝ կամենում էր՝ Արբակին յետ՝ դարձընել,
Փառնակ մըտաւ՝ Սինեթայի հետ, ի ծունկս անկան՝ երկուսն էլ.
Ասաց Փառնակ. զորվապուէթ՝ Հայր և Տէր իմ՝ նահապետ,
Դշխոյս Սինեթայ՝ քո Փառնակին՝ իւր կուսական՝ սիրտն ետ։

Եթէ լինի՝ քո հայրական՝ և սիրական՝ հաճութիւն,
Ունիմ բաղձանք՝ այս պշխոյիս՝ կոչել ինձ ի՝ հարսնութիւն,
Եւ հայր սորա՝ քո պաշնակից՝ այս խորհրդոյն՝ յօժար է,
Միայն կամաւ՝ է իմանալ՝ թէ այս քեզ և՝ հաճոյ է։

Պարէտ ասաց. ինձ հաճոյ է, բայց պու տանը՝ մայր ունիս,
Առանց նորա՝ համհաճութեան՝ պիտի չանենք հարսանիս.
Երբ Հայաստան՝ վերադառնանք՝ ծանուցանենք՝ ծընողիդ,
Նորա կամօք՝ և հաճութեամբ՝ կհրաւիրենք՝ պշխոյիդ։

Սինթայ կրկնեց. տուր Հըրաման՝ որ գամ ձեզ հետ՝ Հայաստան.
Վեհ սկեսրոյս՝ Շամիրամի՝ արժանանամ՝ տեսութեան.
Եթէ նա ինձ՝ դանէ արժան, և հարս կոչել՝ հաճենայ,
Այն ժամանակ՝ միայն կասեմ՝ թէ փառնակ է՝ իմ փեսայ։


Միշտ լսել ենք՝ անհուն գովեստ՝ բարեաց գործոյ՝ սիկին մօր,
Նորա պայծառ՝ փառայ հռչակք՝ մինք յիշում ենք՝ ամեն օր,
Այսքան շնորհայ՝ որ մենք քեզմէն՝ անփոխադարձ՝ առել ենք,
Մեր գոհութիւն՝ ցանկամբ անձամբ՝ սիկնոջ առջև՝ տարածենք.

Սարսքան էլ՝ Շահմարի հետ՝ կամին վտլթալ՝ Արմաւիր.
Որ գոհութիւն՝ մեր ծընողաց՝ լսվի համայն՝ յայն երկիր.
Ես չունեցայ՝ քան զայս շքեղ՝ բան իմ սրտի՝ քեզ նուէր,
Միայն որ մեր՝ փրկչի որդւոյն՝ ձօն բերէի՝ հոգւոյս սէր։

Շատ ուրախ եմ՝ ասաց Պարէտ, որ գուք միմեանց՝ սիրել էք,
Հայաստանին՝ այց ելանել՝ ձեր մրտաց մէջ՝ դըրել էք,
Բայց կամում եմ՝ որ չըշտապիք, շատ առողջ չէ՝ մայր սիկին,
Զի յաջողէր՝ ըստ իւր կամաց՝ գալ ընդ առաջ իւր հարսին։

Այս պատճառաւ՝ իմ կամք այս է. թող փառնակն էլ՝ աստ մընայ,
Մինչև հասնիմ՝ ես Արմաւիր, և սիկին մայր՝ իմանայ,
Ախտհեան՝ ես Արբակին՝ խընամախօս՝ կառաքեմ,
Եւ սիկին մօր՝ հաճութիւնը՝ ուրախութեամբ՝ կաւետեմ։

Մինչև ա՞յսօր՝ ընդդէմ կամաց՝ Համրիկ տեկնոջ՝ չեմ շարժել,
Ցայսմ հետէ՝ ցանկանում եմ՝ որ նոյնն պտըծեն՝ որդիքս էլ.
Գընամ Արբակ՝ ուրախացուր՝ իմ գալստեամբ՝ Համրիկին,
Ես էլ վաղիւ՝ բարեաւ մընամ՝ կասեմ նվինուէ՝ քաղաքին:



ԻՆ

ԵԼԱՆԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ Ի ՆԻՆՈՒԻԷ

Բարեաւ մընաք՝ կասես ոչ թէ՝ միայն Նինուէ՝ քաղաքի,
Ասաց Սրբակ՝ երբ դուրս ելաւ՝ յապարանից՝ արքայի,
Այլ և բոլոր՝ Հայաստանին, որում ահա՝ յիսուն ամ,
Ծանր բեռն եմ՝ դառել ուսոց, ես ճնում եմ՝ անխընամ։

Վաղիւ կելլես դու Ճանապարհ. շուտ կը հասնիս՝ Սմաւիր։
Ինչ զարմանք բան, Սինեմայ, Շահմար՝ կառում են գալ՝ մեր երկիր.
Քան զայս աւել՝ ինչ յաջողակ՝ վէպք կարեն գալ՝ յօդնութիւն,
Նոյա գալուստ՝ կը քողարկէ՝ իմ ամենայն ննդոմութիւն։

Ես քան զքեզ՝ առաջ կերթամ։ Շամբիկ ահա՝ հասնում եմ.
Սուրհանդակիդ՝ ես սպասում. ես էլ ահա դրկում եմ. . .
Հասաւ այն աեղ՝ ուր սուրհանդակ՝ էր բանալ պէս՝ արքեայծ,
Հրամայեց՝ որ սպանեն, Ճանապարհին՝ ձրկեն բաց։

*Ցետոյ երկուց՝ հաւատարիմ՝ ծառայից բան՝ ապստրեց,**
Մէկին առաջ՝ դէպ Սմաւիր՝ հարձեպ տալով առաքեց. . .
Հասաւ ծառայն՝ սիրտ ի բերան, յայտնվեցաւ՝ Շամբիկին,
Եւ ասաց. ինձ՝ խանդաղիրը դրկեց քեզ մօտ՝ իմ տիկին։

*Երկուց ծառայից մէկն էր այս, որ առաջ գնաց Խանդաղիրի կողմն, իսկ երկրորդը յետոյ կերթայ։

Ես բանակէն՝ յետ դառնալուիմ առաջ քան զայս՝ երկու օր,
Ճանփին տեսայ՝ Խանդամիրին՝ խրված արեան՝ մէջ բոլոր.
Մօտ գրնացի. գետ մեռած չէր, ինձ աղաչեց՝ որ փութամ,
Իւրեան հասած՝ անողոք մահ՝ քեզ փութապէս՝ իմաց տամ։

Շատ մեղկըցայ. ասի՝ երթամ, մէկ վերաբոյժ՝ գըտանեմ.
Ասաց՝ զուր է, ահա ընչոյս՝ վերջն է հասնում, մեռնում եմ.
Միայն ինչ որ՝ ես քեզ կասեմ՝ այն հասցուր շուտ՝ առ տիկին.
Ասա՝ մեծ վիշտ՝ և արտասուք՝ տեսայ ի մէջ՝ բանակին։

Հայերն քալցած՝ ծարաւ ընկած՝ կոտորվում են՝ դաշտերում,
Նինուէացիք՝ տաղաւարք չեն՝ թողել նոցա՝ ձեռներում.
Պարէտ խպատ՝ մուացել է՝ Հայաստանն էլ, իւր ազգն էլ,
Մէկ նորահարս՝ Ասորի կին՝ Հայոց տիկին է՝ շինել։

Ասել ոչինչ՝ կարողացայ՝ ինձ հետ խօսիլ՝ Խանդամիր.
Մեռաւ գաշտում։ Ես վազեցայ, որ շուտ հասնիմ՝ Արմաւիր։
Ա՛յժմ կերթամ՝ ողորմելի՝ սուրհանդակին՝ կը թաղեմ,
Ճասպեցի՝ որ նորա հետ՝ ժամավաճառ՝ չը լինեմ։

Համրիկ հարցուց. դու երբ եկար՝ Նինուէէն, կամ՝ բանակէն։
Նա պատասխան՝ տուեց. այսօր՝ հնդեւասան աւուրք են։
Համրիկ կրկնեց. նահապետը՝ դեռ ձանապարհ՝ եկած չէր։
Ծառայն ասաց. նահապետը՝ միմէ գարձի՝ միտք ունէր։

Տիկին հարցուց. նահապետը՝ ինչ գործով էր՝ պարապում։
Ծառայն ասաց. լսել եմ որ՝ խնջոյք կանէր՝ Նինուէում.
Տիւ և գիշեր՝ հարսանիք էր ուրախութիւն. ցնծութիւն,
Մէկ Ասորի՝ հարս է գտել, Նոյեան տուել՝ տիկնութիւն։

Համրիկ տիկին՝ գառնացած էր, գահլիճն աչքում՝ մթագնեց,
Երբ տուա գեսպան՝ անհետացաւ, Արբակ նորա՝ տեղ կանգնեց,
Ասաց տիկին՝ աչքալոյս կայ, մեր նահապետ՝ առողջ է,
Վալիս յայս ժամ՝ մայրաքաղաք՝ իւր տիրոջ կընդառաջէ։

Բայց ափսոս որ՝ շատ չեն լավքը՝ Ասրեաց քաղցր՝ երգերը,
Մեր անճոռնի՝ նուագերգուք՝ կփչեն իրեանց՝ եղջերը,
Վասն այն նոցա՝ սըրինգ, տաւիղ՝ փոքր ինչ կ՚յամեն՝ հարսի հետ,
Որում միւս օր՝ քեզ հետ՝ տիկին՝ կդիմաւորէ՝ նահապետ,

Շամրիկ հարցուց՝ միթէ արդէն՝ Շամրիկ բերում է հարսին:
Արքակ ասաց. արդ երկու են, Շահմար, Սինթայ՝ միասին,
Սինթայ հարան է՝ տիկնոջդ որդւոյն, փառնակ նըրան՝ սէր տուեց,
Պարէտ նոցա՝ փոքր ինչ յամել՝ ձանապարհին՝ հըրամայեց:

Աներևոյթ՝ պիտի մընար՝ նորահարսի զալուստը,
Ինչպէս ծածուկ՝ կարաց պահել՝ մօր ծոյէն իւր՝ փախուստը,
Բայց չեմ կարծում՝ որ նկինուէի՝ աւազանին՝ արքունիք,
Շիմանային՝ թէ խորհել է Սինթայ դշխոյն՝ հարսանիք:

Ըստ իմ կարծեաց՝ այս ամենը՝ նահապետի՝ է հընար,
Որ այս առթիւ՝ ի Հայաստան՝ մուտ գըտանէ՝ հարս Շահմար,
Իբրու փառնակ՝ իւր հարանութիւն՝ է հրաւիրել Սինթային,
Եւ Շահմար սոսկ՝ հարանածու է՝ ընկեր տալով՝ դշխոյին:

Երևի թէ՝ չէ կամենում՝ քեզ յայտնապէս՝ վշտացնել,
Քո տիկնութիւն՝ նուիրական՝ անձնէդ այժմէն՝ վերացնել,
Բերում է որ՝ Շահմար հարսը՝ մեր մեծուհեայ՝ ձանչէ,
Եւ փոքր առ փոքր՝ պէպ տիկնութիւն՝ պաղտնի ուղեօք՝ յառաջէ:

Ալ առաջ չէր՝ խորհուրդն այսպէս, պարէտ պիտի՝ պայր հանպէր,
Ցեղոյ գեսպան՝ գիս կարգելով՝ Սինթայի ձեռն՝ պահանջէր,
Որ երբ Սինթայ՝ պայր Հայաստան՝ թէ Սարաքոս՝ թէ Շահմար,
Նորահարսի՝ հետ լինէին՝ ընկեր յայն մեծ՝ ճանապարհ:

Բայց լսեցի՝ յուղևորայ՝ որ պարէտ շուտ՝ դէպ նինուէ,
Շիաւոր է՝ վազեցուցել, երկրորդ իսկ օրն՝ յետ ձանկէ,
Որ՝ փառնակ և՝ Սինթայ նոր հարսն՝ և Սարաքոս՝ և Շահմար,
Կարաւանի՝ յետևէն գան՝ առաք փառաք ձոխաբար:

Երկու բանակ՝ են արդ պալխս, մին է պարէտ՝ ընդ Հայոց,
Իսկ երկրորդ չուն՝ է փառնակայ՝ հանդերձ պարուք՝ Ասորոց,
Պարէտա հասել՝է Աշտարակ՝ այն տեղ կանցնէ՝ այս կիշեր,
Ա՛յն տեղ նըրան՝ կընդառաջեն՝ Արմաւիրէն՝ մեր դրօշներ։

Բայց երբ պարէտ՝ ի վաղիւ անդր՝ Աշտարակէն ելանէ,
Փառնակ պիտի՝ իւր հարսերով՝ Ասորց հետ՝ հասանէ
Վաղիւ պարէտ՝ Արմաւիրում՝ իւր պաղպաջունք՝ կը հանդչի,
Երրորդ օրը՝ մեր նոր հարսունք՝ կը կանգնին քո՝ առաջի։

Խորամանկի՝ էր այս ամեն՝ նիւթած դաւեր՝ չարաբուեստ,
Որ յաջողեց՝ զրպարտութեամբ՝ լարել թակարդ՝ գաղտամեստ,
Նորա չարեաց՝ չար արբանեակք՝ արթուն կային՝ ամեն տեղ,
Որ անվրէպ՝ ի լերդակում՝ խոցոտէին՝ զոհն անմեղ։

Արբակ գիտէր՝ նահապետի՝ ճանփորդութեան՝ սովորոյթ.
Թէպէտ տուեց՝ Հայ ծանօթից՝ իբր իւր չուոյ՝ երևոյթ,
Բայց ինքն իսկոյն՝ չանկաւ յուղի, դէպ յԱրմաւիր՝ նինուէից,
Այլ թաք կեցաւ՝ մի անքոյթ տեղ՝ ծածուկ Հայոց՝ աչքերից։

Այս չորրորդ օր՝ էր որ Հայոց՝ զօրք ի Նինուէ՝ են մըտել,
Եւ ի վաղիւ՝ ունին անշուշտ՝ վերադարձ չու պատրաստել,
Ուրախ են Հայք՝ որ ճոխացած՝ պիտի դառնան՝ հայրենիք,
Ուրախութեամբ՝ ամեն Հայոց՝ մեծարում են՝ Ասորիք։

Հասարակաց՝ ծօն էր այն օր՝ Նինուէ դառաւ՝ հարսնարան,
Բերկրակից էր՝ պարէտ որպէս՝ վեհապետերճ՝ խնդութեան.
Միջապետաց՝ արքայն ասաց՝ միակ դստերս՝ հարսանեաց,
Փափաքում եմ՝ արդ տեսանել՝ զոնէ նախկին՝ սկսուած։

Ծիծաղում էր՝ Սինեթայ գշխոյ՝ որ գեռ չունէր՝ հըրաման՝
Իւր պատուանուն՝ պճնազարդել կոչմամբ Հայկայ՝ հարսնութեան,
Այլ իւր ծընողք՝ սկսել են՝ ուրախութիւն՝ ազգային,
Ինչ որ պիտի՝ կատարէին՝ յօր հարսանեաց՝ գշխոյին։

Մինչդեռ Պարիս՝ բազմած սեղան՝ ատապախումբ՝ Հայերով,
Խնդամիտ էր՝ իր Փառնակի՝ փեսայութեան՝ ցոյցերով,
Արբակ նըման՝ գայլոյ պահուած՝ մութ տեղ ի խոր՝ գարանի,
Մըտածում էր՝ Շամբիկի հետ՝ բազմիլ յաթոռ՝ հայրենի:

Այն գարանէն՝ տեսանում էր՝ ամենայն անոյք՝ խնջոյից,
Ամեն համբաւ՝ իմանում էր՝ ի լոյ շրթանոյ՝ ծառայից,
Թէ ինչպէս պարք՝ օրիորդաց՝ և մեծահեաց՝ Ասորոց,
Դատարկում են՝ ոսկի նուագք՝ կենաց տիկնոջ Մեծ Հայոց:

Ստէպ կրկնում՝ էր իւր մտքում՝ Թէ ես նոյնպէս՝ յետ ամաց,
Երբ նահապետ՝ լինիմ Հայոց, տիրեմ իմոց՝ հայրենեաց,
Շամբիկիս հետ՝ կու գամ նինուէ, նստիլ ի գլուխ՝ խնջոյից,
Լսել այսպէս՝ ուրախալի՝ գաշնակեալ երգ՝ գովեստից:

Այն օր այնպէս՝ բերկրապատար՝ անյուսին Հայք՝ ժամանակ,
Հայապունդ զօրք՝ և զօրավարք՝ ուրախ էին՝ բովանդակ.
Արդէն անցել՝ էր կէս գիշեր, որ նահապետ՝ հեռացաւ,
Եւ խրախճանն՝ երկարատև՝ փոքր առ փոքր՝ վերջացաւ:

Այլ ի վաղիւ՝ առաւօտին՝ քաղաք նորէն դղրդվեց,
Արքունական՝ ապարանից՝ վերայ դըրօշ՝ նոր բացվեց.
Այս նըշան էր՝ որ այն օրը՝ պիտի Հայոց նահապետ,
Թողու նինուէ՝ մայրաքաղաք՝ և դէպ ի Հայս՝ դառնայ յետ:

Պատրաստվեցան՝ Միջագետաց՝ պճնազարդ ձոխ՝ այրուձին,
Որ ուղեկից՝ պիտի լինին՝ երախտապէտ՝ արքային.
Արքայն պատեալ՝ աւագանեաւ՝ ջոքաւ յայն կողմ՝ գարպատի՝
Ուր նահապետ՝ Հայոց չորս օր՝ հիւր էր ի տան նինոսի:

Մեծահանդէս՝ էր սենսարան՝ ելից Հայոց՝ նինուէէն.
Ծերք յիշեցին՝ դեռկէթ պշնոյն՝ փառօք պատուեալ նինուսէն,
Հայք, Ասորիք՝ ի միասին՝ Անուշավան՝ երգեցին,
Հետ նուագաց՝ երգարանից՝ քաղցր եղանակք՝ հնչեցին:

Համալըպային՝ էր այս Հայոց՝ երկ ի բերան՝ Աստրեաց,
Հասարակաց՝ խնդակցութիւն՝ հին սիրոյն բոց՝ արծարծեաց.
Ծերք և մանկունք՝ ձայնիւ տաղաց՝ շարժեալ ի գուարթ՝ ցնծութիւն,
Որպտաւոյ՝ մէջ խմբէին՝ կաքաւ և պար՝ և կայթիւն։

Հասաւ և ժամ՝ նահապետին՝ ուղևորիլ՝ բազմութեամբ,
Հեծաւ նըժոյգ՝ ահպարանոց՝ պատանեկան ժըրութեամբ.
Ի ձայն թմբկաց՝ խաղար նըժոյգ՝ տոհրաակէը՝ սիգաձիւմ,
Դէպ Նինուէի՝ քաղաքաղուն՝ յուշիկ քայլէը՝ տարադէմ։

Փիլատեսաց՝ արքայի հետ՝ երթայր պարէտ՝ հաւատար.
Ուղեկցութեամբ՝ անթիւ զօրաց՝ և բընակչաց՝ անհամար,
Եւին ընդ մեծ՝ դուռն բերդին, և դիրկս արկին՝ իրերաց,
Ի լայնարձակ՝ մարգպետունին՝ զաւեցան Հայք՝ յԱստրեաց։

Յուղի անկան՝ հայագունդ զօրք՝ բեռնաւորեալք՝ ճոխութեամբ,
Պարէտ պատեալ՝ զօրապլիւոք՝ գառնայր ի Հայս՝ խնդութեամբ.
Եմուտ արքայն՝ կրկին Նինուէ, հետ որդւոյ և՝ աւագաց,
Փառնակ Սինեթայ էին ուրախ՝ տօնեալ սկիզբն հարսանեաց։

Իւր թաք կեցած՝ տեղէն ելեալ՝ գարանամուտ Արբակը,
Խուռն ամբոխի՝ յետ գառնալիս՝ թողեց Նինուէ քաղաքը.
Մարակ տուեալ՝ իւր նըժոյգին՝ գաշտք և հովիտք պատառեալ,
Հայոց քաջաց՝ զօրաբանակն՝ ճանապարհին՝ յետ թողեալ։

Ցհա այս էր՝ որ ասել էր՝ Արբակ ի մէջ իւր մտքին.
Մինչ նահապետ՝ ասաց. վաղիւ՝ հրաժեշտ կու տամ քաղաքին.
«Ես քան զքեզ առաջ կ'երթամ. Շամրիկ ահա՝ հասնում եմ.
«Սուրհանդակիդ՝ ես սպասում՝ ահա նըրան ղրկում եմ։

Հասաւ. այն տեղ՝ ուր սուրհանդակ՝ կայր բանտի պէս՝ արգելած,
Հրամայեց՝ որ սպանեն, ճանապարհին՝ ձըգեն բայց.
Տեսանք նորա՝ մէկ ծառային, որ ձևացաւ՝ ստէպ դեսպան,
Եւ Շամրիկին՝ խարդախ լըրով՝ պատճառ դառաւ վրդովման։

Ցեսոյ տեսանք՝ որ Արքային էլ՝ տիկնոջ առջև երեցաւ.
Եւ Պարէտի համար պէս պէս՝ զրպարտութիւնք խօսեցաւ,
Այն և ասայ՝ թէ երբ Պարէտ՝ Աշտարակէն՝ ելանէ,
Փառնակ պիտի՝ Ասորոյ հետ՝ իւր հարսնեւոք՝ հասանէ։



ԻԲ

ԴԱՐՁ ԵՒ ՄԱՀ ՊԱՐԻՑԻ

Ճշմարտվեցյաւ՝ խօսք Արթակայ՝ աչքալուսանք՝ աւետաց,
Միւս առաւօտ՝ իսկ նոյն ժամուն՝ պարէտ հասաւ՝ հայրենեաց,
Հնչեց համբաւ՝ թէ զօրք Հայոց՝ յետ են դարձել՝ յաջողակ,
Ումանքին՝ ծերք և մանկունք՝ ընդառաջեն՝ բովանդակ։

Հանդիպեցան՝ Աշտարակում, սիրտը արին՝ ցնծութեան,
Մինչև հասան՝ մայրաքաղաք՝ Հեղաւ վախճան՝ բերկրութեան,
Այս աեղ նորոգ՝ սկսվեցյաւ՝ զուարճութիւն՝ եօթ օրեայ,
Ծայրէ ի ծայր՝ լքցվեցյաւ՝ սեղաններով՝ որպատեայ։

Ասպարանից՝ դրան առջև՝ Շամրիկ տիկին՝ կայր կանգնած,
Իւր մտերիմ՝ տիկնաց պարուք՝ շքեղաշուք՝ շուրջ պատած,
Լուսափայլ էր՝ երես տիկնոջ՝ մշտապարուն՝ մանկութեամբ,
Այլ թէ ինչ կայր՝ ի խորս հոգւոյն, քողարկեալ էր՝ թաղնութեամբ։

Նժոյգ ձիէն՝ ոտեաւ պարէտ՝ հանդոյն Ճապուկ՝ պատանեոյ,
Առաջ վազեց՝ Շամրիկ տիկին՝ փարիլ ի գիրկ՝ ամուսնոյ.
Այս նուագին՝ յանկարծ տեսաւ՝ որ կայր Արթակ՝ ՚ի զօրաց,
Երիւս աչօք՝ յերես տիկնոջ՝ քարքի նըման՝ բևեռած։

Պարէտ բռնեց՝ աչ Շամբիկի՝ ջերմիկ անձկով՝ համբուրեց.
Հոգւոյ զեղեալ՝ խնդութենէն՝ զտարթադէմ՝ արտասուեց.
Ասաց. տիկին՝ այս հինգ ամիս՝ որ ես քեզմէն՝ հեռացայ,
Հարիւրամեայ՝ զառամութեամբ՝ անակնկալ՝ ծերացայ:

Ծպիտ խաղաց՝ յերես տիկնոջ, ով գիտէ ինչ՝ խօսեցաւ,
Փողոց թմբկաց՝ հնչիւններէն՝ գոգցես ինչ ոչ՝ լսեցաւ.
Ձեռն ընդ ձեռն՝ մտան դահլիճ, աթոռ փառաց բազմեցան,
Ալադախտամբ՝ ծերոց ընտիրք՝ իւրեանց բարձերն՝ շարվեցան:

Եկան որդիք՝ նահապետի, դաեբք, փեսայք և հարսունք,
Քաջ ծերունւոյն՝ շուրջ պատեցին՝ իւր զաւակունք և թոռունք,
Միայն Ջաւանն էր բացակայ. որ Լայ զարև՝ Վստամը,
Տարել էր իւր՝ գաստակերտը, պաշտել առած՝ պատգամը:

Շամբիկ հարցուց. ո՞ր է փառնակ, որ քո հետ չէ՝ երևում:
Պարէտ ասաց. նա Սինոպէ է՝ քո հրամանաց սպասում,
Միջապետաց՝ դշխոյն Սինթայ՝ ուզեց նըրան՝ հարսնանալ,
Ես ասացի՝ առաջ ծնողիդ՝ հարկաւոր է՝ իմանալ:

Այս պատճառաւ՝ փառնակին էլ՝ իւր հարսնացուի՝ հետ թողի,
Որ քո կամօք՝ լինի որդւոյդ՝ փեսայանալ՝ դշխոյի.
Ըստ իմ խոստման՝ երբ որ հաճիս՝ մեր դեսպանը՝ կ'ուղարկենք,
Եւ փառնակին ի հարսնութիւն՝ Սինթային՝ կու հրաւիրենք:

Նոր գաշնակից՝ արքայն ուզեց՝ տեսնել գաեր՝ հարսանիք,
Նորա սիրոյն՝ յօժարեցաւ՝ բազմիլ խնջոյք՝ և ընթրիք.
Որովհետև՝ իսկ հարսանիք՝ պիտի տօնվի՝ աստ մեր տան;
Այս տեղ կարող՝ չէր գումարվիլ՝ արքայական՝ գերդաստան:

Շամբիկ կրկին՝ ձգեց իւր աչք՝ յերես չարին՝ Ալբաիայ,
Տեսաւ որ այս՝ պատասխանէն՝ շատ գոհ եղեալ պէմք նորա.
Ջունէր բընաւ՝ կասկածանք ինչ՝ գաւաճանի՝ լուրերէն,
Վասն այն աւել՝ վրդովվում էր՝ նահապետի խօսքերէն:

Մինչ դեռ Պարէտ զբօսնում էր՝ հետ զաւակից և թոռանց,
Տիկին մօքով թռչում էր դէպ՝ հարաւային՝ կողմ դրրանց,
Ուր ըստ բանից՝ դաւաճանին՝ մօտ պիտի ընկնի՝ Ասորիք,
Եւ անդ պիտի՝ ծօնախմբում՝ լինի որդւոյն, հարսանիք։

Ճշմարիտ է՝ և այս կարծիք, Արքայ լաւ էր՝ տնօրինել,
Փառնակ, Սինեթայ՝ նոյն օրն անշուշտ՝ պարտ էին անդ՝ տեղ հասնել,
Այնպէս որ մինչ՝ Պարէտ իւր տան՝ նախկին գիշերն՝ երեկէր,
Որդին պիտի՝ Ասրեթայ հետ՝ Աշտարակում՝ բանակէր։

Արդէն ի մուտս՝ էր արեգակն՝ որ Պարէտ իւր՝ տուն մըտաւ,
Պատրաստած էր՝ ճաշ մեծահայ, իսկոյն սեղան բազմեցաւ,
Հայոց պինուն՝ կարօտել էր, Պարէտ խըմից՝ խնդութեամբ,
Զիմացաւ թէ՝ իւր ծերունիք՝ այն կը նային՝ գժտութեամբ։

Ա՛յն ծերունեաց՝ մէջ սակաւք կան, որ չեն նըման՝ Շամրիկի,
Իրեանց հպարտ՝ մէջ խոժռեալ՝ ընդդէմ դործոց՝ Պարէտի,
Հաւատացեալ՝ են ամենքն էլ, թէ նորահարս՝ Շահմարը,
Վաղիւ պիտի տիրապետէ՝ Հայ տիկնութեան՝ աթոռը։

Սպասում են՝ որ Շամրիկը՝ մէկ խօսք ասէ՝ բարկացած,
Որ ամենքը՝ միահաղոյն՝ մէջերն մտնին՝ վշտացած . . .
Բայց տիկին իւր՝ արտմտութիւն՝ իւր հպարտ մէջ՝ էր ծածկում,
Նորա շարժմունք՝ նկատելով՝ ծերունիք չեն յարձակում։

Յանկարծ Պարէտ՝ ասաց տիկնոջ՝, Շամրիկ դիտեա՝ խանդամիր,
Քո տրհանդակ՝ սպանվել է՝ Հանիին որ դէպ Արմաւիր,*
Շատ ցաւեցայ, մարդիկ թռղի պատուէր տուի, որ թաղեն,
Եւ ոչ նորա՝ արիւն մնել, հեռացօտեն և գտնեն։

*Արքայ, խանդամիրին առաքած՝ այնպէս պեղ չէին, որ կարծվի նա քանակին չեր պատրաստել՝ Պարէտի հրամանաց է առաջուել, և ի հարկէ այնպէս հաւատացած և պինդ։

Նորոգվեցան՝ վէրք Շամրիկի, չը կարաց տալ՝ պատասխան,
Սուրհանդակի՝ անուն յուշ ած՝ ինչ խօսել էր՝ դաւաճան,
Եւ Պարէտի՝ մաերմաբար՝ խօսակցութիւն՝ ընդ տիկնոջ,
Բորբոքում էր՝ վրէժխնդիր՝ բոցն առաւել՝ ի հուրջ։

Դեռ չէր հասել՝ կէս խնջոյից՝ զօրացաւ քուն՝ Պարէտի.
Շամրիկ բունեց՝ նորա ձեռքէն՝ տարաւ հանդոյց՝ ի մահճի.
Առաւ ձեռքէն՝ նենգեալ նետը, տարաւ սենեակ՝ իր պահեց,
Կրկին եկաւ՝ նստաւ սեղան, և ընթրիքը՝ եկայնեց։

Արբակ կանդնած՝ կայր առջևը, ձերոց կարգին՝ չէր նստած.
Շատ ձերը կային՝ սրտի մօք՝ դաւաճանին՝ միացած.
Զգիտէին՝ թէ ճրը պիտի՝ այս գժտութեանց՝ վերջ հասնի.
Կամին լսել՝ ինչ ի շրթանց՝ Շամրիկի կամ՝ Արբակի։

Շամրիկ եկաւ՝ ի սեղանոյ. ասաց՝ նստէք, ես կու գամ.
Ծերը կերակրոց՝ կարգն են ընտրում, ինչպէս կընէր՝ շատ անգամ.
Շամրիկ գնաց՝ միւս դահլիճ. մնաւ Արբակ՝ յեանէն,
Ցանգնաբար՝ աչ կարկաւեց, բունեց տիկնոջ՝ ահեկէն,

Ասաց. տիկին՝ ժամանակն է, ինչ անելու՝ ես, արա.
Այն չէր Հայկայ՝ նետ ահաւոր, ինչ ի ձեռին՝ կայր նորա.
Հայկայ նետ արդ՝ կայ յիմ ձեռին. երբ որ Փառնակ՝ խօթացաւ.
Նորա անյուշ՝ ընկած ժամուն՝ Արբակ նետին տիրացաւ։

Շամրիկ ասաց. մինչև այսօր՝ ատուգելի՝ կայր մէկ բան,
Արդեօք երբա՝ է ամեն ինչ՝ որ բարբանջէ՝ քո բերան.
Այժմիկ երկրորդն՝ էլ յաւելեր, երբ այն նետն էլ՝ գողցել ես,
Նետի վերայ՝ նըշան ունիմ, պընա և բեր՝ տեսնեմ ես։

Արբակ պընաց։ Շամրիկ խնդոյն՝ ուղարկեց մէկ՝ սուրհանդակ.
Որ Փառնակին՝ երթայ, ձայն տայ, թէ հասել է՝ Աշտարակ.
Սուրհանդակն էլ՝ յուղի անկաւ։ Գըտաւ Շամրիկ՝ սենեակ իր.
Ուր փոխուած նետ՝ մըրճափատատ՝ ծածուկ անքոյթ տեղ պահիր։

Հանեց նետը՝ պահած տեղէն, և սկսաւ՝ լաւ ընդնել,
Տեսաւ որ այն՝ չէ Հայկայ նետ, յիրաւի՝ էր՝ խարդախվել.
Ընկաւ յուզմանց՝ անհուն խորքն, բայց պարձեալ չէ՝ հաւատում,
Թէ արդարև՝ իսկական նետ՝ դաւաճանի՝ կայ ձեռում:

Ըր կայր Հայ ոք՝ որ Շամբիկի՝ պէս՝ հասկանայր՝ թէ այն նետ:
Որավ հրզօր՝ է միշտ եղել՝ Հայաստանեայց նահապետ.
Ի՞նչ զօրութիւն՝ ունի ծածուկ՝ իւր մէջ անյայտ՝ թաքցըրած,
Որ ոք ձանչնալ՝ չէ յաջողեր՝ Հայկայ օրէն՝ ըսկըսած:

Խորհուրդք՝ ալեայ կոհակայ պէս՝ մէկ զմէկու են վանում,
Շամբիկ տիկնոջ՝ անյատակ ծով՝ են խորասոյզ՝ ընկղմում,
Ցիշեց յանկարծ՝ յանդգնաբար՝ Արբակայ ձեռք բունելը,
Եւ արա՛ ինչ անելու ես, ժամանակն է՝ ասելը:

Մըտածում էր՝ թէ չընի որ՝ Արբակ նետին՝ ապաստան,
Անսասան դրաւ՝ դէմ իրաւանց՝ համազգային՝ տիկնութեան.
Կամենում էր՝ իսկոյն բազմեալ՝ ձերակուտին՝ բողոքել,
Բայց իւր ընթրեաց՝ բարուք վարկաւ՝ յարգ և պատիւ պահպանել:

Ասում էր. այ՝ զառամեալ օձ՝ խորխոչ ես փոխում՝ մէջ վիմաց.
Գալարվում ես՝ կորաքամակ, կեղծաւորվում՝ իմ դիմաց.
Մէկ ապացոյց՝ է արդ ինձ պէտք. յօրէս կու գայ՝ սուրհանդակ.
Կամ աքսոր է, կամ մահ անշուշտ, որ կը բերէ՝ քեզ փառնակ:

Ինձ այնպէս նեղ՝ հոր սուգերը, մինչ յանդգնից՝ Արբակն էլ.
Իւր սիրոյ ձեռօք՝ յիսուն ամեայ՝ տիկնոջդ ձեռն՝ շօշափել.
Լաւ չէ ինձ մահ՝ այսուհետև, քան այսպէս կեանք՝ անպատիւ,
Որ ժպրհին՝ ապառնական՝ դեր ցուցանել՝ ինձ նետիւ:

Ինչպէս այն նետ՝ չը ձանչեցիր՝ թէ չէր Հայկայն, փոխուած էր,
Խելք ու միտքըդ՝ լկտեայ մէջէն՝ որմն արդեօք՝ մատնած էր.
Այսուհետև՝ մոռնիս, ապրիս, էլ նահապետ՝ չես ազգին,
Ես ոչ նետի՝ կազդուրելով, այլ ծննդեամբ՝ եմ տիկին:

Եղմուկ՝ որ ես՝ խանդարեցի՝ հաստատուքիւն՝ տան իմոյ.
Չաւակներէս՝ և ոչ մէկը՝ յաջորդ կըլինի՝ աթոռոյ.
Տեսնում եմ ինչ՝ սուր է շողում, լափում է իմ զերդաստան,
Որովհետև՝ քրտան ծնունդք՝ շունչ չեն առնուր՝ Հայաստան:

Ափսոս եղե՝ քեզ անդրանիկ՝ պատուղ քնքոյշ իմ սիրոյ,
Որքան քեզ հետ՝ պիտի կորչին՝ պատրեալ ազգիդ՝ դանձք յուսոյ,
Մինչ տայի քեզ՝ նրանց տեղանց՝ իմ առաջին՝ զայլ կաթին,
Միտքս անքթիթ՝ յառեալ կային՝ յուժեղ նրպաստ՝ այն նեռին:

Այլ ահա ծեր՝ անզուրկ քո հայր՝ տապաստ ձրգեց՝ երկուսիս,
Մէկ Ասորի լկաի կնոջ՝ անարգաբար՝ մատնեց գիս.
Սրտիս միջին՝ հուր և բոց է՝ անդուլ անշէջ՝ բորբոքվում,
Առ ոտն կոխեալ՝ իմ իրաւունք՝ վըրէժ խնդրել է դրդում:

Արդէն հասնում էր վազելով՝ տուրհանդակ մինչ՝ Աշտարակ.
Այլ նեռի տեղն՝ հեռատոն էր, շուտ չէր հասնիր՝ դեռ Արթակ.
Լուսաթաղը՝ մօտեցել էր, որ փառնակը՝ ներս մըտաւ.
Շամրիկ ախկին՝ լի բարկութեամբ՝ որդուն մերձ գալ՝ չթողաւ:


Աղաղակեց՝ զայրանալով. ո՛ր են Սինեմայ և Շահմար:
Աշտարակ են, ասաց փառնակ՝ ահասարսուռ, դալկահար:
Շամրիկ վազեց՝ դէպ ի սենեակ՝ ուր կայր Պարէտ ի մահճի.
Ցետ սակաւուց՝ դարձաւ անդ, ուր՝ կայր փառնակ ի դահլճի:

Նստաւ յուշիկ ի բերում բարձի, ժպիտ յերես՝ շատ ազոյն.
Ասաց. ո՛րդեակ՝ դու Ճանփումըդ՝ խօթացել ես՝ խստազոյն.
Ինչի չէիր իմաց անում, չը գիտէիր՝ որ մայր եմ,
Եւ զաւակաց՝ ամեն ցաւոյ՝ հաւատ պիտի՝ հոգս անեմ:

Փառնակ նախկին՝ արհաւիրքէն՝ փոքր ինչ անձն՝ կորզելով,
Պատասխանեց՝ շաղապատեալ՝ որդիական՝ երկիւղով.
Մայրիկ՝ յանկարծ՝ մէկ գլխացաւ՝ ինձ հանդիպեց՝ երթալիս,
Թէ ինձ ինչըո՞ր՝ են պատահել՝ բընաւ միտքս՝ չեն գալիս:

Գեղ է ասել՝ ինձ բժիշկը, և նոքաւ կեանքս՝ ազատել,
Ամն բժիշկն էլ՝ հետս տեղէն՝ թերթ Աբբային է տուել.
Երկու ընկերք՝ մէկ խըլաթ, մէկը բաղէշ՝ պրկելով,
Հազիւ բժիշկ՝ էին գըտել, ինձ յօդնոթիւն՝ փութալով։

Շամբիկ տեսաւ՝ որ Աբբայ՝ խօսքերն էին՝ ճշմարտով.
Նեռի համար՝ կասկածելոյն՝ էլ կասկած ինչ՝ չէր մընում.
Յոյն էլ թողուլ՝ էր ըսկըսել, բայց վերսին՝ շունչ առաւ.
Եւ կրկնակի՝ Փառնակի հետ՝ խօսակցութիւնն ըսկըսաւ։



ԻԴ

ՄԱՀ ՅԱՄՐԻԿ ՏԻՆՆՈՋ

Փաւռնակ՝ ասաց՝ Ցամրիկ հանդարտ, երբ որ տեսար՝ թէ քո հայր,
Զիս փոխում էր՝ անարդաբար՝ ընդ Ասրի՝ հարս Ցահմար,
Ինչի իսկոյն՝ կամ դու չեկար, կամ մէկ հայ չը՝ պրկեցիր,
Եւ իմ անբաղդ՝ թշուառութիւն՝ ինձ փութով չը ծանուցիր:

Զարմանալով հարցուց Փաւռնակ, տիկին՝ այդ ինչ՝ ես խօսում,
Հայրըս ներք էր՝ քեզ Ցահմարի, կամ այլ կնոջ՝ հետ փոխում.
Ես երբ ասի՝ թէ Սինթային՝ ցանկամ տալ իմ՝ հարսնութիւն.
Հայրս ասաց, թէ պէտք է որ՝ նախ ծընողք տայ՝ հաճութիւն:

Սինթայ ասաց. ցանկանում եմ՝ վեհ սկեսրիս՝ տեսութեան.
Հայրըս կրկնեց. թողէք առաջ՝ երթամ հասնիմ՝ Հայաստան.
Թէ տիկին մայր՝ տայ հաճութիւն, ձեզ ձայն կու տամ՝ դեսպանով,
Եւ ձեր գալուստ՝ ի Հայաստան՝ կլինի մօր ձեր՝ հրամանով:

Երբ նինուէէն՝ եկաւ հայրս, միւս օրն մէկ՝ մարդ եկաւ,
Թէ նահապետ՝ ձեր գալուստը՝ ընդարձակել՝ հաճեցաւ.
Կասկած ընկայ. փոփոխամիտ չէր իմ ծընող՝ բընաւին.
Թիկնապահայ՝ ձեռք յանձնեցի. ահա հետս է՝ կոչուն իմ:

Գընաց Փառնակ, գարձան երկու.ք, այս Փառնակայ՝ կոչողն էր։
Շամրիկ Հարցուց՝ ինչպէս գիտէր, Փառնակին զո՞ւ՝ կոչեցեր։
Ծառայն ընկաւ՝ սարսափի մէջ, փութեց առ ոտս՝ Շամրիկի,
Ասայ. ես լոկ՝ գործիք էի՝ ի ձեռին քոջ՝ Արբակի.*

Նա զիս ղրկեց՝ ծածուկ նինուէ, և երբ պարէտ՝ եկ յուղին,
Ինձ հրամայեց՝ նահապետի՝ անուամբ խարել՝ Փառնակին,
Որ Փառնակը՝ և Հարպնացուն՝ և Սարաքոս՝ և Շահմար,
Ցետ պարէտի՝ դէպ յԱրմաւիր՝ ընկնին փութով՝ ձանապար։

Բայց չը հասնեն՝ քուն բանակին, այնպէս՝ որ երբ՝ նահապետ,
Գայ յԱրմաւիր, նոքա միայն. մինչ յԱշտարակ՝ դան ի հետ։
Ան տեղ պիտի՝ քիչ ըսպասէր՝ նոր հրամանի՝ Փառնակը,
Որ պարէտէն՝ պիտի առնոյր՝ թերեր առ նա՝ Արբակը։

Աչք Շամրիկի՝ փոքր առ փոքր, բայց անպան՝ բացվեցան.
Եւ րնդ աղօտ՝ դաւաճանի՝ լարած թակարդ՝ երևցան.
Ցետադարձի՝ շաւիղ չրկան. Շամրիկ թակարդ՝ էր ընկել.
Էլ փրկութեան՝ յոյս մէկ կողմէն՝ չէր բնաւին մնացել։

Մինչ նա այսպէս՝ տարակուսած՝ կայր մէջ անել՝ շուարման,
Ցորդոսայէն՝ լսեցյաւ ձայն՝ աղաղակի՝ խուվլութեան,
Բազմութիւն՝ խուժեց դարպաս, և բարձրաձայն՝ կանչում էր,
Թէ ազգի մէջ՝ լավում են նոր՝ շփոթարկու՝ վատ երգեր։

Հարիւրապետք, հազարապետք՝ որ պարէտի հետ՝ դարձան,
Վրէժխնդիր՝ էին երգոյն՝ որ հնչէր մէկ՝ երգարան,
Ա՛յս այն երգն էր՝ որ Արբակը՝ չար խորհրդով էր յորել,
Եւ խաժամուժ՝ յունկս ամբոխի՝ արբանեկօք՝ էր յորդել։

* Այս ձառայն էր այն երկուց ձառայից երիտասարդ, որոց Արբակ խառնուածքին առանձնաձ օրն պատուէրնէր պոռնէց։

Լսել են այս՝ դառն ստոլտանք՝ պարէտի քաջ զօրականք,
Տեսել են որ՝ զրպարտութիւն է և յայտնի՝ բարուրանք.
Բռնել են այն՝ երպաբանին, և բերել են՝ այն ատեան,
Ուր ծերք ազգի՝ կային բազմեալ՝ զուարթացած ի սեղան:

Սթափեցան՝ մեր ծերունիք, գինին գընաց՝ գլխներէն,
Հարցփորձ առին՝ երպաբանէն, բանն իմացան՝ հիմներէն.
Զարմանալով՝ նայում էին՝ մէկմէկի՝ երեսին,
Հիանում են՝ թէ ինչպէս այն՝ յառաջվանէ՝ չզգային:

Ա՛յն մըտրմած՝ ծերունիք իսկ՝ որ Շամրիկին՝ կարեկցեալ,
Նահապետի՝ դէմ երևում՝ էին հոգւով՝ վշտացեալ,
Եկին ի զեղջ, անկան առ ոտս՝ Շամրիկ տիկնոջ՝ և լացին,
Թէ ի սրտի՝ էին լցեալ՝ բարկութեամբ դէմ՝ պարէտին:

Մինչ արտասուօք՝ սոքա իւրեանց՝ յանցանքն էին՝ լուանում,
Մէկ այլանդակ՝ ձայն լսվեցաւ՝ ամբոխի մէջ՝ դարպասում.
Աղաղակում՝ էր մէկ սորուկ՝ Խանդամիր մի՝ սպանիր.
Ես խեղճ մարդ եմ, զիս մի՛ մորթեր, իմ խեղճութեանս՝ խընայիր:

Վազեցին ծերք դէպ առ այն մարդ, հարցին ո՛ւր է Խանդամիր:
— Զէ՞ք տեսնում որ, ահա այս տեղ՝ է իմ ահեղ՝ արհաւիր.
Իսկ այն գանակն՝ է իւր ձեռին, որով նըրան՝ մեռուցի.
Արբակի էր՝ այն չար հրաման, մըտերմաբար՝ լցուցի:

Վա՛յ, վա՛յ՝ թողէք՝ երթամ, փախչիմ, վա՛յ՝ Խանդամիրք՝ քանի՛ են,
Ամեն կողմէն՝ գանակաւոր՝ Խանդամիրներ՝ եկել են.
Մէկ զմէկէ՝ աւել մեծ են, մէկ զմէկէ՝ ահաւոր,
Վա՛յ՝ Խանդամիրք շատ բազմացան, յօրէս գառան՝ բիւրաւոր:

Ինձ հաւատա՛՝ զթած տիկին, ես այս կամաւ չարարի.
Արբակ կալուած՝ ինձ խոստացաւ՝ ի մէջ Աղձնեաց՝ աշխարհի.
Ասաց, զրնա՝ սուրհանդակի՝ յեռանէն շուտ՝ ժամանէ,
Խոստեցաւ՝ հանապարհէն՝ մինչ ի գալս՝ պահպանէ.

Ցեսայ երբ որ՝ նահապետը՝ դուրս եկաւ ի ներուէէն,
Արբակ եկաւ՝ մոլթել տուեց, Ճանփի վերայ՝ ձըգեց դէն.
Այն էլ գիտեմ՝ որ նահապետ՝ տեսաւ նորա՝ դիակը,
Ասաց. պըտէք թէ այս արիւն՝ թափեց որմ դանակը:

Երբ նահապետ՝ հանեց հրաման, էլ արիւն չի՝ թաք կենար,
Խանդամիրը իմ աչքումըս երեւում է անհամար.
Ես մեղք չունիմ, ինձ Արբակն էր՝ հրաման արեր՝ սպանել,
Եւ մարմինը՝ Ճանապարհի՝ վերայ անթաղ արկանել:

Ծերք իրերայ՝ հետ փսփսում՝ էին վեր վայր՝ վազելով,
Իսկ խելապար՝ այս կողմ այն կողմ՝ ընկնում՝ փախչիլ ուզելով,
Բայց դըրունք չէր՝ կարում դանել, միշտ պատերին՝ էր դպչում,
Ամեն կողմանց՝ խանդամիրներ՝ տեսանելով՝ էր փախչում:

Յանկարծ եկաւ՝ այն ծառայն էլ, որ ատ դեսպան՝ էր դառել
Շամրիկ նորան շուտ Ճանաչեց: Ասայ, ես եմ քեզ խաբել,
Խանդամիրին՝ չէի տեսել, ոչ մեռած ոչ՝ կենդանի,
Ինձ Արբակն էր՝ իրատ տուել՝ գալ պաշտօնիւ՝ դեսպանի:

Ատա էր ինչ որ՝ քեզ պատմեցի, թէ Հայք կան ի՝ տրտմութեան,
Պատմել նոցա՝ խնդութեան չափ՝ չէր իմ լեզու՝ բաւական,
Բայց Արբակ էր ինձ ապատրել, որ ես ասեմ՝ քեզ՝ տիկին,
Թէ տիկնութիւն՝ քո պարէտ է՝ տուել Շահմար՝ նոր Հարսին:

Նահապետի՝ դըրան առջև՝ Շահմար այնպէս՝ էր կանգնում,
Ինչպէս աղքատք՝ կարօտք հոգի՝ քո դըրանն են՝ կողկողում,
Ես Շահմարին՝ մէկ օր ուրախ՝ ծիծաղերես՝ չեմ տեսած,
Ինչմէ ուրախ՝ պիտի լինէր, երբ իր փեսայն՝ կայր գերած,

Խելապարը՝ երբ որ տեսաւ՝ իր մեղաւիչ՝ ծառային,
Եկաւ բռնեց նորա վըզէն, և հոգ տուեց՝ շըղնքին,
Ասայ, մէկ մէկ՝ պիտի պատմես՝ թէ իմ թէ քո՝ յանցանքը,
Մեր երկուքէն՝ էլ մեղապարտ՝ է գտաճան՝ Արբակը:

Նա վաղուց էր՝ դարանակալ՝ նահապետի՝ արևին,
Եւ ուզում էր՝ տիրապետել՝ այս գեղահրաշ պատանին,
Մեր ձեռքով չէր՝ ցըրիւ տալիս՝ ամենայն սուտ լուրերը,
Մեր բերնով չէր ստղրում այլոց՝ երկիծական՝ երգերը։

Վերջապէս երբ՝ յափշտակեց՝ ազգի պաշտպան՝ Հայկայ նետը,
Անյուշեան էլ իւր աչքին՝ ոչինչ էր մեր նահապետ.
Ուզում էր որ՝ շուտով դառնայ, և հասանի իւրեան տուն,
Եւ իւր տան մէջ՝ անակնկալ՝ գանէ կենայ՝ փորձուխին։

Այն փորձուխին՝ վայ է հասել, ծերք իմ լեզուն՝ կտրեցէք,
Ապա թէ ոչ՝ ասածներէս՝ լերդապատառ՝ վախեցէք.
Ո՞վ մեզ կու տայ՝ այսուհետև՝ զուարճութիւն՝ երգիծօրեայ,
Ո՞վ կը լցնէ՝ ծայրէ ի ծայր՝ սեղաններով՝ որպատայ։

Ո՞վ կը բանայ՝ մեզ այսուհետ՝ յաղթանակի՝ դռները,
Ո՞վ կը բերէ՝ էլ Հայաստան՝ աւարների՝ բեռները.
Դու՝ խանդամիր՝ ինչ ես ուզում, սուրհանդակ ես՝ թէ գահիճ.
Ինչ պատճառով՝ գանակ ձեռիդ՝ սպրդել ես՝ այս գահլիճ։

Տուր գանակը՝ պէտք է ինձ այդ, ահա մէկ զոհ՝ պատրաստված.
Գէր պարարակ, եզն անարատ, փինջովք վարդից՝ զարդարված.
Ո՛հ՝ առիւծ է՝ սէգ, ահաւոր, լռել է իր՝ մունչիւն,
Վա՛հ՝ թէ ո՞րքան անտեղի է՝ խելագարիս՝ կարկաչիւն։

Այժմիկ երգիդ՝ ձայն բարձրացուր՝ կաշառասէր՝ երգաբան,
Գուցէ կարես՝ կրկին խաբել՝ ազգ և երկիր՝ Հայկական.
Երգեա. Թուեաւ՝ Աասեայց արծիւ, լայն իւր թևերն՝ հոլոնեց,
Նեռ մի հասաւ, արծիւ անշունչ՝ գետնի վերայ՝ գլորվեց։

Դեռ երեք ենք՝ այս ատենում. դեռ ծերք նոր ինչ՝ չը գիանն,
Որ չորրորդն էլ՝ սիրտ ի բերան՝ շտապում է՝ հեռուէն.
Շամրիկ սիկին՝ քո փեսայն է, հինի տեղն է՝ այս նորը,
Քո պատճառաւ՝ հրաշագործեց՝ շար Արբակ այս՝ բոլորը։

Ահեղ վէն է՝ բերում ձեռին՝, Թարմ արիւն կայ՝ ի ծաղկին,
Արիւն բեղայ՝ է շաղախել՝ ահաւոր ծայր՝ սըլաքին.
Փախէք ծերեր՝ Հայոց ազգի, անցաւ ծերոց՝ ժամանակ,
Անուշաման, Դերկէթ, պարէտ, Շամբիկ, չինք ձեր՝ յիշատակ:

Դեռ խելապար՝ ցնդաբանէր, Արբակ մըտաւ՝ ի պահլիճ.
Խելապար նոր՝ ձայն բարձրացոյց, ահա հասաւ՝ մեծ պահլիճ.
Խանդաւիր Թող՝ արդ իմ օձիք, ամուր բռնէ՝ Արբակին.
Սարհանդակ ես՝ արագ հասիր, այս բզնունեայ՝ աւազին:

Արբակ ձեռիւ՝ նետը ցոյց տուր, աշխատութեամբ՝ ստացար,
Դեռ չորս հատ ենք՝ քո զոհերը, այլ պատրաստք կան՝ անհամար,
Արևն ահա իւր ձառագայթ՝ լուսամուտէն՝ է շողում,
Շամբիկ սիկին՝ նետի տեսոյն՝ զարհուրանօք՝ է դողում:

Առաջ գրնա, մի վախենար, այսօր քո է՝ յաղթանակ,
Աղ խանդաւիր՝ քեզ պարգեւէ՝ արիւնշաղախ՝ իմ դանակ.
Սիրէ շատ ինչ՝ է այսքան զոհ՝ նախնեաց աթոռ՝ ելնելուն,
Շամբիկ սիկին՝ ակնկատոյց՝ սպասում էր՝ քո գալուն:

Արբակ տեսաւ՝ որ իւր գործերն՝ խայտառակեց՝ խելապար,
Երկիւղ ամօթ՝ միժեց անձնէն, առաջ վազեց՝ լրթաբար,
Շամբիկ ձանչցաւ՝ Հայկայ նետը, զոյց նորա՝ զօրութիւն,
Տեսաւ որ չէ՝ կարող տանի՝ նետի ուժգին ազդմութիւն.

Ելաւ տեղէն, մուտ ցասմամբ՝ իւր առանձին՝ սենեակը:
Կամենում էր՝ նորա յետնէն՝ մըտանել և Արբակը.
Բայց տեսաւ որ՝ Շամբիկ սիկին՝ գուն ի ներքուստ աղխել էր.
Նետով մղեց՝ զրան փեղկը, խորտակվեցան նիզք, աղեր:

Ջնդան սենեակ՝ ծերք և Արբակ. Շամբիկ անկեալ կայր գետնին,
Սուր գաշնակը՝ հոգեպահանջ՝ էր սեռեալ ի սրտէն:
Խուժելին որ՝ ծանուցանեն՝ պարէտին այս՝ չար արկած,
Տեսան որ կայր՝ ծեր նահապետ՝ իւր արեան մէջ՝ տոգորված:

Կական բարձին ծերք և ատոք, սուգ կոծ փուխց յԸրմատիր,
Ողբ և եղուկ՝ պաշարեցին, Հայկական ազգ՝ և երկիր.
Շըփոթ ընկաւ՝ ի մէջ զօրայ, և զօրավարք՝ վատեցան,
Ազգամիջեան՝ մարտ խմբեցաւ, խաղաց վասակ՝ յորդ արեան:

Սիւնեաց աշխարհ՝ վրէժխնդիր՝ յարեաւ արեան Գարէգին.
Նահապետի՝ անդրանիկը՝ հօր ոխ կըրէր՝ ի սրտին.
Բայց չունէր իւր՝ նպաստաւոր՝ զարմանազօծ նետ Հայկայ,
Այն զանձ անգին՝ խարդաւանօք՝ կայր ի ձեռին Արթակայ:



ՌԱԹԵԱՒԱՆԱՅԻՆ ԱՐՏԱՍԱՆ ԵՒ ԱԶԱՑԻ ՉԱՒՈՍԸ

Խելապատ և՝ երկու ընկերք՝ անկան ի մէջ՝ քաղաքի,
Խանդաւիրէն հալածվելով՝ եղեն քարոզք՝ մեր ազգի.
Ամենատէրք՝ իմացվեցան՝ Սրբակի պոծք՝ նենգութեան,
Հայոց ունք զօրք՝ միահաղոյն՝ ի տուր ի չէն ընթացան։

Խելապատը՝ վազեց, գնաց՝ դէպ Բագրեւանդ՝ աւանը,
Որ Հայ զարև՝ վաստակ քաջին՝ պահում էր սան՝ Զաւանը.
Գումեց նըման՝ մահ Զարեհի, գումեց զմահ Շամբիկի,
Գումեց ցաւօք՝ Հայկայ նեռի՝ յափշտակէն Սրբակի։

Հաւատարիմ քաջ Հայ զարև՝ վաստակ ասող, զօրապետ,
Բարւոք վարկաւ՝ մեկուսանալ, մինչ ընտրվի՝ նահապետ.
Աւտ. Զաւան՝ սանդիաց՝ մանուկ սան՝ և զօրուսին,
Ցանքոյն վայրի՝ ծածուկ յաչաց՝ պահեց ուրեք՝ զերկուսին։

Ա՛յս պատանութեան՝ մէջ ապահով էր չորսամեայ՝ մեր Զաւան,
Նըման զգայշ՝ պահում էր քաջ՝ վաստակ որպէս՝ բիբ ական.
Հաւատարիմ՝ իւր արբանեակք՝ ամեն համբաւ՝ թերում են.
Վաստակ ասենն՝ իմանում է՝ ինչ Հայաստան՝ անցնում են։

Պարէտի քաջ՝ անդրանիկը՝ պահին յաջորդ՝ ընտրվեց,
Սակայն Արբակ՝ նեռի ուժով՝ իւրոյ աւել՝ այժ տրվեց,
Ամիս բոլոր՝ մաքառեցան, Արբակ յաղթեց ժառանգին,
Պատերազմի՝ մէջ խողխողեց՝ նահապետի՝ անդրանկին։

Այնուհետև՝ ցրիւ ընկան՝ հակառակորդք՝ Արբակայ,
Արմաւիր իւր՝ դրունք բացեց՝ այնմ որ ունէր՝ նեռ Հայկայ,
Արբակ մնաւ՝ մայրաքաղաք, և առ զայրոյթ՝ իւր սրտին,
Հրամայեց՝ մատնել ի սուր՝ զտուն և սերունդ՝ Պարէտին։

Այս անողորմ՝ կոտորածէն՝ զերծաւ միայն՝ Զաւանը,
Որ ապահով՝ ծածուկ պահած՝ կայր Բագրեւանդ՝ աւանը.
Այն տեղ բերեց՝ կրկին տղին՝ քաջ Լայ զարև զօրավար.
Երբ Արբակայ՝ սուր յապեցաւ՝ արեան ուղխիւք՝ զովարար։

Պարէտի և՝ Շամրիկի մահ՝ երբ լսեցաւ՝ Աշտարակ.
Սարաքոս և Շահմար, Սինեթայ՝ խմբեցին զօրք՝ օժանդակ.
Եւ երբ Արբակ՝ քունակալեց, մարտ յարուցին՝ Ասորիք,
Սարաքոսի՝ տասեր ահիւ՝ պաշարեց մեր՝ հայրենիք։

Վաթսարեցյան՝ զօրք Արբակայ, Սարաքոս շատ՝ տեղ յաղթեց,
Պարէտի քաջ՝ զօրավարաց՝ երիւստէք ահ պաշարեց.
Խորհուրդ դրին՝ որ Լայ զարև՝ քաջ Վստամին զբտանեն,
Եւ Ասորւոց՝ բուռն զօրութեան՝ ընդդիմամարտ՝ կանգնեցնեն։

Քարոզ կարգաց՝ Հայաստանում՝ որ Լայ զարև Վստամը,
Թող ի յայտ գայ՝ պահուած տեղէն, այս է ծերոց՝ պատգամը.
Խեղաթարը՝ զբտաւ ներան՝ իւր Բագրեւանդ աւանում,
Իմաց արաւ՝ որ Հայաստան՝ փրկելու են՝ հրաւիրում։

Երկու վըտանգ՝ կայր առջևը, երկուսն էլ էր՝ ցաւագին,
Եթէ հանէր՝ նպաստ ծերոց, մեծ էր երկիւղ՝ Արբակին.
Իսկ թէ ճնայր՝ ի թաքստեան՝ Սարաքոսի՝ ասպատակք,
Ունին ջնջել՝ Հայաստանի՝ թէ հին, թէ նոր՝ յիշատակք։

Էլ խելապար՝ հանեց ներան՝ այս երկրիմի՝ վրատնզէն,
Բերեց նորա՝ թաքստեան վայրն՝ վին ազգի՝ ծերերէն.
Այս ազգասէր՝ այր մըտերիմ՝ տարաւ ներան՝ մէջ ծերոց.
Ծերք վաստին՝ աղերսելին՝ որ հետացնէ՝ Ասրոց։

Ասում՝ էին՝ մինք այրուձին՝ քեզ կը յանձնենք՝ պլխովին,
Դու զօրութեամբ՝ քաջ Հայերու՝ վանէ զաջոզ՝ թշնամին,
Ապա թէ ոչ՝ Սարաքոսը՝ առաջ գալով՝ առաւել,
Հայկայ գահը՝ կը յաջոզէ՝ ի վեր ի վայր՝ տապալել։

Հայրենասէր՝ հատատարիմ՝ Լայ զարև քաջ՝ վաստմը,
Արդէն պատրաստ՝ էր ընդունիլ՝ ծերակուտի՝ պատգամը.
Բայց խելապար՝ առաջ վազեց, ասաց. այդպէս՝ չէ բարւոք,
Հայաստանը՝ կը ընկղմի՝ անբաղդութեան՝ մէջ նորոզ։

Այրուձիոյ՝ մէջէն Սրբակ՝ կարէ շատերն՝ կաշառել.
Ինչպէս որ զին՝ կաշառել էր՝ Խանդամիրին՝ սպանել,
Երբ քաջ վաստմ՝ զօրօք Հայոց՝ Սարաքոսին՝ հետացնէ,
Սրբակ ներան՝ կաշառասէր՝ այրուձիով կը բռնէ։

Այլ լաւն այն է՝ որ Լայ զարև՝ պատգամաւոր՝ ի ծերոց,
Բռնակալի՝ աչքին ծածուկ՝ երթայ ի մէջ՝ Ասրոց.
Ցիշէ նոցա՝ պարէտի հայ, արքայորդոց՝ գերութիւն,
Եւ առ Շահմար, և առ Սինթայ՝ ծընողական՝ գրթութիւն։

Հաճոյ եղև՝ ծերակուտին։ Գընաց վաստմ՝ ի բանակ։
Այլ Սրբակին՝ դէտք և լրտեսք՝ իմացուցին՝ բովանդակ։
Նա վաստմայ՝ յետադարձի՝ շահիղք լոյոյ՝ գարանով,
Որ այն քաջին՝ ձանկ ձգելով, Ջաւան կորչի՝ իւր սրբով։

Լայ զարևի՝ գեսպանութիւն՝ ունեցան մեծ՝ արգասիք.
Նորա հրոջ՝ ազգս բանիւք՝ համոզվեց՝ Ասորիք.
Ասաց. Պարէտ՝ ձեր բարերար՝ ինձ է յանձնել՝ իւր զաւակ,
Ջաւան յաջորդ՝ նորա գահին, ժառանգ ազգին՝ բովանդակ։

Դուք մի խնդրէք՝ վըրէժ առեան՝ Պարէտի և՝ Շամրիվի,
Թոյլ տուէք արդ՝ մեր երկրին, որ՝ խաղաղութեան՝ մէջ ծաղկի.
Ըրբակ լինի՝ հոպաբարձուն, ինչ փոյթ է ձեզ՝ Ասորեայ.
Երբ ժառանգորդ՝ կը զարգանայ՝ կառնու հաշիւ՝ հայրենեաց։

Սարաքոս և՝ Շահմար դշխոյն՝ համբոյր տուին՝ վստամին,
Եւ Ասորոյ յաղթակիր զօրք՝ հեր գառաւէն՝ դուրս հանեն,
Արդէն բանակ՝ հեռանում էր՝ և վստամ յետ՝ էր գառնում,
Որ Ըրբակայ սուրհանդակը՝ հասաւ առ նա՝ Որմիում։

Պատգամաբերն՝ ասայ. վստամ, քեզ խնդրում է՝ Ըրբակը,
Որ հարսնախօս՝ երթաս խոյն՝ Սարաքոսի՝ բանակը,
Սինթայ դշխոյն՝ որ է այրի՝ յետ փեսային՝ Փառնակայ,
Համոզես որ՝ ասայ հաճութիւն՝ կոչիլ տիկին՝ տան Հայկայ։

Պատգամաւորն՝ շուտ յետ դարձաւ։ Մինչդեռ վստամ՝ խորհում էր,
Տեսաւ հեռուստ՝ որ խելապար՝ իր ընդ առաջ՝ վազում էր,
Ասայ. վստամ՝ մի հաւատար՝ սուրհանդակի՝ խօսքերին,
Նա լրտես էր, ոչ սուրհանդակ. Ըրբակ յայնկոյս՝ կայ լերին։

Փոխէ ձանփայդ՝ որ չը ընկնիս՝ դարանայեալ՝ լարերը,
Ահա առջեդ՝ կան բարձրացած՝ խոխոռունեայ՝ ասրերը,
Գրնա ծաղկոտն, այն տեղ չկայ՝ դարանամուտ՝ արբանեակ,
Քո ամուսին՝ Ջաւանի հետ՝ անդ է այսքան՝ ժամանակ։

Հաւատա իմ՝ ասայ բանին, որ այնքան է՝ անվրէպ,
Որքան ատուեր՝ խանդամիրի՝ հալածում է՝ վիս ատէպ.
Բայց կէս պարտուցս՝ հատուցել եմ, երկու ամ չեմ՝ մոլեկնիր,
Այս երկու ամ՝ մէկ այրի մէջ՝ հանգիստ կու տայ՝ խանդամիր։

Ասայ, վազեց՝ դէպ ի վարագ։ վստամ գարձաւ՝ ի ծաղկոտն։
Կին վստամայ՝ Ջաւան ի գիրկն՝ կայր գլխիբաց՝ և բոկոտն.
Ասայ, այսպէս՝ փախայ տանէս՝ երբ հասան ինձ՝ գահիճքը,
Ձը կարացին՝ ապաստանի՝ գառնալ մեզ մեր՝ գահլիճքը։

Խելագարը՝ նեղ տեղս հասաւ, ձեռքէս խրլեց՝ Զաւանին,
Ասաց, վազիր՝ և ինձ հասիր՝ որ չը մահանիս՝ խուժանին.
Նա վազում էր, ես յետևէն, մինչև հասանք՝ այս փապար.
Ասաց. կերթամ արդ առ Վստամ, դու Արբակէն՝ կորզեցար։

Կեցաւ այն տեղ՝ քաջ Լայ զարև, և զարդացոյց իւր սանին.
Նորա բոլոր՝ դաստակերտքը՝ ղոհ կընային՝ Զաւանին,
Բայց ազգասէր՝ մեր ծերունիք՝ չէին խընամք՝ պակսեցնում,
Մինչ Արբակ իւր՝ չար հալածանք՝ օրէ ցօր էր՝ յաւելցնում։

Արբակ լսեց՝ որ Վստամայ՝ միամօր դուստր՝ նորածին,
Որ օրհասի՝ կամօք եղև՝ սննդակից՝ Զաւանին,
Իւր ծընողաց՝ ի հայրենեաց՝ վըտարանդի՝ ընկնելով,
Մէկ քաղցրասիրտ՝ Հայու մօտ կայ՝ որք և անտէր՝ լինելով։

Հասոյց դահիճ՝ որ սպանէ, բայց Հայն արթուն՝ դանըվեց,
Տունն ու տեղը՝ թողեց անտէր ինքն աղջկան՝ փախցըրեց,
Շատ սար ու ձոր՝ շրջելէն յետ՝ հազիւ հասաւ՝ ի Նինուէ,
Եւ հիւրընկալ պաշտպանութիւն՝ խնդրեց Շահմար՝ դշխոյէ։

Առաւ դշխոյն՝ այն որբ աղջիկ, և պահպանեց իւր տանը,
Իսկ մարդասէր՝ Հայուն բայեց՝ իւր դարպաս՝ և սեղանը,
Նաև ծածուկ՝ խնաց տուեց՝ որպեկորոյս՝ Վստամին,
Որ երբ հընար՝ գանէ գալոյ, Նինուէ բերէ՝ Զաւանին։

Ճակատագիր՝ այսպէս չունէր՝ նորա համար՝ կարգադրած,
Վասն այն երկու՝ ամ Լայ զարև՝ ծաղկոտնում կայր՝ թաք կեցած,
Զարգանում էր՝ Զաւան մանուկ, սովրեց Հայկ-Նէրպ, Արամ-Նէրպ,
Սոխակի պէս՝ բեկբեկում էր՝ Անուշավան՝ քաղցրիկ Նրպ։

Հասկացել էր՝ որ զաւակ է՝ Պարէտի և Շամբիկին,
Իմանում էր՝ որ իւր գլխին՝ պատրաստ կայ տուր՝ Արբակին,
Բայց չէր ասում՝ թէ ես երբ որ՝ մեծանում ու, զարգանում,
Իմ հօր անուռ՝ պիտի սպրեմ, դէմ Արբակի՝ բռնանում։

Ասում էր ձեր՝ որդին կ'ինիմ, ձեր դուռտրը ինձ քոյր կասեմ,
Մինչև ի մահ ձեր մօտ կը ճնամ, զաւակի պէս՝ կը սիրեմ,
Երբ ձեր դուստրը՝ փեսայ դանէ, ես կը մընամ՝ ձեր տանը,
Կաշխատիմ որ՝ առատացնեմ՝ ձեր ապրուստի դարմանը։

Ասամ լսում՝ էր այս մանկան՝ սրտաճմլիկ խօսքերը,
Եւ ատէպ դէպ՝ յաղաւ Մասիս՝ էր ուղղում իւր՝ աչքերը,
Ո՞վ Քաջք Մասեայ՝ ասում էր նա, օրհնած է այս, լծէ դիպուած,
Որ Լայ զարև՝ լինի միակ՝ պաշտպան յուսոյն՝ Հայրենեաց։*

Որ օր ի ծունկ՝ կայի չոքած՝ հանդէպ անդրոյ՝ Արային,
Եւ արտասուօք՝ ի միտ բերում՝ մահ ազգասէր դիւցազնի,
Պարէտ, Շամրիկ՝ ինձ Լայ զարև՝ շընորհեցին՝ մականուն,
Եւ Բագրեւանդ՝ շընչակայիւք՝ կոչեցին իմ կալուածոյն,

Արդեօք յանցանք՝ համարեցայք՝ իմ և նոցա՝ գործերը,
Որ այսպէս վատ՝ վարձատրեցինք՝ հայրենասէր՝ անձերը,
Այն մեր ազգին՝ անզուգական՝ թէ նահապետ, թէ տիկին,
Ինչի՞ պիտի՝ զոհ մընային՝ խարդախ գաւոյ՝ ի ձանկին։

Մինչդեռ ասամ՝ խորհում էր այս, յանկարծ եկաւ խելագար,
Ասայ, ասամ՝ մեր երկու ամ՝ լըրացել է, իմացար,
Ես քո կընոջ՝ տէր կը լինիմ, և կը թաղեմ՝ երբ մեռնի,
Դու էլ նըրան՝ յոյս մի՛ դըներ՝ թէ կը տեսնես՝ կենդանի։

Իմացել է՝ Արքակ տեղըդ, մերձ է ահա՝ խումբ դահճաց,
Փախիր դէպ ի ծով Պոնտոսին՝ գուցէ հասնիս մէջ գամրաց,
Պարէտ, Շամրիկ յիսուն տարի՝ խընամք տարին Հայրենեաց,
Եօթն ամ պակաս՝ պիտի տևէ՝ ձեր երկուսի՝ կէտ չարեաց։

*Յոյս Հայրենեաց էր ինչն ծոցել Ջաւան։

Ջաւան, Ջաւան, Հայկ պարզևեց՝ քեզ՝ զազգասէր՝ Լայ զարև,
Որ նա պահէ՝ ազգի համար՝ քո քաղցրիկ կեանք և արև,
Քառասուն և երեք՝ ամք կան՝ ի մէջ ձերոյ՝ անջատման,
Այդքան տարի՝ պիտի ըմպէ՝ դառն մըրուր՝ Հայաստան:

Շատ կը քաշես՝ չար ու բարի, շատ բարեկամք՝ կը փորձես,
Շատ նեղութեանց՝ կը դիմանաս, շատ քաջութիւնք կը գործես,
Այլ խղճալի Հայաստանիդ՝ անդ կը ծագէ նոր արև,
Երբ դլտանես քո՝ բարերարին, պաշտպան դառնայ Լայ զարև:

ՎԵՐՋ

ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՄԱՀՀ ՊԱՐՔԻՑԻ

Ա.	Անկախութիւն Հայաստանեայց	3
Բ	Մահ Անուշաւանայ.	10
Գ.	Պարէտ ընդդէմ ի ճահճապետութիւն	17
Դ	Պարէտի յաղթանակ	24
Ե	Ազգասիրական գործք Պարէտի եւ Թամիրիկի	31
Զ	Պարէտ՝ Արարատ չեռնան քննել տուեց	38
Է	Վարք Թամիրիկ ոիկնոջ.	44
Ը	Թախիծք Թամիրիկի.	52
Թ	Հրաժեշտ Թամիրիկի եւ Պարէտի.	59
Ժ	Արշաւանք Պարէտի.	66
ԺԱ.	Պաշարումն Նինուէի	73
ԺԲ	Հայկայ ձեռի յաղթանակութիւն	80
ԺԳ	Առնամաճ ի Նինուէ	87
ԺԴ	Զարհուրանք Արբակայ	94
ԺԵ	Քանքարտուանք Թամիրիկի	102
ԺԶ	Տրտունջ Թամիրիկի՝ Հայկայ, Արամայ եւ Արայի օրինակօք.	115
ԺԷ	Թամիրիկ դարձուցանէ զԱրբակ ի բանակ	122
ԺԹ	Վեհանձնութիւն Պարէտի.	129
Ի	Պարէտ մտանէ յաղթանկաւ ի Նինուէ	136
ԻԱ.	Եյանէլ Պարէտի ի Նինուէէ.	143
ԻԲ	Դարձ եւ մահ Պարէտի	150
ԻԳ	Մահ Թամիրիկ ոիկնոջ	157
ԻԴ	Բռնակալէ Արբակ եւ ազատի Զաւան	164



15647-15650

2013

15647-15650

2013